Հավելված
ՀՀ կառավարության 2016 թ.
հուլիսի 29-ի նիստի N 29
արձանագրային որոշման

Ռ Ա Զ Մ Ա Վ Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 3
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ 5
ԳԾԱՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ 6
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 7
1. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ 9
1.1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 10
1.2 Տարածքային զարգացման նպատակը և սկզբունքները 10
1.3 Առկա իրավիճակը և խնդիրները 11
1.4 ՏԶ ժամանակակից քաղաքականության կարիքը և անհրաժեշտությունը քաղաքականության կարիքը 13
1.5 Տարածքային զարգացման բարեփոխումների գործողությունների պլան 14
2. ՆԵՐԿԱՅԻՍ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 15
2.1 Մակրոտնտեսական վիճակը 15
2.2 Տարածքային ընդհանուր անհամաչափությունների համեմատություն 16
2.3 Մարդկային զարգացում և սոցիալական ոլորտ 17
2.4 Բնապահպանական կայունություն 18
2.5 Ժողովրդագրություն 19
2.6 Տրանսպորտի հասանելիություն 22
2.7 Մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունք 24
2.8 Առևտուր 25
2.9 Գյուղատնտեսական արտադրանք 27
2.10 Արդյունաբերական արտադրանք 29
2.11 Ծառայությունների ոլորտ 31
2.12 Տնտեսական գործունեության ինտենսիվություն, զբաղվածություն և եկամուտներ 33
2.13 Աղքատություն, կյանքի պայմաններ, հանրային ծառայությունների հասանելիություն 37
2.14 Տարածքային զարգացման թույլ և ուժեղ կողմեր, հնարավորություններ և վտանգներ 40
2.15 Տեղական հեռանկարներ 42
2.16 Տեղական տարբերակումներ 42
2.17 Տեղական ֆինանսներ 43
2.18 Ամփոփագիր 46
3. ՀԱՐԱԿԻՑ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ 49
3.1 Ազգային քաղաքականություն, ծրագրեր և գործիքներ 49
3.2 Նվիրատուների աջակցությունը տարածքային զարգացմանը 57
3.3 Համակարգում և միավորում 58
3.4 Ամփոփագիր 58
4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ 60
4.1 Տարածքային զարգացման միջազգային միտումները 61
4.2 Հայաստանում տարածքային զարգացմանն առնչվող քաղաքականության համատեքստը 66
4.3 Միջազգային համատեքստ 66
4.4 Ազգային համատեքստ 67
4.5 Ամփոփում 68
5. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ 70
5.1 Առաքելություն 70
5.2 Տեսլական և ընդհանուր նպատակներ 70
5.3 Սկզբունքներ 71
5.4 Թեմատիկ նպատակներ 72
5.5 Հորիզոնական նպատակներ 73
5.6 Ուղղություններ 74
5.7 Գործառնական եղանակներ. տարածքային զարգացման ծրագրեր 75
5.8 Ամփոփագիր 76
6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ 77
6.1 Եվրոպական միության կառուցվածքային ֆինանսական միջոցները՝ որպես հենքային մոդել 77
6.2 ՏԶ ֆինանսավորման մեխանիզմ 78
6.3 Իրավական դաշտ 78
6.4 Կառավարման կառույցներ և ինստիտուցիոնալ կառուցվածք 79

6.5 Ֆինանսավորման աղբյուրներ և մակարդակներ 80
6.6 Ֆինանսական միջոցների բաշխում 80
6.7 Մոնիտորինգ և գնահատում 82
6.8 Վերջերս իրականացված և նախատեսվող բարեփոխումներ 82
6.9 Կենտրոնացման, ծրագրավորման, գործընկերության և կառուցողականության սկզբունքները ...83
6.10 Արդյունավորություն, արդյունավետություն, կայունություն, ազդեցություն 84
6.11 Հայաստանում տարածքային զարգացման համար անհրաժեշտ և առկա ֆինանսական միջոցների գնահատում 86
6.12 Ամփոփում 86
7. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՅԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 88
7.1 Տարածքային զարգացման քաղաքականության մարմին 88
7.2 Աջակցության ազգային համակարգող 89
7.3 Համակարգող հանձնաժողովի կազմը և գործառույթները..... 90
7.4 Իրականացնող կառույցներ 90
7.5 Այլ դերակատարներ 92
7.6 Թիրախային ինստիտուցիոնալ միջոցառումներ.....92
7.7 Ամփոփագիր..... 93
8. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ 94

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ և ՀԵՆԱՆԻՇԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԶՀ-Ն և ԱՅԼ ԸՆՏՐՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 2014Թ.. 17
ԱՂՅՈՒՍԱԿ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ և ՀԵՆԱՆԻՇԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԹԻՎԸ 2014Թ. 19
ԱՂՅՈՒՍԱԿ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 2001 և 2011 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ (ԱՆՁ) 20
ԱՂՅՈՒՍԱԿ 4. ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ և ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ ՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ, 2015Թ. 23
ԱՂՅՈՒՍԱԿ 5. ՄԱՐԶԵՐԻՑ ՄԵԿ ՇՆՉԻ ՀԱՇՎՈՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ 2008 – 2014ԹԹ. (ՀՀ ԴՐԱՄ).....26
ԱՂՅՈՒՍԱԿ 6. ՄԵԿ ՇՆՉԻ ՀԱՇՎՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ԱՆՓՈՓՈԽ ԳՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ (2009), 2009-2014ԹԹ. (ՀՀ ԴՐԱՄ) 28
ԱՂՅՈՒՍԱԿ 7. ՄԵԿ ՇՆՉԻ ՀԱՇՎՈՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԾԱՎԱԼԸ, ԱՆՓՈՓՈԽ ԳՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ (2009Թ.), 2009-2014ԹԹ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ (ՀՀ ԴՐԱՄ).....29
ԱՂՅՈՒՍԱԿ 8. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ՄԵԿ ՇՆՉԻ ՀԱՇՎՈՎ ԱՆՓՈՓՈԽ ԳՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (2009Թ.), 2009-2014ԹԹ. (ՀՀ ԴՐԱՄ).....32
ԱՂՅՈՒՍԱԿ 9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒԹԿՀՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ..... 40
ԱՂՅՈՒՍԱԿ 10. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ՈՒ ԾԱԽՍԵՐԸ, 2009-2014ԹԹ. (ՀՀ ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ)) 45
ԱՂՅՈՒՍԱԿ 11. ՏԶ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊՈՏԵՆՑԻԱԼ ՇՐՋԱՆԱԿԸ 49
ԱՂՅՈՒՍԱԿ 12. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ 60
ԱՂՅՈՒՍԱԿ 13. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 73

ԱՂՅՈՒՍԱԿ 14. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՏԶՀ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԸ.....79
ԱՂՅՈՒՍԱԿ 15. ԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ, ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ, ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ և ՀԱՎԵԼՅԱԼՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ 83
ԱՂՅՈՒՍԱԿ 16. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ, ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՈՇ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ 84
ԱՂՅՈՒՍԱԿ 17. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.....93
ԱՂՅՈՒՍԱԿ 18. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ.....96

ԳԾԱՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳԾԱՆԿԱՐ 1. ԻՐԱԿԱՆ ՀՆԱ-Ի ԱՃԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ և ՀԵՆԱՆԻՇԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ S/S (%), 2008-2015ԹԹ.....15
ԳԾԱՆԿԱՐ 2. ՄԱՐԶԱՅԻՆ ՀՆԱ-Ի ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԸ NUTS 3 ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ (ԱԶԳԱՅԻՆ ՄԻՋԻՆԻ %), 2009-2011ԹԹ.....17
ԳԾԱՆԿԱՐ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՆՑՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 1990-2015ԹԹ. (ՀԱԶԱՐ).....18
ԳԾԱՆԿԱՐ 4. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2001 – 2011ԹԹ. ԸՆԹԱՑՔՈՒՄ (2001 ԱՐԺԵՔԸ =100%)..... 21
ԳԾԱՆԿԱՐ 5. ՄԱՐԶԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ (ՄԱՐԴ/1ԿՄ2), 2014Թ..... 21
ԳԾԱՆԿԱՐ 6. ՄԵԿ ՇՆՉԻ ՀԱՇՎՈՎ ՀՆԱ-Ն՝ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԵՐԿՐԻ ՄԻՋԻՆԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ, 2009 – 2012ԹԹ.....24
ԳԾԱՆԿԱՐ 7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱ-Ի ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՍՆԱԲԱԺԻՆՆԵՐԸ 2012Թ.....25
ԳԾԱՆԿԱՐ 8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ, 2008 – 2014ԹԹ. (ՀՀ ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ) 25
ԳԾԱՆԿԱՐ 9. ՄԱՐԶԵՐԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ՄԵԿ ՇՆՉԻ ՀԱՇՎՈՎ 2008 – 2014ԹԹ., (ՀՀ ԴՐԱՄ), ԻՆՉՊԵՍ ՆԱԵ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԱՃԸ 2008-2014ԹԹ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ 27
ԳԾԱՆԿԱՐ 10. ՄԵԿ ՇՆՉԻ ՀԱՇՎՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ԱՆՓՈՓՈԽ ԳՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ, (2009Թ.), ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԻՆԻ % ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ, 2009-2014ԹԹ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ (ՀՀ ԴՐԱՄ).....29
ԳԾԱՆԿԱՐ 11. ՄԵԿ ՇՆՉԻ ՀԱՇՎՈՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԾԱՎԱԼԸ, ԱՆՓՈՓՈԽ ԳՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ (2009Թ.), ԱԶԳԱՅԻՆ ՄԻՋԻՆԻ % ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ, 2009 և 2014ԹԹ. 31
ԳԾԱՆԿԱՐ 12. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ ՄԵԿ ՇՆՉԻ ՀԱՇՎՈՎ, ԱՆՓՈՓՈԽ ԳՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (2009Թ.), ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՋԻՆԻ %-ՈՎ, 2009 և 2014ԹԹ. 33
ԳԾԱՆԿԱՐ 13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ, 2014Թ. (%).....34
ԳԾԱՆԿԱՐ 14. ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ, 2014Թ. (%).....34
ԳԾԱՆԿԱՐ 15. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒ ԸՍՏ ՍԵՌԵՐԻ (%), 2014Թ. 35
ԳԾԱՆԿԱՐ 16. ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ, ԸՆԴՀԱՆՈՒՐ և ԸՍՏ ՍԵՌԵՐԻ (%), 2014Թ. 36
ԳԾԱՆԿԱՐ 17. ՉԳՐԱՆՑՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԶԵՐՈՒՄ, 2014Թ. (ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ %) 36
ԳԾԱՆԿԱՐ 18. ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԻՆ ԵԿԱՄՈՒՏԸ, ԱԶԳԱՅԻՆ ՄԻՋԻՆԻ %-ՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ, 2013Թ. 37

ԳԾԱՆԿԱՐ 19. ԾԱՅՐԱՀԵՂ ԱՂՔԱՏՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ (%), 2008 և 2013ԹԹ. 38
ԳԾԱՆԿԱՐ 20. ԱՂՔԱՏՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ (%), 2013Թ. ... 38
ԳԾԱՆԿԱՐ 21. ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ, 2008Թ. 39
ԳԾԱՆԿԱՐ 22. ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ, 2014Թ. 39
ԳԾԱՆԿԱՐ 23. ԱՌՈՂՋԱՊԱՀԱՊԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ, 2014Թ. 39
ԳԾԱՆԿԱՐ 24. ՏԱՐԲԵՐ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՇԱԿԵՐՏ-ՈՒՍՈՒՑԻՉ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ, 2014Թ. 40
ԳԾԱՆԿԱՐ 25. ՈՉ ՖԻՍԿԱԼ ԳՈՒՅՔԻ ԾԱԽՍԵՐ, 2009-2014ԹԹ. (ՀՀ ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ) 46
ԳԾԱՆԿԱՐ 26. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ և ԾԱԽՍԵՐԸ, 2014Թ. 46

_Toc445491948

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԳԶՀ	Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ
ԳՀ	Գնողունակության համարժեքություն
ԳՄՀ	Գլոբալ մրցունակության համաթիվ
ԳՄՀԸ	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԿԶԾ	Կայուն զարգացման ծրագիր
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԶ	Հետազոտություն և զարգացում
ՀԶՀ	Համայնքային զարգացման հիմնադրամ
ՀԶՌ	Հայաստանի զարգացման ռազմավարություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ դրամ	Հայաստանի Հանրապետության դրամ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՍՆՀ	Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ՄԱԿ ԶԾ	Միացյալ Ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՄԳ	Մոնիտորինգ և գնահատում
ՄԶՀ	Մարդկային զարգացման համաթիվ
ՄՖԿ	Միջազգային ֆինանսական կառույց

ՏԶ	Տարածքային զարգացում
ՏԶԳԾ	Տարածքային զարգացման գործառնական ծրագիր
ՏԶԳՊ	Տարածքային զարգացման գործողությունների պլան
ՏԶՀ	Տարածքային զարգացման հիմնադրամ / Տարածքային զարգացման ֆինանսավորման մեխանիզմ
ՏԶՓԾ	Տարածքային զարգացման փորձարարական ծրագիր
ՏԶՖ	Տարածքային զարգացման ֆինանսավորում
ՏԿԶՆ	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՀՏ	Տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաներ
ՈՒԹԿՀՎ	Ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և վտանգներ
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

1. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

1.1 Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ Կառավարություն) ճանաչել է տարածքային զարգացման կարևորությունը և այս ուղղությամբ շարունակական երկխոսություն է վարել ԵՄ-ի հետ՝ 2000թ.-ից սկսած: 2003թ.-ից սկսած, տնտեսական զարգացումն ու աշխատատեղերի ստեղծումն առաջնահերթ են համարվել մի շարք գերակա փաստաթղթերով, օրինակ՝ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր (ԱՀՌԾ)[1], դրան հաջորդած Կայուն զարգացման ծրագրով[2] և Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր (ՀԶՌԾ)[3]: Ներկայումս առաջնահերթ նպատակներից է ծրագրերն ու նախագծերն իրականացնել զարգացման փոխհամաձայնեցված ազգային առաջնահերթություններին համապատասխան, որը կհանգեցնի որակյալ ու հարատև արդյունքների:

Հայաստանն այսօր բնութագրվում է որպես զարգացման մարտահրավերներով, աշխարհագրաքաղաքական սահմանափակումներով, էներգիայի արտաքին աղբյուրներից ու շուկաներից կախում ունեցող, միջինից ցածր եկամուտ ունեցող երկիր: 2008թ.-ի համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքով տեղի ունեցած բացասական գործընթացները հանգեցրել են աղքատության ու գործազրկության մակարդակների զգալի բարձրացմանը և խորացրել հասարակության խոցելի խմբերի մարգինալացումը: Արտագաղթն ու փոխանցումներն արտասահմանից միայն մասամբ են կարողանում մեղմել ստեղծված իրավիճակը:

Կառավարության ներկայիս դիրքորոշումը տարածքային զարգացման վերաբերյալ ներկայացված է Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հայեցակարգում, որն ընդունվել է Կառավարության կողմից 2011թ.-ի հունիսի 30-ի նիստի N 25 արձանագրության 38-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշմամբ: Տարածքային զարգացման հայեցակարգն ընդգրկում է համաձայնեցված և առաջնահերթություն հանդիսացող տարածքային զարգացումը, սահմանում կայուն տնտեսական զարգացման մոտեցումները՝ պահանջելով բոլոր մարզերից (վարչատարածքային միավորներից) ներկայացնել տարածքային զարգացման գործողությունների պլաններ: Տարածքային զարգացման հայեցակարգի հիմնական նպատակներն են տարածքային տնտեսությունների և գյուղերի բնակչության եկամտի աղբյուրների դիվերսիֆիկացիան, ձեռներեցության խթանումը, կենսապայմանների բարելավումն ու բարեկեցությունը, ինչպես նաև զբաղվածության մակարդակի բարձրացումը, որոնք պետք է իրականացվեն Հայաստանի տարածքային զարգացումն ապահովող ծրագրերի միջոցով: Մասնավորապես, տարածքային զարգացման հայեցակարգն ուղղված է տարածքների միջև զարգացման անհամաչափությունների հարթեցմանը և ազգային, մարզային ու տեղական իշխանությունների համար տեղերում կարողությունների ստեղծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, միաժամանակ, հնարավորինս նվազեցնելով ծրագրերի անհարկի կրկնություններն ու համընկնումները, կատարված աշխատանքի որակի բարձրացմանը, մարզերում կայուն զարգացման ապահովմանը, որոշումների կայացման գործընթացների ապակենտրոնացմանը և համակցված մոտեցումների կիրառմանը տարածքային ու տեղական զարգացումներում: Հաշվի առնելով աշխատատեղերի ստեղծման կարճաժամկետ և երկարաժամկետ ներուժը, ինչպես նաև որակյալ տնտեսական աճի ապահովման ուղղությամբ արվող ներդրումները՝ ՀԶՌ-ի առաջնային ոլորտներն ու քաղաքականության ուղղություններն ընդգրկեցին՝ արդյունաբերության և արտահանման խթանումը, զբոսաշրջության զարգացումը, տեղեկատվական տեխնոլոգիաները, գյուղատնտեսության և գյուղական տարածքների զարգացումը և աջակցությունը ՓՄՁ-ներին ու սկսնակ ձեռնարկություններին: Յուրաքանչյուր մարզ ունի զարգացման պլան, որում առանձնացվում են հիմնական համախառն ծախսային ուղղությունները, որոնց մեծ մասը վերաբերում է հանրային հատվածին, սոցիալական ապահովությանն ու բարեկեցությանը, իսկ առավել համեստ մասնաբաժինը՝ ՓՄՁ-ներին տրամադրվող աջակցությանն ու զբոսաշրջությանը: Այդ պլանները մշակվում են մարզերի զարգացման խորհուրդների կողմից ու տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր ոլորտի և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) ներկայացուցիչների մասնակցությամբ:

Պետք է նշել, որ Տարածքային զարգացման հայեցակարգի հիմնական նպատակները համընկնում են Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարության հիմնական գերակայություններին՝ զբաղվածության ընդլայնում, մարդկային կապիտալի զարգացում, սոցիալական ապահովության համակարգի բարելավում և պետական

կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացում, որոնք իրենց հերթին նաև համահունչ են ԵՄ 2020թ. ռազմավարության թեմատիկ նպատակներին:

Քաղաքականության տեսանկյունից հիմնական մարտահրավերներից է տարածքային զարգացման համակողմանի ռազմավարության մշակումն ու իրականացումը և Տարածքային զարգացման գործողությունների պլանի (ՏԶԳՊ) առաջադրումը, որի մեջ կարտացոլվեն այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու և Հայաստանի մարզերի միջև առկա անհամաչափությունները մեղմելու համար: Բացի այդ, անհրաժեշտ է համակողմանիորեն համապատասխանեցնել տարբեր նախարարությունների՝ տարածքային զարգացմանն առնչվող քաղաքականությունները, որոնք առաջին հերթին վերաբերում են գյուղատնտեսության ու գյուղական տարածքների զարգացմանը, տեղական ֆինանսական միջոցների կառավարմանը, տեղական ենթակառուցվածքների, տնտեսական զարգացման, զբաղվածության և մասնագիտական կրթության ոլորտներին: Միջնաժամկետ հատվածում, տարածական ու ոլորտային հեռանկարներով հանդերձ, միայն համակարգված միջամտությունը կարող է հանգեցնել տարածքների սոցիալ-տնտեսական իրական և հարատև զարգացմանը:

Ապացույցների վրա հիմնված և արդյունքների վրա կենտրոնացող տարածքային զարգացման քաղաքականության մշակման և առաջընթացի անխափան չափման նպատակով՝ անհրաժեշտ է ունենալ մշտադիտարկման ու գնահատման ցուցանիշների հետևողական կազմ: Հայաստանի դեպքում, մինչ այս պահը գրանցված խնդիրներից է տարածքային մակարդակում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի պաշտոնական՝ ԱՎԾ-ի կողմից հրապարակվող ցուցանիշների բացակայությունը: Հետևաբար, անհրաժեշտ է հզորացնել Ազգային վիճակագրական ծառայությունը, որպեսզի վերջինս կարողանա վստահելի տվյալներ տրամադրել տարածքային անհամաչափությունների և տարածքային զարգացման քաղաքականության առաջադիմության չափման հիմնական ցուցանիշների վերաբերյալ:

Ամփոփելով վերոգրյալը նշենք, որ այս փաստաթուղթը՝ Հայաստանի տարածքային զարգացման 2016-2025թթ. ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն), Հայաստանում տարածքային զարգացման բոլոր ուղղությունները միավորում և հստակ ճանապարհային քարտեզ է ստեղծում տարածքային զարգացման քաղաքականության համար: ԵՄ խորհրդատվական աջակցության շնորհիվ Ռազմավարությունը կարողանում է արտացոլել ոչ միայն ԵՄ անդամ, այլև այն երկրների ունեցած փորձը, որոնք մոտարկում են իրենց քաղաքականությունն ու գործելակերպը ամուր հիմքերի վրա գտնվող ԵՄ ինտեգրման քաղաքականությանը: Այս առումով՝ կարևորվում է փաստաթղթում ներկայացված Ալբանիայի, Խորվաթիայի, Վրաստանի և ՆՀՀ Մակեդոնիայի փորձն ու առաջընթացը, քանի որ նշված երկրների և Հայաստանի միջև կան բազմաթիվ կառուցվածքային նմանություններ:

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Այն տեսլականը, որ Հայաստանը կակտիվացնի աճը, կապահովի համընթացություն ու կայունություն բոլոր մարզերում, բավարար հենք է ստեղծում հետևյալ ռազմավարական նպատակների իրականացման համար.

- Բոլոր մարզերում մրցունակության բարձրացում՝ հիմք ընդունելով վերջիններիս ներքին պոտենցիալը, թույլ տալով առավել ընդարձակ ինտեգրումը ազգային ու միջազգային տնտեսությունների հետ:
- Տարածքներում համաչափության բարձր մակարդակի ապահովում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենաթույլ զարգացած տարածքների ու սահմանամերձ համայնքների, ինչպես նաև ռեսուրսների կայուն օգտագործման վրա:
- Տարածքային զարգացման քաղաքականության ու գործելակերպերի բարելավում զարգացման պլանավորման ու իրականացման գործընթացներում՝ տարածքային ու տեղական դերակատարների առավել ակտիվ մասնակցության ապահովման միջոցով:

Վերոնշյալ ռազմավարական նպատակների համար հարկավոր է ապահովել հետևյալ ռազմավարական չափորոշիչները.

2017թ.-ին ՀՀ-ն կունենա տարածքային զարգացման քաղաքականության իրականացման մեկ ընդհանուր Տարածքային զարգացման գործառնական ծրագիր (ՏԶԳԾ), որը հիմք կհանդիսանա, ՏԿԶՆ բյուջետային ծրագրերի նախապատրաստման և տարածքային զարգացման նպատակներով,արտաքին աղբյուրներից բյուջետային աջակցության ստացման համար:

2025թ.-ի դրությամբ առանձին վերցված յուրաքանչյուր մարզում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կգերազանցի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջին հանրապետական ցուցանիշի 60 տոկոսը և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 70%-ից ցածր կգտնվի մարզերի բնակչության ոչ ավել քան 30%-ը :

2025թ.-ի դրությամբ բոլոր մարզերում միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների և ակտիվ ձեռնարկությունների թվաքանակը կաճի առնվազն 10 տոկոսով ՝ համեմատած 2014թ.-ի հետ:

Տարածքային զարգացումը Հայաստանում կկենտրոնանա մի շարք առաջնահերթությունների վրա, որոնք են՝ քաղաքային զարգացման բևեռների հիմնում, տեղական ու տարածքային տրանսպորտային ենթակառուցվածքի բարելավում, տեղական ու տարածքային մակարդակներում բիզնես միջավայրի բարելավում, ներդրումներ մարդկային կապիտալում և սոցիալական ենթակառուցվածքում, զբոսաշրջության խթանում, ինչպես նաև տարածքային զարգացման կառավարման կարողությունների ամրապնդում: Նշված նպատակներին զուգահեռ կսահմանվեն նաև հորիզոնական նպատակներ, ինչպես օրինակ՝ հավասարությունը և խտրականության բացառումը, շրջակա միջավայրի պահպանությունն ու էներգաարդյունավետությունը, տեղեկատվական հասարակության ստեղծումը և մրցակցության պաշտպանությունը:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանում տարածքային անհամաչափությունները զգալի են: Ցուցանիշների մեծ մասը վկայում են արմատացած և երբեմն տարածքային ծայրահեղ անհամաչափությունների մասին՝ ժողովրդագրական միտումների (ցածր բնական աճ, դեպի Երևան կամ արտասահման աշխատանքային արտագաղթ, բնակչության ծերացում և այլն), ՀՆԱ-ի բաշխվածության 2012 թվականի գնահատականներով (բնակչության մինչև 46%-ը յոթ մարզերում մեկ շնչի հաշվով երկրի ՀՆԱ-ի 70%-ից ցածր է), գյուղատնտեսական, արդյունաբերական արտադրության և արտադրողականության, ծառայությունների, արտահանման և ներմուծման ծավալների տարբերությունների և այլ պատճառներով: Այս ամենին գումարվում է տնտեսապես ակտիվ բնակչության տարբեր մակարդակների առկայությունը, գործազրկությունը և ոչ պաշտոնական զբաղվածության մակարդակը: Տնտեսական առումով Երևանի (մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և եկամուտների միջին մակարդակից բարձր) և բոլոր մարզերի, ինչպես նաև քաղաքների և գյուղերի միջև ակնհայտ անհամաչափություններ կան: Օրինակ՝ թեև Սյունիքի մարզում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը համեմատաբար բարձր է, սակայն եկամտի մակարդակն այնպիսին է, ինչպես այլ մարզերում:

Աղքատ բնակչությունը Հայաստանում 2014 թվականին կազմել է 30%: Ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Շիրակի, Կոտայքի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում: Ծայրահեղ աղքատների ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են Շիրակի, Լոռու, Կոտայքի,Արմավիրի և Տավուշի մարզերում:

Զգալի տարբերություններ կան նաև հանրային ծառայությունների հասանելիության տեսանկյունից, մասնավորապես՝ առողջապահության և կրթության բնագավառներում, ինչը բացասաբար է ազդում մարզերի բնակչության բարեկեցության վրա: Նշանակալի կառուցվածքային տարբերություններ կան նաև տեղական մակարդակում՝ Երևանի և այլ տարածքների, քաղաքային ու գյուղական բնակավայրերի, բարձրադիր ու ցածրադիր գոտիներում, ինչպես նաև սահմաններին (մասնավորապես հակամարտության գոտուն) մոտ ու հեռու գտնվող տարածքների միջև: Ֆունկցիոնալ և ֆինանսատնտեսական չափազանց սահմանափակ շրջանակ ունեցող ապակենտրոնացումը (պետության լայն ներգրավվածությունը և բյուջետային ազդեցությունը) համառորեն հետ են պահում համայնքներին տեղական զարգացման քաղաքականության իրականացումից:

Հայաստանը բնութագրվում է տնտեսական գործունեության խիստ կենտրոնացմամբ մայրաքաղաքում և դրա հարևանությամբ (երկրի բնակչության գրեթե կեսը և երկրի ՀՆԱ-ի կեսից ավելին) նման երկրների (այսուհետ՝ հենանիշային երկրներ)՝ Ալբանիայի, Խորվաթիայի, Վրաստանի և ՆՀՀ Մակեդոնիայի հետ համեմատած: Հայաստանի հարաբերական մրցունակությունը համեմատելի է նմանատիպ երկրների հետ, թեև մի շարք ուղղություններում զիջում է Խորվաթիային, Վրաստանին և ՆՀՀ Մակեդոնիային:

Հայաստանի տնտեսությունը զգայուն է արտաքին ցնցումների նկատմամբ: Հայաստանի թույլ դիմադրությունը նշված ցնցումներին համեմատաբար թույլ դիվերսիֆիկացված տնտեսական կառույցների, սահմանափակ արտաքին առևտրի ծավալների ու ներդրումային կապերի հետևանք է:

Հենանիշային երկրների հետ համեմատած՝ Հայաստանի մարզերում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը ցածր է և ունի թույլ տատանումներ: Այս դրական միտումը հնարավոր է պահպանել Երևանից դուրս գտնվող տնտեսությունների ակտիվացման միջոցով:

Պետք է նշել, որ Հայաստանը արդյունավետորեն իրականացնում է բնապահպանական կայունության քաղաքականությունը՝ ապահովելով հարուստ կենսաբազմազանություն, համեմատաբար հավասարակշռված գյուղատնտեսություն և անտառային առողջ տնտեսություն, սակայն վերականգնվող էներգետիկայի ոլորտում ու օդի որակի ապահովման ուղղությամբ դեռևս պահանջվում են լրացուցիչ ներդրումներ:

Հայաստանին անհրաժեշտ են տարածքային կենտրոնացմամբ օժտված տեղայնացված զարգացման քաղաքականություններ և ծրագրեր: Տարածքային զարգացման հիմնաքարեր կարող են համարվել հետևյալ երկու ուղղությունները՝ տարածքների ընդհանուր մրցունակության բարձրացումը և տնտեսական ու սոցիալական անհամաչափությունների նվազեցումը՝ մինչև ընդունելի մակարդակ: Մրցունակության և զբաղվածության խթանումը երկրի ոչ գյուղատնտեսական ոլորտներում անհրաժեշտ քայլ է, որի արդյունքում մարզերը կկարողանան տեղ գտնել ժամանակակից ներքին ու արտաքին շուկաներում, կապահովեն ավելի մեծ եկամուտներ բնակչության համար և կֆինանսավորեն հանրությանը տրամադրվող ծառայությունների ծավալների աճը՝ այդպիսով մեղմելով բարեկեցության առումով դրսևորվող անհամաչափությունները: Միջամտությունները պետք է կենտրոնանան Երևանից դուրս արդյունաբերության ու ծառայությունների ոլորտների զարգացման, գյուղատնտեսական արտադրողականության բարձրացման վրա: Նախընտրելի բազմակենտրոն զարգացմանը պետք է օգնել տարածքային զարգացման բևեռները հատկորոշելով ու զարգացումը խթանելով, ինչպես նաև՝ տարածքային նախընտրելի մասնագիտական ուղղությունները ստեղծելով:

Հայաստանը պետք է փորձի կենտրոնացնել տարածքային զարգացման քաղաքականությունը բոլոր մարզերում՝ մրցունակությունը զարգացնելով և տարածքներում աճի ապահովման կենտրոններին աջակցելով, որը հնարավորություն կտա դրական հակակշիռ ստեղծել Երևանի գերակայությանը: Զարգացումից հետ մնացած մարզերը մարգինալացումից դուրս բերելը պետք է հանդիսանա առաջնահերթություններից մեկը: Այս ջանքերը պետք է առաջին հերթին կենտրոնանան մարդկային կապիտալի զարգացմանն ուղղված ներդրումների վրա՝ հաշվի առնելով կրթության, ձեռներեցության, նորարարության ու գենդերային հավասարության ապահովման մոտեցումները: Կարելի է քաղել բազմաթիվ (տնտեսական ու բնապահպանական) օգուտներ նաև վերականգնվող էներգետիկայի և զբոսաշրջության բնագավառումներում կատարվող ներդրումներից:

ՏԶ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Տարածքային զարգացման ժամանակակից քաղաքականությունն ուղղված է մրցունակության և կառուցողականության բարձրացմանը՝ տարածքային կառավարման մոտեցումների իրականացմամբ և մարդկային կապիտալի, նորարարության, ներառման ու ենթակառուցվածքի ինտեգրմամբ: Նման ինտեգրված և տեղայնացված մոտեցումներն անհրաժեշտ են Հայաստանին:

Արդյունաբերության և արտահանման խթանումը, զբոսաշրջությունը և ՏՀՏ ոլորտը, գյուղատնտեսության ու գյուղական տարածքների արդիականացումը, սննդի արդյունաբերությունը և ՓՄՁ-ների ստեղծումը հանդիսանում են ՀԶՌ-ի առաջնային նպատակները և կարող են մեղմել տարածքային անհամաչափությունները: Հայաստանի մարզերը տուժում են ավանդական գյուղատնտեսությունից մեծ կախվածության և տնտեսության թույլ դիվերսիֆիկացիայի պատճառով:

Տարածքային էական անհամաչափությունները հատկանշում են շուկայական տնտեսության մրցակցային ճնշումներին դիմակայելու անկարողությունը, առաջացնում մարդկային կապիտալի ոչ արդյունավետ օգտագործում: Երկիրն, ընդհանուր առմամբ, կարիք ունի առավել մրցունակ դառնալու՝ միաժամանակ բոլոր մարզերի միջև համաչափությունը պահպանելով:

Հաշվի առնելով զարգացած երկրների հարուստ փորձը և ժամանակակից միջազգային ու ազգային քաղաքականությունների մոտեցումները՝ Հայաստանում տարածքային զարգացման քաղաքականության կիրականացվի հիմք ընդունելով հետևյալ ընդհանուր մոտեցումները.

- Համապարփակ տարածքային քաղաքականությունների և ծրագրերի իրականացման առաջնահերթություն, որոնք որպես թիրախ կդիտարկեն առավել ծավալուն ու ագրեգացված

(առնվազն միջհամայնքային) սոցիալ-տնտեսական միավորներ: Հաշվի առնելով, որ տարածքային մրցունակության ու հարակցման վրա ազդում են բազմաթիվ գործոններ ու ոլորտներ, անհրաժեշտ է մշակել միջոլորտային բնույթի միջամտություններ, որոնք կընդգրկեն մարդկային կապիտալը, նորարարությունը, մարզերի ներգրավումը և ենթակառուցվածքները ու հաշվի կառնեն տարածքային տեսանկյունից ներհատուկ ակտիվներն ու կարիքները: Տարածքային զարգացման ծրագրերը պետք է արդյունավետ համակարգվեն համապատասխան գերատեսչությունների կողմից:

- Բոլոր մարզերի ներգրավում՝ զարգացման ազգային նպատակների իրականացման գործում: Վերջիններս նշված են Ռազմավարության մեջ և արտացոլում են բնակչությանը տնտեսության մեջ ամբողջությամբ ինտեգրելու, կրթությունն ու նորարարությունը խթանելու և կայունություն ապահովելու կարիքները (երկարաժամկետ ռազմավարական նպատակներն ամրագրված են Եվրոպա 2020թ. ռազմավարությամբ):
- Համաչափության քաղաքականությունը կխարսխվի աճի խթանման ու աշխատատեղերի ստեղծմանն ուղղված ներդրումների իրականացման վրա: Հայաստանի մարզերին անհրաժեշտ են մեծ ջանքեր, որոնք ուղղված կլինեն տնտեսության դիվերսիֆիկացմանը ու ժամանակակից ոլորտների ամրապնդմանը, ինչը կապահովի տեղերում որակյալ աշխատատեղերի ավելի մեծ քանակ:
- Ֆունկցիոնալ և ֆինանսական ապակենտրոնացման ուղղությամբ ողջամիտ առաջընթացի ապահովում, ինչը կստեղծի տարածքային զարգացմանը նպաստող արդյունավետ միջավայր, որը հիմնված կլինի հետևյալ հիմնական սկզբունքների վրա՝ գործընկերություն, լիազորությունների պատվիրակում և գործառնական հետևողականություն:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Հայաստանում տարածքային զարգացման քաղաքականության առաջընթացը կախված է քաղաքականության նախագծման ընթացքում մի շարք հիմնաքարերի ընդգրկումից, ինչպես օրինակ՝ ռազմավարական պլանավորման հիմնադրումը մարզային մակարդակում, ՀՏԶՀ-ի ծրագրերի վերաթիրախավորումը սոցիալ-տնտեսական առաջնահերթությունների վրա և ՏԶ գործառնական առաջին ծրագրի նախագծումը: Ծրագիրը միավորելու է բոլոր այն գործիքները, որոնք կիրառվելու են Ռազմավարության շրջանակներում՝ 2017-2020թթ. ընթացքում: Կարողությունների ամրապնդումը պետք է ուղղորդի այս բարեփոխումների գործընթացը և ընդգրկի ներգրավված բոլոր կողմերին:

ՏԶ ֆինանսավորման մեխանիզմը պետք է ինտեգրվի պետական բյուջեի հիմունքներով, որում տարածքային զարգացմանը համապատասխան միջոցներ կհատկացվեն և կբաշխվեն մրցակցային մեխանիզմներով: Այս քայլերը թույլ կտան առաջիկայում ապահովել նվիրատուների ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից բյուջետային աջակցությունը:

Ի վերջո, տարածքային զարգացման քաղաքականությունը պետք է հիմնված լինի ապացույցների, համակողմանի մշտադիտարկման ու գնահատման համակարգերի վրա: Վերջիններս կստեղծվեն Ազգային վիճակագրական ծառայության և պետական այլ ռեգիստրների կողմից տրամադրված տվյալների հիման վրա:

2. ՆԵՐԿԱՅԻՍ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Տարածքային զարգացման իրավիճակը Հայաստանում վերլուծվում է արտաքին ու ներքին տեսանկյուններից՝ քաղաքականությունը դիտարկելով առավել լայն համատեքստում: Միջազգային հեռանկարները կարևոր հենանիշեր են ստեղծում նմանատիպ երկրների համար, իսկ տեղական հեռանկարներն ընդգրկում են ներքին անհամաչափություններին վերաբերող հարցերը: Վերլուծությունն ընդգրկում է Հայաստանի ամբողջ տարածքը՝ Երևանը և տասը մարզերը՝ խնդրո առարկա հարցերը դիտարկելով համեմատական մոտեցման համատեքստում:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Հայաստանի տնտեսությունը նշանակալի վերափոխումների է ենթարկվել անկախության հռչակումից հետո: Կայուն աճը, հավակնոտ բարեփոխումները, արտաքին միջոցների ներհոսքը և փոխանցումները ստեղծել են շուկայահեն տնտեսություն: Սակայն, համաշխարհային ֆինանսական

ճգնաժամի հետևանքով նախաճգնաժամային երկնիշ աճը վերածվեց շատ ավելի ցածր ցուցանիշի: Մասնավոր ոլորտի սպառման ծավալների և պետական ներդրումների կրճատումը տնտեսության անկման սուրհանդակներն էին: Ճգնաժամի ազդեցությունն աղքատության վրա նույնպես զգալի էր, քանի որ 2008 թվականին 27,6% գրանցված աղքատության մակարդակը աճեց և 2014 թվականին հասավ մինչև 30%-ի: Աղքատներին աջակցություն էր տրամադրվում թիրախային սոցիալական ապահովությամբ ու թոշակների բարձրացմամբ: Ակնկալվում է, որ տնտեսության աճին համընթաց կնվազի նաև աղքատների թիվը:

Գծանկար 1. Իրական ՀՆԱ-ի աճը Հայաստանում և հենանիշային երկրներում, տ/տ (%), 2008-2015թթ.



Աղբյուրը՝«Global Finance (https://www.gfmag.com/global-data/country-data/)», * առանձին հաշվարկներ, Հայստանի և Վրաստանի տվյալները փաստացի են, մնացած երկրներինը գնահատական:

Հայաստանը դեռևս մնում է միջինից ցածր եկամտով երկիր: Արտագնա աշխատողների փոխանցումները կարևոր դեր են խաղում Հայաստանի տնտեսության համար՝ կազմելով որոշ ընտանիքների եկամտի կեսը (2013 թվականի ՀՆԱ-ի 20%-ից ավելին):

Հայաստանի տնտեսությունը խոցելի է արտաքին ցնցումներից և համաշխարհային առևտրային հարթակներում առկա պայմանների փոփոխություններից, քանի դեռ արտահանումն ու փոխանցումները կախված են միջազգային շուկաներում ապրանքների առկա գներից: Միջնաժամկետ հատվածում համաշխարհային ֆինանսական ճգնաժամի սոցիալական ու տնտեսական հետևանքների մեղմումը մարտահրավեր է, իսկ երկարաժամկետ հատվածում պետք է շարունակել քաղաքականությունների ու ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումը, որոնք անհրաժեշտ են տնտեսությունը վերականգնելու համար: Արտաքին ցնցումների նկատմամբ տնտեսության դիմադրողականության ավելացումը և զարգացման նոր հնարավորությունների ստեղծումն անփոխարինելի են*:

Հայաստանն արձագանքում է արտաքին ցնցումներին, ինչպես և հենանիշային երկրները, թեև ավելի խորը ազդեցության է ենթարկվում գլոբալ շուկաների փոփոխություններից: 2008թ-ից հետո, Հայաստանը հայտնվեց ամենածանր ճգնաժամում, թեև կարողացավ ամուր պահպանել վերականգնման գործընթացը: 2008-2015թթ. ժամանակահատվածում ՀՆԱ միջին տարեկան աճը կազմել է 2.1%՝ ավելի ցածր, քան մնացած բոլոր հենանիշային երկրներում, բացի Խորվաթիայից (Վրաստանը միջինում 3.6%-ի աճ էր ապահովում):

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Տարածքային անհամաչափությունների ընդհանուր չափը շատ հաճախ արտահայտվում է մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքով: Այլ հենանիշային երկրների հետ համեմատած՝

Հայաստանը ապահովել է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի համեմատաբար ցածր ու նվազող տատանումներ իր բոլոր տարածքներում՝ մարզերում (2011թ-ին նվազագույն ու առավելագույն շեմերի միջև տարբերությունը կազմել է ազգային միջինի 57-154%, իսկ 2012թ-ին՝ 57-149%): Նվազելու ակնհայտ միտում կար, միջնաժամկետ հատվածում (2009-2012թթ.): Եթե այդ միտումը պահպանվեր, ինչը հնարավոր էր Երևանից դուրս գտնվող տնտեսությունների գործունեության ակտիվացման միջոցով, երկրի սոցիալ-տնտեսական վիճակը մեծապես կբարելավվեր: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ամենաթույլ տատանումները գրանցվել են Ալբանիայում՝ ամենացածրն է, չնչին նվազմամբ (2012թ-ի դրությամբ կազմելով 67-141%) և Հայաստանում, երկրորդ ամենացածրը, զգալի նվազման միտումներով (2012թ-ի դրությամբ կազմելով 57-149%): Հարաբերականորեն ամենաբարձր տատանումները գրանցվել են ՆՀՀ Մակեդոնիայում՝ բարձր է, չնչին նվազումներով (2011թ-ի դրությամբ կազմելով 47-144%), Խորվաթիայում՝ բարձր է, առանց լուրջ փոփոխությունների (2011թ-ի դրությամբ կազմելով 57-179%) և Վրաստանում՝ բարձր է, զգալի նվազման միտումներով (2012թ-ի դրությամբ կազմելով 60-182%):

* http://www.worldbank.org/en/country/armenia/overview

Գծանկար 2. Մարզային ՀՆԱ-ի տատանումները NUTS 3 մակարդակում (ազգային միջինի %), 2009-2011թթ.



Աղբյուրը՝ հենանիշային երկրների վիճակագրական ծառայությունների տվյալներ:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Հավասարակշռված զարգացումը պահանջում է տնտեսական, սոցիալական և բնապահպանական խնդիրների ինտեգրում: Միացյալ ազգերի զարգացման ծրագիրը հրապարակում է Մարդկային զարգացման հաշվետվություն: Այն ներկայացնում է մարդկային զարգացման համաթիվը (ՄԶՀ-ն), ինչպես նաև հարակից այլ ցուցանիշներ, որոնք համատեղում են միջպետական համեմատության տնտեսական ու սոցիալական ցուցանիշները: Հայաստանը (և Ալբանիան) հետ է մնում հենանիշային երկրներից ՄԶՀ-ի մասով, թեև կարողանում է ամուր ու նշանակալի բարելավում ապահովել տարիների ընթացքում:

Աղյուսակ 1. Հայաստանի և հենանիշային երկրների ՄԶՀ-ն և այլ ընտրված ցուցանիշները, 2014թ.

Հ/Հ	Մարդկային զարգացման համաթիվը և հարակից ցուցանիշներ	Հայաստանի վարկանիշը (ըստ նկարագրության)	Ալբանիայի վարկանիշը (ըստ նկարագրության)	Խորվաթիայի վարկանիշը (ըստ նկարագրության)	Վրաստանի վարկանիշը (ըստ նկարագրության)	ՆՀՀ Մակեդոնիայի վարկանիշը (ըստ նկարագրության)
1	Մարդկային զարգացման համաթիվ, վարկանիշ*	**85**	85	47	76	81
2	ՄԶՀ միջին տարեկան աճ 1990-2014թթ., տասնորդականներով	**0.62**	0.67	0.83	հասանելի չէ	հասանելի չէ
3	Գենդերային անհավասարության համաթիվ, դաս*	**62**	45	30	77	33
4	Աշխատուժի մասնակցության մակարդակ (%)	**63.4**	55.1	51.3	65.0	55.2
5	Բնակչության աղքատության համակողմանի գնահատում (%)	**37.0**	38.3	n/a	37.6	38.4



*Ինչքան ավելի ցածր է դասը, այնքան ավելի դրական:
Աղբյուրը՝http://hdr.undp.org/sites/default/files/2015_human_development_report.pdfկայքի տվյալների վերլուծություն:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի շրջակա միջավայրի ընդհանուր վիճակը շարունակում է մնալ ակտուալ՝ երկրի ու տարածքների ապագա աճի տեսանկյունից: Շրջակա միջավայրի պահպանության համաթիվը կիրառվում է 178 երկրում և ծառայում որպես միջազգային ստանդարտ, որի համաձայն գնահատվում են շրջակա միջավայրի կայունության խնդիրները: Հայաստանի բնապահպանական համակարգը բավականին ամուր է հենանիշային երկրների համեմատ (անմիջապես Խորվաթիայից հետո): Հիմնական ուժեղ կողմերն են հարուստ կենսաբազմազանությունը, հարաբերականորեն հավասարակշռված

գյուղատնտեսությունը և առողջ անտառտնտեսությունը: Հիմնական խնդիրներն են էներգետիկ ոչ կայուն աղբյուրներից կախվածությունը և օդի վատ որակը: Միաժամանակ, Հայաստանը (ինչպես և Վրաստանը) կարողացել է ապահովել ոչ էական բարելավումներ երկարաժամկետ հատվածում՝ հենանիշային երկրների համեմատությամբ: Այս տեսանկյունից Հայաստանին անհրաժեշտ է կենտրոնանալ բնապահպանության կայուն զարգացման հիմնական խոչընդոտների՝ էներգետիկայի աղբյուրների և օդի որակի վրա:

Աղյուսակ 2. Հայաստանի և հենանիշային երկրների շրջակա միջավայրի պահպանության համաթիվը, 2014թ.

Հ/Հ	Բնապահպանական գործունեության առանցքային ոլորտներ	Հայաստանի վարկանիշը	Ալբանիայի վարկանիշը	Խորվաթիայի վարկանիշը	Վրաստանի վարկանիշը	ՆՀՀ Մակեդոնիայի վարկանիշը
1	Ազդեցություն առողջության վրա	**69**	40	33	73	1
2	Օդի որակ	**102**	143	101	110	163
3	Ջրամատակարարում և ջրահեռացում	**60**	73	43	63	56
4	Ջրային ռեսուրսներ	**61**	114	76	145	112
5	Գյուղատնտեսություն	**17**	113	112	126	10
6	Անտառներ	**19**	101	26	16	80
7	Ձկնարդյունաբերություն	**-**	98	79	98	-
8	Կենսաբազմազանություն և բնամիջավայր	**51**	87	67	138	141
9	Կլիմա և էներգետիկա	**96**	3	26	78	54
10	**Ընդհանուր գնահատական**	**48**	**67**	**45**	**101**	**89**
11	*Տասնամյա բարելավման գործընթաց (Հայաստան=100)*	*100*	*148*	*79*	*54*	*73*

***Աղբյուր՝ http://epi.yale.edu/epi**



Փորձագիտական գնահատական http://epi.yale.edu/epi տվյալների հիման վրա:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի մշտական բնակչությունը 1990-2015թթ. ժամանակահատվածում նվազել է 14%-ով, այսինքն՝ 3.5 միլիոնից հասել է 3.0 միլիոնի: Այս կրճատումն ավելի շատ ազդել է քաղաքների, քան գյուղերի վրա:

Գծանկար 3. Հայաստանի մշտական բնակչությունը, 1990-2015թթ. (հազար)



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

2001 և 2011 թվականների մարդահամարի համաձայն՝ Հայաստանի առկա բնակչության թվաքանակն ավելի քիչ է, քան մշտական բնակչության թվաքանակը: Երկու մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում առկա բնակչությունը նվազել է 4.4%-ով (130,823 մարդ) կամ՝ 3,002.594-ից հասել է 2,871,771-ի (Նույն ժամանակահատվածի համար մշտական բնակչության թվաքանակը կազմել է 3,213 միլիոն և 3,018 միլիոն, համապատասխանաբար):

Աղյուսակ 3. Հայաստանի Հանրապետության առկա բնակչությունը 2001 և 2011 թվականների մարդահամարների համաձայն (անձ)

ՀՀ մարզեր և ք. Երևան	2001թ.	2011թ.	2001-2011թթ.փոփոխության %
Հայաստանի Հանրապետություն	**3,002,594**	**2,871,771**	**-4%**
ք. Երևան	1,091,235	1,054,698	-3%
Արմավիր	255,861	256,639	0%
Արարատ	252,665	246,880	-2%
Կոտայք	241,337	245,324	2%
Շիրակ	257,242	233,308	-9%
Լոռի	253,351	217,103	-14%
Գեղարքունիք	215,371	211,828	-2%
Արագածոտն	126,278	125,539	-1%
Սյունիք	134,061	119,873	-11%
Տավուշ	121,963	112,920	-7%
Վայոց Ձոր	53,230	47,659	-10%

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

Ըստ 2001 և 2011 թվականներին անցկացված մարդահամարների՝ բնակչության թիվը փոքր ինչ աճել էր միայն երկու՝ Կոտայքի և Արմավիրի մարզերում: Մնացած բոլոր մարզերի բնակչությունը պակասել էր, թեև մարզերի միջև նշանակալի տարբերություններ կային: Միայն 3 մարզերում՝ Արագածոտնում, Գեղարքունիքում, Արարատում և Երևան քաղաքում բնակչության նվազման մակարդակն ավելի ցածր է եղել, քան երկրի միջինը: Տավուշի և Շիրակի մարզերի բնակչության կրճատումը միջինից բարձր է եղել, բայց չի գերազանցել 10%-ը: Ամենաշատը տուժել են Վայոց Ձորի, Սյունիքի և Լոռու մարզերը, քանի որ այդ տասնամյակում բնակչության թիվը նվազել է 10–15%-ով:

Գծանկար 4. Բնակչության թվի փոփոխությունները 2001 – 2011թթ.ընթացքում (2001 արժեքը =100%)



Աղբյուրը.Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

Հայաստանի բնակչության խտությունը մեկ քառակուսի կիլոմետրի վրա կազմել է 101 մարդ *(հաշվարկված է մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշով)*: Իհարկե, ամենաբարձր խտությունը մայրաքաղաքում է, թեև Արմավիրի, Արարատի և Կոտայքի մարզերի բնակչության խտությունը նույնպես բարձր է երկրի միջինից: Ամենանոսր բնակեցված մարզերն են Սյունիքն ու Վայոց Ձորը, որոնց բնակչության խտությունը չի գերազանցում երկրի միջինի 1/3-ը:

Գծանկար 5. ՀՀ մարզերի և Երևան քաղաքի բնակչության խտությունը (մարդ/1կմ^2), 2014թ.



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը ցամաքային երկիր է, ունի մեկ մեծ միջազգային օդանավակայան և սահմանափակ ուղղություններով երկաթուղիներ: Երկիրը մեծապես կախված է ճանապարհային փոխադրումներից: Փոխադրամիջոցների հասանելիության մակարդակի տարբերություններն ըստ տարածքների առաջանում են մարզային կենտրոններից և մայրաքաղաքից տվյալ տարածքի հեռավարության պատճառով: Սակայն, տրանսպորտի տեսանկյունից տարածքների միջև տարբերությունները

գնահատելու համար ավելի պատշաճ տեղեկատվություն հնարավոր է ստանալ վարչատարածքային բնակչության թվին ու բաշխվածությանը համեմատ ճանապարհների հասանելիության գնահատման միջոցով: Մարզից մարզ կամ մարզի ներսում ճանապարհային երթևեկության տևողությունը բնակչության թվին հարաբերելիս՝ ստացվում է հետևյալ պատկերը. համայնքային ճանապարհների մատչելիության տեսանկյունից ամենացածր մակարդակը Սյունիքի, Տավուշի, Գեղարքունիքի և Արմավիրի մարզերում է: Միջհամայնքային ճանապարհները ամենավատն են Սյունիքում, Վայոց Ձորում և Տավուշում: Մատչելիության այս երկու տեսակների համեմատությունը, որն ընդգրկում է ճանապարհային երթևեկության տևողությունն ու ազդակիր բնակչության քանակը, նախանշում է այն մարզերը, որտեղ ճանապարհների մատչելիության բարելավումն ամենաանհրաժեշտն է, դրանք են. Շիրակի, Վայոց Ձորի, Սյունիքի և Լոռու մարզերը:

Աղյուսակ 4. Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների մատչելիությունն՝ ըստ մարզերի ու բնակչության թվի, 2015թ.

ՀՀ մարզեր	Ներհամայնքային հասանելիություն, րոպե	Միջհամայնքային և ներհամայնքային հասանելիություն, րոպե	Անհավասարությունը միջ և ներհամայնքային հասանելիության միջև, %	Միջհամայնքային հասանելիության բարելավման ընդհանուր կարիքը, դաս
Արագածոտն	22	30	136%	10
Արարատ	20	35	175%	9
Արմավիր	31	62	200%	7
Գեղարքունիք	31	74	239%	6
Լոռի	16	92	575%	4
Կոտայք	26	46	177%	8
Շիրակ	6	88	1467%	1
Սյունիք	41	249	607%	3
Տավուշ	33	101	306%	5
Վայոց Ձոր	16	110	688%	2

Նշում. Ներհամայնքային ճանապարհների մատչելիությունը հաշվարկվում է ըստ ճանապարհային երթևեկության տևողության դեպի հարևան համայնքներ կամ Երևան և ըստ բնակչության թվի:
Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների վերլուծություն:

Հայաստանի զարգացման ռազմավարության համաձայն՝ տրանսպորտի ոլորտում իրականացվող տարեկան պետական ներդրումները կազմում են ՀՆԱ-ի 1%-ը, որի 85%-ը ուղղվելու է ճանապարհային ցանցին (ըստ նախնական գնահատականների՝ ներդրումների առաջարկվող ծավալը հնարավորություն կտա տարեկան կտրվածքով վերանորոգել տեղական, հանրապետական ու միջպետական նշանակության ճանապարհային ցանցի մոտ 6-7%-ը), իսկ մնացած 15%-ը՝ այլ ծրագրերին: Այս առումով՝ հիմնական խնդիր է դառնում վերանորոգել երթևեկելի ճանապարհի որևէ հատված, որը տվյալ

համայնքը կապում է մարզկենտրոնին, Հյուսիս-Հարավ միջանցքին կամ առավել բարձր տնտեսական նշանակություն ունեցող ճանապարհներին կամ դրանց հատվածներին:

ՄԵԿ ՇՆՉԻ ՀԱՇՎՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ

Որևէ տարածքի տնտեսական զարգացման մասին խոսելիս, մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ-ն) անշուշտ ամենաօգտագործված ցուցանիշներից մեկն է: Այս ցուցանիշը Հայաստանի մարզերով հաշվարկված չէ, Հայաստանի զարգացման ռազմավարությունը պարունակում է ՀՆԱ փորձագիտական հաշվարկ՝ 2009–2011թթ. համար: Ստորև ներկայացված գնահատումը հիմնված է ՀՆԱ ոլորտային բաշխվածության մասով այս պահին հասանելի վիճակագրական տվյալների, տնտեսության հիմնական ճյուղերի մարզային բաշխվածության և մարզերում փաստացի բնակչության քանակի վրա՝ ըստ 2011թ-ի մարդահամարի տվյալների և երկարաժամկետ միտումների: Այդ երկու հաշվարկները բերում են շատ նման արդյունքների: Տարածքային անհամաչափությունները Հայաստանում ակնհայտ են, թեև անհամաչափությունը Հայաստանի բոլոր տասը մարզերի և Երևանի միջև չնչին չափով նվազել է 2009-2012թթ. ժամանակահատվածում:

Գծանկար 6. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ արտահայտված երկրի միջինի տոկոսային հարաբերությամբ, 2009 – 2012թ.



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն երկրում աճել է 28%-ով, 2009-2012թթ. ընթացքում, իսկտարբերությունը ամենաբարձր ու ամենացածր տարածքային ցուցանիշների միջև պակասել է 4.0 մինչև 2.8 անգամ: Այդ նվազումը մասամբ տեղի է ունեցել Սյունիքում՝ ՀՆԱ-ի կտրուկ աճի պատճառով (ինչը կապված է մետաղական հանքանյութերի վաճառքից ստացված եկամտի հետ): Հաշվետու ամբողջ ժամանակահատվածում ազգային միջինից բարձր տվյալ գրանցվել էր Երևանում և Սյունիքում, ևս երկու մարզում ապահովվել է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 70%-ի շեմի գերազանցում, իսկ մնացած յոթ մարզերը գտնվում են զարգացման ավելի ցածր մակարդակում: 2012թ-ին Հայաստանի բնակչության 46%-ը ապրում էր այն մարզերում, որտեղ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմում էր ազգային միջինի 70%-ից ցածր:

Տնտեսական գործունեության աշխարհագրական կենտրոնացման տեսանկյունից՝ Հայաստանը մնում է չափազանց միակենտրոն: ՀՆԱ-ի կեսից ավելին ապահովում է Երևանը (2012թ-ի դրությամբ 54%-ը և 2009թ.-ին՝ 60%-ը) և հանդիսանում է երկրի արդյունաբերական ու ծառայությունների կենտրոնը: Մի կողմից, այս միակ ազգային տնտեսական կենտրոնի մոդելը թույլ է տալիս որոշ ագլոմերացիոն երևույթների առկայություն, մյուս կողմից այն սահմանափակում է այլ, մասնավորապես սահմանամերձ տարածքներում զարգացման հնարավորությունները: Տարածքային շուկաների մեծությունը բավարար չէ ազգային մակարդակով նշանակալի դառնալու համար, իսկ միջազգային հեռանկարների մասին դեռ վաղ է մտածել:

Գծանկար 7.Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի տարածքային մասնաբաժինները, 2012թ.



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Հայաստանից արտահանման ծավալները 2009 թվականին 2008 թվականի նկատմամբ նվազել է 20%-ով: 2014 թվականի դրությամբ արտահանման ընդհանուր ծավալը 99%-ով ավելի բարձր էր 2008 թվականի համեմատությամբ: Նույն ժամանակահատվածում աճել է նաև ներմուծումների ծավալը՝ 36%-ով:

Գծանկար 8.Հայաստանի Հանրապետության առևտուրը, 2008 – 2014թթ. (ՀՀ միլիոն դրամ)



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

Մարզերի արտահանման կարողությունը վերջիններիս միջազգային մրցունակության հստակ արտացոլումն է և չափազանց կարևոր է, քանի որ տեղական մեծ շուկաների բացակայությունը լուրջ խնդիր է հայկական ընկերությունների համար: Մարզերից մեկ շնչի հաշվով արտահանման ծավալները նույնպես չափազանց տարբեր են, և 2008-2014թթ. ժամանակահատվածում այդ տարբերություններն ավելի են խորացել:

Աղյուսակ 5. Մարզերից և Երևանից մեկ շնչի հաշվով արտահանման ծավալները, 2008 – 2014թթ. (ՀՀ դրամ)

Արտահանումը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ)					
ՀՀ մարզեր և Երևան քաղաք	2008թ.	2014թ.	Ազգային միջինի %, 2008թ.	Ազգային միջինի %, 2014թ.	Մեկ շնչի հաշվով արտահանման ծավալի աճը, 2008-2014թթ. (2008 = 100 %)
Սյունիք	304,087	980,140	277	439	322
ք. Երևան	165,416	314,085	151	141	190
Լոռի	113,393	302,913	103	136	267
Հայաստանի Հանրապետություն	**109,600**	**223,419**	**100**		**204**
Արարատ	83,397	145,179	76	65	174
Արմավիր	12,786	138,594	12	62	1,084
Գեղարքունիք	11,817	116,890	11	52	989
Կոտայք	196,373	77,876	179	35	40
Արագածոտն	10,036	70,510	9	32	703
Վայոց Ձոր	34,671	51,505	32	23	149
Տավուշ	2,732	9,031	2	4	331
Շիրակ	5,898	8,858	5	4	150
ՄԻՆ.	2,732	8,858			
ՄԱՔՍ.	304,087	980,140			
ՄԱՔՍ./ՄԻՆ.	111.31	110.65			
ՄԱՔՍ./ՄԻՆ.	**301,355**	**971,282**			
Տրվածություն	**99,712**	**277,961**			
Հարաբերական ցրվածություն	**90.98**	**124.41**			

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

2008-2014թթ. ժամանակահատվածում Հայաստանից արտահանման ծավալները մեկ շնչի հաշվով աճել են 109,600 ՀՀ դրամից մինչև 223,419 ՀՀ դրամ: Երկու մարզերում՝ Սյունիքում, Լոռիում և Երևան քաղաքում աճի ծավալները գերազանցել են ազգային միջին ցուցանիշը և 2008թ-ին և 2014թ-ին: 2008թ-ին հինգ մարզերում, իսկ 2014թ-ին՝ երկուսում մեկ շնչի հաշվով արտահանման ծավալները կազմել են ազգային միջին ցուցանիշի 15%-ից պակաս: Հետ էին մնում Շիրակն ու Տավուշը: Կարևոր է նշել, որ 2008-2014թթ. ժամանակահատվածում 3 մարզերում (Վայոց Ձոր, Շիրակ, Արարատ) և Երևանում արտահանման ծավալները մեկ շնչի հաշվով նվազել են ազգային միջին ցուցանիշի նկատմամբ:

Գծանկար 9. Մարզերից արտահանման ծավալները մեկ շնչի հաշվով, 2008 – 2014թթ., (ՀՀ դրամ), ինչպես նաև արտահանման ծավալների աճը 2008-2014թթ. ժամանակահատվածում



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

Մեկ շնչի հաշվով արտահանման ծավալների ավելացումը ավելի բարձր է եղել, քան ազգային միջինը երկու առավել ակտիվ մարզերում՝ Սյունիքում և Լոռիում, ինչպես նաև չորս այլ մարզերում՝ Արմավիրում, Գեղարքունիքում, Արագածոտնում և Տավուշում, որտեղ մեկ շնչի հաշվով արտահանման ծավալները ազգային միջինից ցածր էին:

Արտահանման ոլորտում գործունեության ծավալներն ըստ մարզերի ծայրահեղ անհամաչափ են և էլ ավելի են խորացել վերջին տարիների ընթացքում (մեկ շնչի հաշվով արտահանման ծավալների բաշխվածությունը և հարաբերական բաշխվածությունը ավելացել է մարզային մակարդակում):

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ

Հայաստանի գյուղատնտեսական արտադրանքի ծավալը մեկ շնչի հաշվով աճել է 26%-ով, 2009-2014թթ. ընթացքում (ըստ 2009թ-ի անփոփոխ գների ու փաստացի բնույթի): Մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքի ծավալների տարբերություններն ըստ մարզերի հսկայական են, թեև վերջերս նվազել են: Մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքի առավելագույն և նվազագույն ծավալների տարբերություններն՝ ըստ մարզերի, նվազել են 96 անգամից մինչև 83 անգամ, սակայն դեռ զգալի բաց կա: Դա մեծապես կախված է մարզերի աշխարհագրական ու կլիմայական տարբերություններից և բնակչության բաշխվածությունից:

Աղյուսակ 6. Մեկ շնչի հաշվով համախառն գյուղատնտեսական արտադրանքը հաստատուն գներով (2009), 2009-2014թթ. (ՀՀ դրամ)

Գյուղատնտեսական արտադրանքը մեկ շնչի հաշվով,անփոփոխ գներով, 2009թ., ՀՀ դրամ							**Գյուղատնտեսականարտադրանքըմեկշնչիհաշվով,անփոփոխգներով, 2009թ, արտահայտվածՀայաստանիմիջինի %-ով**	
	2009	2010	2011	2012	2013	2014	2009	2014
ՀայաստանիՀանրապետություն	190,515	167,200	179,096	200,462	222,177	239,356	100	*126*
ք. Երևան	4,614	3,865	3,987	5,313	5,582	7,388	2	3
Արագածոտն	431,231	370,306	395,778	466,790	489,337	538,017	226	225

Արարատ	358,817	332,165	306,074	346,441	381,278	393,620	188	164
Արմավիր	424,199	308,568	340,314	393,664	438,504	461,458	223	193
Գեղարքունիք	442,277	448,799	466,669	491,732	538,586	610,974	232	255
Լոռի	164,028	143,465	170,153	183,107	221,258	244,207	86	102
Կոտայք	161,946	123,414	133,965	146,885	157,351	165,538	85	69
Շիրակ	234,360	228,525	257,883	277,218	319,976	328,944	123	137
Սյունիք	272,185	226,726	272,006	331,719	366,756	414,349	143	173
ՎայոցՁոր	231,685	216,827	229,409	266,027	294,098	317,557	122	133
Տավուշ	211,804	188,355	222,868	245,611	271,160	281,123	111	117
ՄԻՆ.	4,614	3,865	3,987	5,313	5,582	7,388		
ՄԱՔՍ.	442,277	448,799	466,669	491,732	538,586	610,974		
ՄԱՔՍ./ՄԻՆ. (անգամ)	95.86	116.11	117.05	92.55	96.48	82.70		
ՄԱՔՍ./ՄԻՆ.	437,663	444,934	462,682	486,419	533,004	603,586		
Ցրվածություն	136,641	124,795	127,022	142,538	153,114	170,317		
Հարաբերական ցրվածություն	**72**	**75**	**71**	**71**	**69**	**71**		

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն: Մարզերից միայն երկուսում և մայրաքաղաքում ծավալներն ավելի ցածր էին, քան ազգային միջինը, իսկ 2014թ-ին հինգ մարզերի ազգային միջինը գերազանցվել են 150%-ով, իսկ երկու մարզերում՝ Արագածոտնը և Գեղարքունիքը՝ 200%-ով:

Գծանկար 10. Մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքը անփոփոխ գների դեպքում, (2009թ.), Հայաստանի Հանրապետության միջինի % հարաբերությամբ, 2009-2014թթ.ժամանակահատվածի համար (ՀՀ դրամ)



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների վերլուծություն:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ

2009-2014թթ. ժամանակահատվածում (ըստ՝ 2009թ-ի անփոփոխ գների ու փաստացի բնակչության) Հայաստանի մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի արժեքն ավելացել է 21%-ով: Նույն ժամանակահատվածում խորացել են տարածքային անհամաչափությունները: Մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի առավելագույն ու նվազագույն ծավալների միջև տարբերությունը

մարզային մակարդակում աճել է 2009թ 17 անգամի փոխարեն 2014թ կազմելով20 անգամ, աճել է նաև ցրվածության ու հարաբերական ցրվածության ցուցանիշները:

Աղյուսակ 7. Մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի ծավալը, անփոփոխ գների դեպքում (2009թ.), 2009-2014թթ.ժամանակահատվածում (ՀՀ դրամ)

Արդյունաբերական արտադրանքը մեկ շնչի հաշվով, անփոփոխ գներով, 2009թ., ՀՀ դրամ							Արդյունաբերական արտադրանքը մեկ շնչի հաշվով, անփոփոխ գներով, 2009թ, արտահայտված Հայաստանի միջինի %-ով		Փոփոխությունը 2009 - 2014թթ. ընթացքում (% միավորներով)
	2009	2010	2011	2012	2013	2014	2009	2014	
Հայաստանի Հանրապետություն	230,992	264,121	298,509	328,246	291,290	280,394	100	121	21
Ք. ԵՐԵՎԱՆ	284,987	309,572	344,522	358,181	323,383	320,500	123	114	-9
ԱՐԱԳԱԾՈՏՆ	97,049	106,464	147,909	130,356	133,654	146,944	42	52	10
ԱՐԱՐԱՏ	231,977	270,039	281,081	355,742	336,010	331,117	100	118	18
ԱՐՄԱՎԻՐ	132,596	134,947	139,909	144,889	131,114	130,241	57	46	-11
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	57,194	52,051	72,756	85,658	74,807	65,875	25	23	-1
ԼՈՌԻ	199,486	251,415	290,509	313,597	239,381	208,597	86	74	-12
ԿՈՏԱՅՔ	336,709	321,062	365,526	493,377	450,434	417,664	146	149	3
ՇԻՐԱԿ	75,131	98,652	157,302	147,503	124,474	133,000	33	47	15
ՍՅՈՒՆԻՔ	769,453	1,147,582	1,276,877	1,403,165	1,168,795	1,051,380	333	375	42
ՎԱՅՈՑ ՁՈՐ	128,212	138,747	139,815	161,588	172,173	206,240	56	74	18
ՏԱՎՈՒՇ	45,227	45,554	48,121	58,402	63,505	51,569	20	18	-1
ՄԻՆ.	45,227	45,554	48,121	58,402	63,505	51,569			
ՄԱՔՍ.	769,453	1,147,582	1,276,877	1,403,165	1,168,795	1,051,380			
ՄԱՔՍ./ՄԻՆ. (անգամ)	17	25	27	24	18	20			
ՄԱՔՍ./ՄԻՆ.	724,227	1,102,029	1,228,756	1,344,764	1,105,290	999,811			

Ցրվածություն	**207,166**	**310,373**	**342,164**	**380,699**	**315,012**	**280,805**
Հարաբերական ցրվածություն	**90**	**118**	**115**	**116**	**108**	**100**

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

Մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի ծավալի ազգային միջինը գերազանցվել է միայն չորս մարզերում, ևս չորս մարզերում այդ ծավալները կազմել են ազգային միջինի 50%-ը:

Գծանկար 11. Մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի ծավալը, անփոփոխ գների դեպքում (2009թ.), ազգային միջինի % հարաբերությամբ արտահայտված, 2009 և 2014թթ.



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏ

2009-2014 թվականների ընթացքում (2009թ-ի անփոփոխ գներով) մեկ շնչի հաշվով ծառայությունների ծավալը Հայաստանում աճել է 63 %-ով: Երևանի և հանրապետության մնացած տարածքների միջև տարբերությունը հսկայական է, սակայն ըստ հարաբերական բաշխվածության տվյալի, մարզային անհամաչափությունները մի փոքր մեծացել են: Մարզային մակարդակում մեկ շնչի հաշվով ծառայությունների ամենաբարձր և ամենացածր ծավալների միջև տարբերությունը մոտավորապես 21 անգամ է:

Աղյուսակ 8. Ծառայության ծավալը մեկ շնչի հաշվով անփոփոխ գների պայմաններում (2009թ.), 2009-2014թթ. (ՀՀ դրամ)

Մատակարարվող ծառայությունների ծավալները մեկ շնչի հաշվով (2009թ.), (ՀՀ դրամ)							Անփոփոխ գներով մատակարարվող ծառայությունների ծավալը մեկ շնչի հաշվով (2009թ.) արտահայտված Հայաստանի միջինի %-ով		Փոփոխությունը 2009 - 2014թթ. միջև (% միավորներով)
	2009	2010	2011	2012	2013	2014	2009	2014	
Հայաստանի Հանրապետություն	227,400	242,987	264,828	322,287	338,793	371,494	100	163	63
ք. Երևան	579,345	607,829	663,686	795,067	813,602	895,149	255	241	-14
Արագածոտն	40,564	52,059	51,952	61,422	70,409	67,319	18	18	0
Արարատ	36,760	40,072	42,638	50,629	64,306	64,983	16	17	1
Արմավիր	35,923	46,077	53,598	62,854	75,239	67,363	16	18	2
Գեղարքունիք	27,774	30,845	31,849	33,726	41,199	41,999	12	11	-1
Լոռի	43,707	51,013	52,933	62,526	68,088	68,641	19	18	-1
Կոտայք	64,785	83,863	93,888	110,694	139,133	161,292	28	43	15
Շիրակ	52,641	57,128	57,486	73,468	83,233	89,570	23	24	1
Սյունիք	47,150	56,367	61,644	82,651	96,262	103,712	21	28	7
Վայոց Ձոր	49,292	62,433	63,450	83,616	125,986	129,010	22	35	13
Տավուշ	31,200	40,694	44,730	42,036	56,825	63,155	14	17	3
ՄԻՆ.	27,774	30,845	31,849	33,726	41,199	41,999			
ՄԱՔՍ.	579,345	607,829	663,686	795,067	813,602	895,149			
ՄԱՔՍ./ՄԻՆ. (անգամ)	21	20	21	24	20	21			
ՄԱՔՍ./ՄԻՆ.	551,571	576,984	631,837	761,341	772,403	853,150			

Ցրվածություն	162,057	168,145	184,065	220,742	222,459	246,451
Հարաբերական ցրվածություն	71	69	70	68	66	66

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

Մեկ շնչի հաշվով ծառայությունների ծավալները երկրում չափազանց տարբեր են՝ Երևանը գտնվում է ազգային միջինից բարձր մակարդակի վրա (ավելի քան 241%), մինչդեռ երկրորդ լավագույն արդյունքն ապահոված մարզը (Կոտայքը) ազգային միջինի ընդամենը 43%-ն է կազմել, իսկ մնացած մարզերում այդ մակարդակը շատ ավելի ցածր էր (մարզերից վեցում այդ ցուցանիշը ազգային միջինից ցածր էր 20%-ով): Պետք է նշել, որ ծառայությունների ծավալների զգալի տարածքային անհամաչափությունները մեծապես պայմանավորված են երեք հիմնական ոլորտներով՝ ֆինանսական ծառայություններ, կապ, տրանսպորտ և պետական կառավարում, որը որոշակի առումով, արդյունք է գրանցման վայրով ծառայությունների տարածքային բաշխման:

Գծանկար12.Ծառայությունների ծավալը մեկ շնչի հաշվով, անփոփոխ գների պայմաններում (2009թ.), արտահայտված ազգային միջինի %-ով, 2009 և 2014թթ.



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅՈՒՆ, ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

2014թ-ին, Հայաստանի տնտեսապես ակտիվ բնակչությունը կազմել է 63.1%: Այս տվյալի հիմքում դիտարկվում են լուրջ տարբերություններ տղամարդկանց (73.2%) և կանանց (55.2%), ինչպես նաև քաղաքային (59.6%) և գյուղական (69.2%) տարածքների միջև:

Գծանկար 13. Հայաստանի տնտեսական ակտիվությունը, 2014թ. (%)



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

Զգալի անհամաչափություններ կան նաև մարզերի միջև: Տնտեսական գործունեության ինտենսիվության տեսանկյունից՝ ամենաակտիվ (Վայոց Ձոր - 74.1%) ու ամենապասիվ (Շիրակ - 57.6%) մարզերի միջև տարբերությունը կազմել է 1.3 անգամ: Մարզերում միայն քաղաքային տարածքների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ տարբերությունը ամենաակտիվ (Սյունիք՝ 73.6%) ու ամենապասիվ (Շիրակ՝ 44.8%) մարզերի միջև կազմել է 1.5 անգամ: Մարզերից մեկում քաղաքային տարածքների տնտեսական ակտիվությունը ծայրահեղ ցածր է (Շիրակ՝ 50%-ից ցածր), իսկ մարզերից երկուսում՝ գերազանցում է 70%-ը: Վեց մարզերում՝ գյուղերի տնտեսական ակտիվությունը 70%-ից բարձր է: Միայն Արագածոտնում է, որ գյուղերում ու քաղաքներում տնտեսական ակտիվությունը կազմել է 70%-ից բարձր:

Գծանկար14.Համայնքներում տնտեսական ակտիվությունը, 2014թ. (%)



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

Մարզային մակարդակում տնտեսական ակտիվության առավելագույն ու նվազագույն մակարդակների միջև տարբերությունը շատ ավելի ակնհայտ է կանանց դեպքում (1.5 անգամ), քան տղամարդկանց (1.3 անգամ): Տղամարդկանց տնտեսական ակտիվության մակարդակը ամենաբարձրն է Վայոց Ձորում (81.9%): Կանանց դեպքում՝ ամենաբարձր ցուցանիշը Արարատի մարզում է: Այնուամենայնիվ, ակնհայտ է նաև, որ Կոտայքում ու Երևանում կանանց տնտեսական ակտիվության մակարդակը ամենախնդրահարույցն է:

Գծանկար 15. Տնտեսական ակտիվության մակարդակը, ընդհանուր ու ըստ բնակավայրի տեսակի (%), 2014թ.



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

2014թ-ին, Հայաստանում գործազրկության մակարդակը կազմում էր 17.6% (տղամարդիկ՝ 15.8%, կանայք՝ 19.5%): Տարածքային անհամաչափությունները գործազրկության մասով նույնպես նշանակալի են: Տարբերությունը մարզերում գործազրկության առավելագույն ու նվազագույն մակարդակների միջև 5.3 անգամ է, տղամարդկանց դեպքում այդ տարբերությունը ավելի մեծ է (13.7 անգամ): Գործազրկության մասով առավել անբարենպաստ պայմաններում են քաղաքային բնակչության բարձր տեսակարար կշիռ ունեցող տարածքները՝ Երևանը, Կոտայքը, Շիրակը, Սյունիքը և Լոռին:

Գծանկար16.Գործազրկության մակարդակը՝ ընդհանուր և ըստ սեռերի (%), 2014թ.



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների վերլուծություն:

Ոչ պաշտոնական զբաղվածությունը մեծ ծավալների է հասնում մարզերի մեծ մասում՝ հանրապետության մասշտաբով հասնելով 50%-ի: Ութ մարզերում ոչ պաշտոնական զբաղվածության հարաբերական ծավալը գերազանցում է միջինը: Միայն Երևանում է, որ այդ ցուցանիշը 20%-ից ցածր է:

Այս երևույթը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության ոլորտում զբաղվածության առանձնահատկություններով:

Գծանկար 17. Չգրանցված գործունեությունը մարզերում 2014թ.



(ընդհանուր զբաղվածության մակարդակի %)

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների վերլուծություն:

Աշխատանք ունեցող մարդկանց միջին ամսական եկամտի տեսանկյունից, տարբերությունը 2013 թվականին Հայաստանի ամենաբարձր և ամենացածր եկամտաբերությամբ մարզերի միջև կազմել է 1.9 անգամ: Միայն 3 մարզերում՝ Սյունիքում, Արարատում, Արմավիրում և Երևանում միջին ամսական եկամուտը ավելի բարձր է, քան ազգային միջինը: Մարզերից հինգում՝ Արագածոտնում, Շիրակում, Կոտայքում, Գեղարքունիքում և Լոռիում միջին ամսական եկամուտը կազմել է ազգային միջինի 70-100%-ը, իսկ երկուսում՝ Վայոց Ձորում, Տավուշում ազգային միջինի 70%-ը:

Գծանկար 18. Աշխատանք ունեցող անձանց միջին եկամուտը, ազգային միջինի %-ով արտահայտված, 2013թ.



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների վերլուծություն:

ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ, ԿՅԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Ծայրահեղ աղքատության մակարդակը 2008-2013թթ.-ի ընթացքում աճել է 1.6%-ից 2.7, իսկ տարածքային անհամաչափությունները մնացել են անփոփոխ: 2013թ.-ին, ամենաբարձր ծայրահեղ աղքատության մակարդակը արձանագրվել է Կոտայքի, Շիրակի և Արմավիրի մարզերում: Շիրակում և Կոտայքում աղքատության մակարդակն ամենաբարձրն է երկրում:

Գծանկար 19. Ծայրահեղ աղքատության մակարդակը 2008 և 2013թթ.-ի հանրապետության միջինի նկատմամբ



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

Գծանկար 20. Աղքատության մակարդակն ըստ մարզերի (հարաբերությունը ընդհանուր բնակչությանը (%), 2008թ. և 2013թ.)



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

Բնակիչների կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականների համաձայն՝ 2008թ.-ի համեմատությամբ 2014թ.-ին ավելացել է բնակչության տեսակարար կշիռը, որն իր կենսամակարդակը համարում է միջինից ցածր կամ ծայրահեղ աղքատ: Միաժամանակ, պակասել է այն մարդկանց տեսակարար կշիռը, ովքեր իրենց կյանքի պայմանները համարում են միջին կամ միջինից բարձր:

Բնակչության կենսապայմանների վրա տարբեր գործոններ են ազդում, ներառյալ՝ աշխատանքի հնարավորությունները, վարձատրության չափերը, առողջապահական ծառայությունների, կրթական հաստատությունների ու այլ պետական ծառայությունների մատչելիությունը:

Գծանկար 21.Կենսապայմանների սուբյեկտիվ գնահատում, 2008թ. %



Գծանկար 22.Կենսապայմանների սուբյեկտիվ գնահատում, 2014թ. %



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

Առողջապահապական ծառայությունների հասանելիության մակարդակի տարբերությունները Հայաստանում զգալի են, երբեմն՝ ծայրահեղ, մասնավորապես՝ Երևանի և մարզերի միջև: 10,000 բնակչության հաշվով բժիշկների թիվը տատանվում է ամենահագեցածից ամենանոսր համայնքներում 5.9 անգամ, իսկ ներհիվանդանոցային (ստացիոնար) տեղերի քանակի մասով՝ 5.2 անգամ:

Գծանկար 23. Առողջապահապական ծառայությունների մատչելիության մակարդակի տարբերություններն ըստ Երևանի քաղաքի և ՀՀ մարզերի2014թ.



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

Բացի այդ, լուրջ տարբերություններ կան մարզերի միջև՝ կրթական համակարգի հասանելիության տեսանկյունից: Չորս տեսակի կրթական հաստատություններում ուսանողների թվի համեմատությունը ուսուցիչների թվին, ցույց է տվել, որ այս չափանիշով ամենավատ ու ամենալավ մարզերի միջև տարբերությունը կազմել է համապատասխանաբար 1.8 և 2.4 անգամ, ինչը վկայում է, որ կրթության հասանելիությունը համաչափ չէ, թեև առավել հավասարակշռված է, առողջապահության համակարգի համեմատությամբ:

Գծանկար 24. Տարբեր կրթական հաստատություններում աշակերտ-ուսուցիչ հարաբերությունը, 2014թ.



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների վերլուծություն:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐ

ՈՒԹԿՀՎ վերլուծությունը ապահովում է տարածքային զարգացման ոլորտում ներկայիս իրավիճակի ամփոփ նկարագիրը:

Աղյուսակ 9. Հայաստանի տարածքային զարգացման ՈՒԹԿՀՎ վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
– Հայաստանի հարաբերականորեն մրցունակ դիրքը համեմատելի է նմանատիպ երկրների հետ, որտեղ ընդհանուր քաղաքականությունը նպաստում է տնտեսության զարգացմանը (բիզնես գործունեության համար բարենպաստ պայմաններ, բնապահպանական հավասարակշռություն, արտաքին ցնցումներից տնտեսության արագ վերականգնվելու ունակություն): – Հայաստանում գոյություն ունի տարածքային զարգացման քաղաքականության համար պատասխանատու պետական կառույցը Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունն է: Հայաստանն առաջադիմում է տարածքային զարգացման քաղաքականության իրականացման գործընթացում՝ բարեփոխելով համապատասխան կառույցները և կառուցողական կերպով օգտագործելով հասանելի արտաքին աջակցությունը, որը տրամադրվում է ԵՄ-ի, այլ նվիրատուների ու միջազգային ֆինանսական կառույցների կողմից:	– Խրթին, զգալի և երբեմն ծայրահեղ տարածքային սոցիալական ու տնտեսական անհամաչափություններ, նաև հանրային ծառայությունների հասանելիության մասով, յոթ մարզ (երկրի բնաչության 46%-ը) ծայրահեղորեն ծանր կենսապայմաններով (մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 70%-ից ցածր): – Աշխատանքի հնարավորությունների ու պատշաճ կենսապայմանների բացակայության պատճառով արտագաղթ երկրի ամբողջ տարածքում: – Չդիվերսիֆիկացված տնտեսական կառուցվածք (գյուղերի մեծ մասում գյուղատնտեսական գործունեության իրականացում՝ միայն ընթացիկ կարիքները հոգալու նպատակով) և մարզերում համեմատաբար ցածր մակարդակ մարդկային զարգացման տեսանկյունից, ինչը փաստում է ՄԶՀ-ն: – Մեծ կախվածություն տնտեսական աճի միակ շարժիչից (Երևանից), որը կենտրոնացրել է երկրի տնտեսության կեսից ավելին, իսկ աճի մնացած կենտրոնները մեծ մասամբ ակտիվ չեն: – Թերօգտագործված մարդկային ներուժ, հատկապես թույլ զարգացած մարզերում, որի ապացույցն է տնտեսական աճի ցածր մակարդակը և գյուղատնտեսության ոլորտում չ ոչ ֆորմալ աշխատողների մեծ թիվը: – Սահմանափակ ապակենտրոնացում, որն առաջացել է զարգացման գործընթացների տեղական ու տարածքային դերակատարների թույլ ներգրավվածության (սահմանափակ լիազորությունների) հետևանքով և դրան զուգահեռ առաջացող թույլ ֆինանսական ապակենտրոնացում:
Հնարավորություններ	**Վտանգներ**
– Արտաքին ֆինանսական և խորհրդատվական աջակցության հասանելիություն և կարողությունների ամրապնդում, ՏԶ	– Տնտեսության լրացուցիչ արտաքին ցնցումներ կամ գլոբալ լճացում, որը կսահմանափակի զարգացման տարբերակները և տարածքային

բարեփոխումների շարունակություն՝ շեշտը դնելով արտաքին աջակցության վրա: – Հասանելի (ազգային, միջազգային ու տեղական) ֆինանսավորման կոնսոլիդացում՝ծրագրային ծախսումների և միջոցների (կիսա) մրցակցային բաշխման միջոցով: – Խելացի բազմակենտրոն զարգացման ապահովում՝ Երևանում տնտեսական գործունեության կենտրոնացմանը հակակշիռ ստեղծելու և վերմարզային ու տարածքային քաղաքային զարգացման կենտրոնների ստեղծման միջոցով: Վերջիններս կկարողանան դրական ազդեցություն ունենալ հարակից տարածքների և համապատասխան համայնքների վրա՝ տարածքային մակարդակում ագլոմերացիաներ ստեղծելու միջոցով: – Ավելի խորը, բիզնեսի խթանմանն ու ձեռներեցության ընդլայնմանն ուղղված բարեփոխումները, որոնք կարող են հարթակ ստեղծել համատարած տնտեսական աճի ներքին գործընթացների համար: – Ընտրված ոլորտների ակտիվացում, որոնք հնարավոր է խթանել տարբեր մարզերում՝ անկախ վերջիններիս զարգացման աստիճանից ու տնտեսական կառուցվածքներից: Այդ խթանումը կարող է նպաստել աշխատատեղերի ստեղծմանը, տնտեսության աճին ու շրջակա միջավայրի պահպանությանը, օրինակ՝ վերականգնվող էներգետիկայի և զբոսաշրջության զարգացման միջոցով: – Տարածքային զարգացման խթանման ընթացքում՝ ուշադրության ուղղում տնտեսության առավել խոստումնալից ոլորտների վրա (զբաղվածության և եկամտաբերության տեսանկյունից): – Հատկապես անբարենպաստ վիճակում գտնվող մարզերից արտագաղթի նվազեցման և առավել խոցելի խմբերի վիճակի բարելավման նպատակով՝ աշխատատեղերի ստեղծում: – Վարչատարածքային բարեփոխումների (համայնքների խոշորացման, փնջերի) գործընթացի օգտագործում, որպես մեխանիզմ՝ առավել բարդ, լայնամասշտաբ սոցիալ-տնտեսական միջամտություններ իրականացնելու համար, ավելի ընդարձակ համայնքային ու միջհամայնքային	զարգացումը կդարձնի ոչ առաջնահերթ ազգային մակարդակում: – Շարունակվող լարված հարաբերություններ հարևան երկրների հետ, ինչը բացասաբար է ազդում որոշ տարածքների և, հատկապես, սահմանամերձ գոտու զարգացման հեռանկարների վրա: – ՏՋ քաղաքականության շուրջ շահագրգիռ կողմերին (ճյուղային նախարարություններին և այլոց) հավաքելու և միջոցները կուտակելու անկարողություն, ինչը հանգեցնում է չափազանց ցրված և չկենտրոնացված միջամտությունների: – Տեղական ու տարածաշրջանային դերակատարներին առավել լայն մասշտաբով, համապարփակ, համատեղ մշակվող ու իրականացվող ծրագրերում ներգրավելու անկարողություն, ինչը նշանակալի տարածքային ազդեցություն կարող է ունենալ: – Ապակենտրոնացման բարեփոխումների դանդաղ ընթացքը և մասնատված ու անարդյունավետ տարածքային կառավարման կառուցվածքի պահպանությունը, ինչպես նաև տարածքային ու տեղական զարգացման գործընթացում զգալի կախվածությունը արտաքին ֆինանսավորումից (պետական բյուջեից և նվիրատուներից):

մակարդակներում:	

ՏԵՂԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Միայն տարածքային անհամաչափությունները բավարար չեն սոցիալ-տնտեսական պայմանների տարբերությունները նկարագրելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել նաև տեղական առանձնահատկությունները: Հայաստանում, տեղական մակարդակում գոյություն ունեն մի քանի տեսակի անհամաչափություններ, մասնավորապես՝ Երևանի և մնացած քաղաքների ու գյուղերի, լեռնային ու ցածրադիր գոտիների, ինչպես նաև սահմանամերձ ու ոչ սահմանամերձ համայնքների միջև:

ՏԵՂԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄՆԵՐ

Ըստ ՏԿԶՆ-ի կողմից վարվող մարզային ու համայնքային տվյալների բազայի, որում ներկայացված է աղքատության հարաբերական մակարդակը ներկայացնող համաթիվը (եկամտի, խոցելիության և մատչելիության ենթահամաթվերը)՝ արժանի են ուշադրության հետևյալ դիտարկումները.

- Աղքատությունը և աղքատության ռիսկը գյուղերում էականորեն ավելի բարձր է, քան քաղաքներում (23%-ով),
- Աղքատությունը և աղքատության ռիսկը մի փոքր ավելի բարձր է միջպետական սահմաններին մոտ գտնվող քաղաքներում, քան սահմաններից հեռու տարածքներում (4%-ով) և շատ ավելի բարձր է միջպետական սահմաններին մոտ գյուղերում (28%),
- Աղքատությունը և աղքատության ռիսկը հեռավոր գյուղերում (ամենամոտ շուկայից հեռու) էականորեն ավելի բարձր են.

ՏԵՂԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ

Այն դեպքում, երբ հարցը վերաբերում է տարածքային զարգացմանը, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ենթաազգային դերակատարների ֆինանսական կարողությունների վրա (ինքնաֆինանսավորման մակարդակը և ֆինանսական կայունությունը): Հայաստանում տեղական ինքնակառավարման մարմիններն ունեն սեփական և պետության կողմից պատվիրակված գործառույթներ: Կառավարությունը ֆինանսավորում է այդ գործառույթների իրականացումը <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի համաձայն: Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունները ներառում են ջրամատակարարումը, ներհամայնքային ճանապարհների վերանորոգումը և շահագործումը, հասարակական վայրերի լուսավորությունը, մանկապարտեզները, սոցիալական հարցերը և հանրային ծառայությունները: Տեղական ինքնակառավարման մարմիններն ունեն հարկերի հավաքագրման սահմանափակ լիազորություններ: Նրանք ստանում են միայն գույքի և հողի հարկերը, սակայն հարկերի դրույքաչափերը սահմանվում են Կառավարության կողմից:

Տարածքային և տեղական զարգացման հիմնական խոչընդոտներից մեկը տեղական ինքնակառավարման մարմինների սահմանափակ ֆինանսական ռեսուրսները են: Շատ գյուղական համայնքների սեփական եկամուտները կազմում են բյուջեի 25 տոկոսից պակաս, այս ցուցանիշի առումով քաղաքային համայնքները մի փոքր ավելի բարենպաստ վիճակում են: Մնացած հատվածը տրամադրվում է պետական բյուջեից: Սա ցույց է տալիս համայնքապետարանների գերկախվածությունը Կառավարությունից: Տեղական բյուջեների զգալի մասը ստացվում է պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման մեխանիզմների և սուբվենցիաների միջոցով: Այս միջոցների մինչև 70%-ը և երբեմն նաև ավելի մեծ մասը, ծախսվում է վարչական նպատակներով (ընթացիկ ծախսեր), շատ սահմանափակ ռեսուրսներ թողնելով զարգացման ուղղությամբ ներդրումները ֆինանսավորելու համար: Նման իրավիճակը նաև պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկայիս օրենսդրությունը չի խրախուսում համայնքային փոխառությունների շուկայի ձևավորմանը:

Տեղական իշխանություններն իրավասու են կապիտալ ծախսեր իրականացնելու ջրամատակարարման, ոռոգման, մանկապարտեզների, աղբահանության ու ջեռուցման ոլորտներում: Ակնհայտորեն, տեղական իշխանությունները գործում են սահմանափակ ենթակառուցվածքի ու զարգացման ուղղությամբ տրամադրվող ֆինանսավորման միջոցով: Այս ոլորտներում հիմնական

գործառույթները վերապահված են Կառավարությանը: Տեղական մակարդակում կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալում Կառավարության մասնաբաժինը Հայաստանում մոտ 70% է, իսկ առավել ապակենտրոնացված երկրներում համամասնորեն հակառակն է: Համայնքներն ի վիճակի չեն կապիտալ ներդրումներ ապահովել ենթակառուցվածքի ու սոցիալական ապահովության ոլորտներում, քանի որ չափազանց սահմանափակ ռեսուրսներ ունեն:

Պետական բյուջեից հատկացումները կարևոր են տեղական կառավարման համակարգի պատշաճ գործունեությունն ապահովելու տեսանկյունից, քանի որ սեփական եկամուտներն անբավարար են տարածքային ենթակառուցվածքը պահպանելու, պետական կառավարման գործառույթներն իրականացնելու և սոցիալական ու տնտեսական զարգացման ծրագրերում ներդրումներ անելու համար: Հատկացումների երկու տեսակ կա.

- համահարթեցման դոտացիա

- նպատակային սուբվենցիաներ

Առաջին տեսակի հատկացումների (համահարթեցման դոտացիաների) ընդհանուր գումարը (ներառյալ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) սահմանվում է օրենքով և կազմում է ոչ պակաս, քան տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում ՀՀ համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի 4%-ը: Երկրորդ տեսակի հատկացումը (նպատակային սուբվենցիաները) որևէ սահմանաչափ չունի, քանի որ որոշվում է կառավարության ու տեղական իշխանությունների բանակցությունների միջոցով: Պետական բյուջեից տարեկան հատկացումների ընդհանուր մասնաբաժինը կազմում է համայնքային բյուջեների մոտ 50%-ը: ՀՀ պետական բյուջեից հատկացումների բարձր մակարդակը հանդիսանում է տեղական իշխանությունների գործունեության քաղաքական և ռազմավարական վերահսկողության արդյունավետ միջոց: Գործառնական տեսանկյունից, ՀՀ օրենսդրությամբ համայնքներին վերապահված եկամուտները և ծախսերը հանգեցնում են պետական բյուջեից համայնքերի կախվածության բարձր մակարդակին, որը իր հերթին սահմանափակում է համայնքների ակտիվ մասնակցությունը համայնաքամետ ֆիսկալ քաղաքականության իրականացմանը:

Մարզերի և համայնքների միջև զգալի տարբերություններ կան ֆինանսատնտեսական կարողությունների առումով: Համայնքներին տրվող համահարթեցման դոտացիաների գումարների չափը հաշվարկվում է ըստ առանձին համայնքների բյուջեների, վերջիններս տարանջատելով՝

1. 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների.
2. 300-ից ավելի բնակիչ ունեցող համայնքների:

300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող յուրաքանչյուր համայնքի բյուջեին հատկացվող դոտացիայի գումարի չափը սահմանվում է տվյալ տարվա <<Պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով:

Դոտացիաների գումարների չափը՝ ըստ 300-ից ավելի բնակիչ ունեցող առանձին համայնքների, որոշվում է հիմք ընդունելով հետևյալ գործոնները՝

ա) համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող հողի հարկի և գույքահարկի հաշվարկային մակարդակը

բ) համայնքի բնակչության թիվը:

Սուբվենցիաները կարգավորվում են Կառավարության ընդունած որոշումներով և պայմանական բնույթ են կրում: Դրանք միտված են համայնքների միջև սոցիալական ու տնտեսական անհամաչափությունները նվազեցնելուն, և մեծամասամբ ուղղված են համայնքային սեփականության պահպանմանն ու վերականգմանը, ինչպես նաև՝ հիմնական ենթակառուցվածքներում ներդրումների իրականացմանը:

Համայնքային գործառույթների և եկամուտների ապահովման ընթացիկ կառուցվածքը ամրապնդում է համայնքների կախվածությունը պետական աջակցությունից և զգալիորեն սահմանափակում տեղական իշխանությունների մասնակցությունը տարածքային զարգացման գործընթացում:

Համայնքային եկամուտներն ու ծախսերը, 2008-2009թթ. ֆինանսական ճգնաժամի ազդեցությունից հետո, վերականգնվեցին մինչ 2010թ. և աճում են ավելի արագ, քան սղաճը: Այս իրական աճը գրեթե ամբողջությամբ արագացել է կենտրոնական բյուջեից հատկացումների հաշվին, քանի որ տեղական հարկերը աճում էին միայն աստիճանաբար: 2008-2009թթ. ճգնաժամից հետո, տեղական մակարդակում կենտրոնական ֆինանսավորման գերակայումը մեծապես ամրապնդվել է:

Աղյուսակ 10. Համայնքային եկամուտներն ու ծախսերը, 2009-2014թթ. (ՀՀ միլիոն դրամ)

	2009	2010	2011	2012	2013	2014	2009-2014 % change	2014 structure
Ընդամենը եկամուտներ	**52,582**	**84,934**	**87,342**	**95,516**	**105,802**	**114,359**	217%	100%
Հարկեր և տուրքեր	**17,561**	**18,914**	**19,551**	**20,035**	**21,122**	**23,260**	132%	20%
Գույքային հարկեր	15,217	15,836	16,214	16,298	16,927	18,610	122%	16%
Այլ	2,345	3,078	3,337	3,736	4,195	4,650	198%	4%
Այլ եկամուտներ	**5,128**	**26,466**	**25,346**	**26,682**	**29,881**	**35,460**	692%	31%
Դաշտոնական դրամաշնորհներ	**29,894**	**39,554**	**42,446**	**48,800**	**54,800**	**55,639**	186%	49%
Ծախսերը ընդամենը	**43,795**	**65,610**	**71,627**	**84,834**	**103,130**	**114,638**	262%	100%
Ընթացիկ ծախսեր	39,911	58,462	63,349	72,882	92,071	102,469	257%	89%
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	3,884	7,148	8,278	11,952	11,059	12,169		
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	9,447	24,162	25,764	24,573	23,141	27,523	291%	24%
Ոչ ֆինանասական ակտիվների իրացումից մուտքեր	-5,563	-17,015	-17,486	-12,621	-12,082	-15,354		
Համայնքների բյուջեների եկամուտների գերազանցումը ծախսերի նկատմամբ	**8,787**	**19,324**	**15,715**	**10,682**	**2,672**	**-279**	-3%	0%



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

2014թ.-ին համայնքների եկամտի ավելացումը հնարավորություն տվեց 2009թ.-ի համեմատությամբ ավելի մեծ ծախսեր կատարել կապիտալ միջոցների (ենթակառուցվածքի) ուղղությամբ՝ մինչև 191%: 2010-2014թթ. ենթակառուցվածքային ծախսերի ծավալը գրեթե անփոփոխ էր՝ թույլ դրական իրական միտումներով:

Գծանկար 25. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, 2009-2014թթ. (ՀՀ միլիոն դրամ)



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

Հայաստանի համայնքները չեն կարողանում ակտիվ զարգացման դերակատարում ունենալ՝ սահմանափակ գործառնական/թեմատիկ պարտականություններ, և անգամ ունեցած գործառույթների շրջանակում, ընդհանուր եկամուտների նկատմամբ սեփական եկամտի ծայրահեղ ցածր մակարդակի պատճառով (միջինում միայն 20%, շատ գյուղերում անգամ դրանից էլ ավելի ցածր): Ֆինանսավորման մնացած մասը ստացվում է պետական բյուջեից ստացվող աջակցությունից՝ համահարթեցման դոտացիաներից (մոտ 50%), և նպատակային սուբվենցիաներից (մոտ 30%):

Համայնքի կապիտալ ծախսերի մակարդակը (ընդհանուր ծախսերի մոտ 21%-ը) կոպիտ հաշվարկով համապատասխանում է Կառավարությունից ստացված ծրագրային հատկացումներին: Այս համամասնությունները ցույց են տալիս, որ տեղական համայնքները գործնականում ի վիճակի չեն ինքնուրույն վարելու տեղական զարգացման քաղաքականությունը և կատարել առնչվող ենթակառուցվածքային ներդրումներ:

Գծանկար 26. Համայնքների եկամուտները և ծախսերը, 2014թ.





Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ոլորտային և համախառն ցուցանիշների համաձայն՝ Հայաստանի տարածքների միջև զգալի անհամաչափություններ կան: Ցուցանիշների մեծ մասի համաձայն՝ այդ տարբերությունները շարունակական են և երբեմն ծայրահեղ:

- 2001 և 2011 թվականների մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում, Հայաստանի բնակչությունը նվազել է 4.4%-ով: Հիմնական պատճառներից մեկը տնտեսությամբ պայմանավորված արտագաղթն էր: Արտագաղթը մարզերի մեծ մասում (10-ից 9-ում) տարբեր մակարդակների էր հասնում, սակայն Վայոց Ձորում, Սյունիքում և Լոռիում նվազեց 10–15%-ով, այդ տասնամյակի ընթացքում:
- 2009-2012թթ. ընթացքում երկրում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն աճել է 28%-ով, իսկ տարածքային անհամաչափությունները նվազել: Այնուամենայնիվ, այդ աճի աղբյուրների և տարածքային անհամաչափությունների թուլացման պատճառների մի մասը կայուն չէին և կապված էին Երևանում արդյունաբերության և ծառայության ոլորտների աճի դանդաղացման հետ, մասնավորապես 2008-2009թթ. համաշխարհային ճգնաժամից հետո: 2012թ-ին **յոթ մարզերը՝ Արարատը, Գեղարքունիքը,** Տավուշը, Արմավիրը, Շիրակը, Վայոց Ձորը և Լոռին (բնակչության 46%-ը)ակնհայտորեն հետ էին մնում՝ ապահովելով մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 70%-ը (ամենացածրը Շիրակում՝ 60%, Վայոց Ձորում՝ 58% և Լոռիում՝ 53%):
- Մեկ շնչի հաշվով արտահանման ծավալները նույնպես չափազանց տարբեր են մարզերում, իսկ 2008-2014թթ. ընթացքում մարզերի միջև անհամաչափությունները խորացել են: Երկու տարիների ընթացքում Շիրակը և Տավուշը զիջում էին մնացածին:
- Մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքի արժեքները ծայրահեղ տարբեր են մարզերում, թեև 2009-2014թթ. ժամանակահատվածում այդ տարբերությունները փոքր ինչ նվազել են:

- Մարզային մակարդակում, մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի ծավալները զգալիորեն աճել են 2009-2014թթ. 2014թ-ին, չորս մարզերում (Շիրակում, Արմավիրում, Գեղարքունիքում և Տավուշում) չէին գերազանցում ազգային միջինի 50%-ը:
- Մեկ շնչի հաշվով ծառայությունների ծավալները տարբերվում են ազգային միջինից բարձր մակարդակում գտնվող Երևանի (230%), ազգային միջինի 42%-ը ապահոված երկրորդ ամենաարդյունավետ մարզի (Կոտայքի) և մնացած, ավելի ցածր մակարդակներում գտնվող, մարզերի միջև:
- 2014թ-ին տնտեսապես ակտիվ բնակչությունը Հայաստանում կազմում էր ընդհանուր բնակչության 63.1%-ը: Բնակչության տնտեսական ակտիվության մակարդակները տարբերվում են տղամարդկանց (73.2%) և կանանց (55.2%), քաղաքների (59.6%) և գյուղերի(69.2%) միջև: Մարզերից մեկում տնտեսական ակտիվության մակարդակը ծայրահեղ ցածր է (Շիրակ՝ 50%-ից ցածր): Կոտայքում և Երևանում կանանց տնտեսական ակտիվության մակարդակը ամենախնդրահարույցն է:
- Տարածքային անհամաչափությունները զբաղվածության մակարդակի տեսանկյունից նույնպես զգալի են: Երևանը, Կոտայքը, Շիրակը և Սյունիքը գտնվում են ամենածանր վիճակում, իսկ տղամարդկանց գործազրկության տեսանկյունից՝ նրանց միանում է նաև Լոռին:
- Ոչ պաշտոնական զբաղվածությունը զգալի ծավալների է հասնում բոլոր մարզերում (միջինում 50%-ի): Միայն Երևանում այն կազմում է 20%-ից ցածր: Ոչ ֆորմալ զբաղվածության նման բարձր մակարդակը՝ հատկապես մարզերում առավելապես պայմանավորված է գյուղատնտեսության ոլորտով:
- Աշխատանք ունեցողների միջին ամսական եկամտի մասով, տարբերությունը 2013 թվականին կազմել է 1.9 անգամ ամենահարուստ և ամենաաղքատ մարզերի միջև: Ամենացածր ցուցանիշներն ապահովել են Վայոց Ձորն ու Տավուշը:
- 2014թ-ին, բնակչության ծայրահեղ աղքատության տեսանկյունից, առավել անբարենպաստ վիճակում էին գտնվում Շիրակը, Լոռին, Կոտայքը և Արմավիրը, իսկ բնակչության մեջ ընդհանուր աղքատության մակարդակի տեսանկյունից՝ Շիրակը, Կոտայքը, Լոռին և Գեղարքունիքը:
- Առողջապահական ծառայությունների հասանելիության տեսանկյունից՝ Հայաստանում տարբերություններ կան, մասնավորապես՝ Երևանի և մարզերի միջև: Ավելի քիչ և խառը անհամաչափություններ կան կրթական համակարգի հասանելիության տեսանկյունից: Ընդհանուր առմամբ, հանրային ծառայությունների հասանելիությունը երկրի տարածքում անհամաչափ է:
- Նշանակալի կառուցվածքային տարբերություններ կան տարածքային մակարդակում, Երևանի և մնացած տարածքների, քաղաքային և գյուղերի, լեռնային և ցածրադիր գոտիների, սահմանամերձ (հատկապես հակամարտության գոտու) և ոչ սահմանամերձ համայնքների միջև:
- Ներկայիս ֆինանսատնտեսական և գործառնական ապակենտրոնացման սահմանափակ մակարդակը (Կառավարության համակողմանի միջամտությունը և ազդեցությունը բյուջեի միջոցով) «արդյունավետորեն» խանգարում է համայնքներին տեղական զարգացման քաղաքականության և հարակից ենթակառուցվածքային ներդրումների իրականացման ճանապարհին:

Հայաստանի տարածքային անհամաչափությունների մեծ մասը հարատև են և նշանակալի, իսկ շատերն էլ՝ սոցիալապես անընդունելի: Որոշ մարզեր ի վիճակի չեն մրցունակություն ապահովել, քանի որ առաջնորդվում են զարգացման հնացած մոդելներով, որոնց մեծ մասը հիմնված է օրվա ապրուստը վաստակելու նպատակով գյուղատնտեսական գործունեության վրա: Այս պայմաններում, նման համայնքների տնտեսական կառուցվածքի դիվերսիֆիկացիան անհրաժեշտություն է: Ակնհայտ է, որ Հայաստանին անհրաժեշտ է տարածքների վրա կենտրոնացած, տեղայնացված քաղաքականություն և ծրագրեր, որոնք կբխեն մեկ համակողմանի ու արդյունավոր տարածքային զարգացման ռազմավարությունից, որն էլ կհամապատասխանեցվի ոլորտային կարիքներին: Տարածքային զարգացման անկյունաքարերն ամրագրված են երկու հիմնական ուղղություններում՝ մարզերի մրցունակության բարձրացում և տնտեսական ու սոցիալական անհավասարությունների մեղմում:

Ավանդական գյուղատնտեսական գործունեությունից բացի, երկրում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև մրցունակության և զբաղվածության խնդիրներին՝ մարզերին հնարավորություն ու կարողություն տալով մասնակցել ներքին և արտաքին շուկաներին, ապահովել բնակչության եկամուտների ավելի բարձր մակարդակ և ֆինանսավորել պետական ծառայությունների արդիականացումը, դրանով նվազեցնելով միջոցների և բարեկեցության ծայրահեղ անհամաչափությունները: Արդյունքում, միջամտությունները կկենտրոնանան Երևանից դուրս՝

արդյունաբերական ու ծառայությունների ոլորտների զարգացման և գյուղատնտեսական արտադրանքի ծավալների ավելացման վրա: Արտադրանքի ծավալների քանակական ավելացման արդյունքում գների իջեցման ու անհրաժեշտ ագլոմերացիայի պատճառով անհրաժեշտ է խթանել խելացի բազմակենտրոն զարգացումները, տարածքային աճի բևեռների նախանշման ու տարածքային խելացի մասնագիտացվածությունների սահմանման միջոցով: Դա կպահանջի տարածքային մակարդակում երկարաժամկետ հանձնառությունների ապահովում, որոնք ուղղված կլինեն ամուր երկրորդային քաղաքային/տնտեսական աճի կենտրոնների ստեղծմանն ու զարգացման մակարդակով ամենացածր տեղերում գտնվող մարզերում համաչափության ամրապնդմանը:
Երկրից և մասնավորապես՝առավել խոցելի համայնքներից արտագաղթը կարող է նվազել միայն նոր աշխատատեղերի ստեղծման և կայունության շնորհիվ: Հատուկ ուշադրություն է պետք դարձնել խոցելի տարածքներում կանանց, ինչպես նաև քաղաքներում բնակչության զբաղվածության ապահովմանը, ներառյալ՝ աջակցությանը սոցիալական ձեռնարկություններին/աշխատանքին այն տարածքներում, որտեղ ծայրահեղ աղքատների քանակն ամենաբարձրն է:
Տարածքային զարգացման ուղղությամբ միջամտությունները պետք է նաև հաշվի առնեն տեղական մակարդակում առկա պոտենցիալը և առանձնահատկությունները ապակենտրոնացման (նաև ֆինանսատնտեսական ապակենտրոնացման) տեսանկյունից:

3. ՀԱՐԱԿԻՑ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ

Տարածքային զարգացումն իրապես բազմակողմանի քաղաքականություն է: Հայաստանում, մի շարք ոլորտային քաղաքականություններ և ծրագրեր առանձնապես կարևոր են տարածքային զարգացման համար և կարող են աստիճանաբար ինտեգրվել տեղայնացված միջոցառումներում, որոնք կհամապատասխանեցվեն կոնկրետ տարածքների պոտենցիալին ու կարիքներին:

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Ոլորտային բազմապիսի ռազմավարությունները և ծրագրերը, որոնք վերաբերում են տարածքների սոցիալ-տնտեսական զարգացմանը, կարող են համապատասխանեցվել ՏԶ մոտեցումներին՝ տարածքային ու տեղական դերակատարների կողմից նախագծված մրցունակ գործունեության աջակցության, կրթության, տնտեսության, զբաղվածության, տուրիզմի, տրանսպորտի և այլ ոլորտներում: Տարածքային զարգացման միջոցառումների ներկայիս շրջանակը սահմանափակվում է տեղական ճանապարհային ենթակառուցվածքի, նախադպրոցական, տարրական, միջնակարգ և արտադասարանային կրթության ու մշակութային ծրագրերով: Այս շրջանակը կարող է և պետք է աստիճանաբար ընդլայնվի:

Աղյուսակ11. ՏԶ միջոցառումների պոտենցիալ շրջանակը

No.	Միջոցառումների ոլորտը	Տարածքային զարգացման (առաջարկվող) բաղադրիչը
	I. Պրոդուկտիվ ներդրումներ	
1	Ընդհանուր պրոդուկտիվ ներդրումներ փոքր և միջին ձեռնարկություններում (ՓՄՁ):	Միկրո ձեռնարկություններ
2	Գիտահետազոտական ու նորարարական գործընթացներ մեծ ձեռնարկություններում:	-
3	Պրոդուկտիվ ներդրումներ մեծ, ածխածնի արտանետումների ցածր մակարդակ ունեցող, ձեռնարկություններում:	-
4	Պրոդուկտիվ ներդրումներ, որ միտված են ՏՀՏ տեխնոլոգիաների զարգացման, ՏՀՏ ապրանքների և ծառայությունների, էլեկտրոնային առևտրի ու ՏՀՏ պահանջարկի բարձրացման ոլորտներում գործող մեծ ձեռնարկությունների և ՓՄՁ-ների միջև համագործակցությանը:	-

	II. Հիմնական ծառայությունների ենթակառուցվածք և հարակից ներդրումներ	
	Էներգետիկ համակարգ	
5	Էլեկտրաէներգիա (պահեստավորում և փոխադրում):	Ցածր և միջին լարում
6	Էլեկտրաէներգիա (բաշխիչ ցանց, պահեստավորում և փոխադրում):	-
7	Բնական գազ:	Ցանցի տեղական ու տարածքային հատվածներ
8	Բնական գազ (հիմնական ցանց):	-
9	Վերականգնվող էներգետիկա՝ քամի:	Ցածր հզորություն
10	Վերականգնվող էներգետիկա՝ արև:	Ցածր հզորություն
11	Վերականգնվող էներգետիկա՝ կենսազանգված:	Ցածր հզորություն
12	Վերականգնվող էներգիայի այլ աղբյուրներ (ներառյալ հիդրոէլեկտրաէներգիա, երկրաջերմային ու ծովային) և վերականգնվող էներգիայի աղբյուրների ինտեգրում համակարգում (ներառյալ՝ պահեստավորում, էլեկտրաէներգիա – գազ և վերականգնվող ջրածնի ենթակառուցվածք):	Ցածր հզորություն
13	Հանրային ծառայությունների ենթակառուցվածքի վերանորոգում, էներգաարդյունավետության միջոցառումների, օրինակելի փորձարարական ծրագրերի և օժանդակ միջոցառումների իրականացմամբ:	Ցածր հզորություն
14	Բնակարանային ֆոնդի բարելավում էներգաարդյունավետության տեսանկյունից, օրինակելի փորձարարական ծրագրերի և օժանդակ միջոցառումների իրականացմամբ:	Ցածր հզորություն
15	Էներգիայի բաշխման խելացի համակարգերի ստեղծում միջին և ցածր լարման ցանցերում (ներառյալ՝ խելացի ցանցերի և ՏՀՏ համակարգերի ստեղծումը):	Այո
16	Բարձր արդյունավետության համակցված արտադրություն և կենտրոնացված ջեռուցում:	Այո
	Բնապահպանական ենթակառուցվածք	
17	Կենցաղային թափոնների կառավարում (ներառյալ՝ ծավալների նվազեցում, սորտավորում և վերամշակում):	Ցածր հզորություն / քիչ քանակի տնային տնտեսությունների ներգրավմամբ
18	Կենցաղային թափոնների կառավարում (ներառյալ՝մեխանիկական ու կենսաբանական մաքրում, ջերմային մաքրում, այրում և թաղում):	Ցածր հզորություն
19	Առևտրային, արդյունաբերական և վտանգավոր թափոնների կառավարում:	Ցածր հզորություն
20	Խմելու ջրամատակարարում (ջրառի, մաքրման, ամբարման և մատակարարման ենթակառուցվածք), *ոռոգումը ներառյալ:*	Ցածր հզորություն
21	Ջրային ռեսուրսների կառավարում և խմելու ջրի պահպանություն (ներառյալ՝ գետավազանային կառավարում, ջրամատակարարում, կլիմայի փոփոխության ադապտացման միջոցառումներ, թաղամասային և անհատական սպառման չափում, վճարների գանձման համակարգ և կորուստների նվազեցում):	Տեղական ու տարածքային
22	Կեղտաջրերի մաքրում:	Տեղական ու տարածքային
23	Բնապահպանական միջոցառումներ՝ ուղղված ջերմոցային գազերի արտանետման քանակների նվազեցմանը կամ վերացմանը (ներառյալ՝ մեթանի զտումն ու պահեստավորումը և կոմպոստը):	Տեղական ու տարածքային
	Տրանսպորտային ենթակառուցվածք	
24	Երկաթուղիներ (հիմնական ցանց):	-
25	Երկաթուղիներ (տեղական ու տարածքային ցանցեր):	Այո
26	Այլ երկաթուղիներ:	-
27	Երկաթուղու շարժական ակտիվներ:	Տեղական ու տարածքային
28	Ավտոմոբիլային ճանապարհներ՝ հիմնական ցանց (նոր կառուցված):	-
29	Ավտոմոբիլային ճանապարհներ՝ երկրորդային ու երրորդային ցանցեր (նոր կառուցված):	-
30	Հիմնական ճանապարհներին մոտեցնող երկրորդային ցանց և հանգույցներ (նոր	Այո

	կառուցված):	
31	Այլ հանրապետական ու մարզային նշանակության ճանապարհներ (նոր կառուցված):	Տեղական ու տարածքային
32	Տեղական նշանակության ճանապարհներ (նոր կառուցված):	Այո
33	Հիմնովի վերանորոգված ու վերակառուցված ճանապարհներ:	Տեղական ու տարածքային
34	Այլ վերակառուցված ու վերանորոգված ճանապարհներ (ավտոմոբիլային, հանրապետական, մարզային կամ համայնքային նշանակության) (ՎԶԵբ ֆինանսավորված ծրագիր):	Տեղական ու տարածքային
35	Բազմաֆունկցիոնալ տրանսպորտ (հիմնական):	-
36	Բազմաֆունկցիոնալ տրանսպորտ (այլ):	Տեղական ու տարածքային
37	Օդանավակայաններ (հիմնական):	-
38	Այլ օդանավակայաններ:	-
39	Նավակայաններ (հիմնական):	-
40	Այլ նավակայաններ:	-
41	Ջրատարներ ու նավահանգիստներ (հիմնական):	-
42	Ջրատարներ ու նավահանգիստներ (տեղական ու տարածքային):	-
	Կայուն տրանսպորտ	
43	Մաքուր քաղաքային տրանսպորտի ենթակառուցվածք և դրա զարգացում (ներառյալ՝ սարքավորումը և շարժակարգերը):	Տեղական ու տարածքային
44	Խելացի տրանսպորտային ցանց (ներառյալ՝ պահանջարկի կառավարում, վճարների համակարգեր, ՏՏ մոնիտորինգ, հսկողություն և տեղեկատվական համակարգեր)	Տեղական ու տարածքային
	Տեղեկատվության ու հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) ենթակառուցվածք	
45	ՏՀՏ՝ հիմնական/մայր ցանց	-
46	ՏՀՏ՝ բարձր արագության լայնաշերտ ցանց (հասանելիություն/տեղական ցանց >/= 30 Մգբվ)	Տեղական ու տարածքային
47	ՏՀՏ՝ գերարագ լայնաշերտ ցանց (հասանելիություն/տեղական ցանց >/=100 Մգբվ)	-
48	ՏՀՏ՝ ՏՀՏ ենթակառուցվածքի այլ տեսակներ /լայն ծածկույթով համակարգչային ռեսուրսներ/սարքավորում (ներառյալ՝ էլեկտրոնային ենթակառուցվածք, տվյալների կենտրոններ և տվիչներ, ինչպես նաև համակցում այլ ենթակառուցվածքների, օրինակ՝ գիտահետազոտական, բնապահպանական ու սոցիալական հաստատությունների հետ):	Տեղական ու տարածքային
	III. Սոցիալական, առողջապահական և կրթական ենթակառուցվածքներ, համապատասխան ներդրումներ	
49	Երրորդ մակարդակի կրթության ենթակառուցվածքը (ներառյալ՝ հետբուհական կրթությունը):	Տարածքային
50	Միջին մասնագիտական կրթության և ուսուցման ենթակառուցվածքը:	Տեղական ու տարածքային
51	**Դպրոցական կրթության ենթակառուցվածքը (միջնակարգ կրթություն), որից**	
52	Մանկական կրթություն և խնամք (5-6 տարեկանների):	Այո
53	**Առողջապահական ենթակառուցվածք**	
54	**Բնակարանային ֆոնդ**	
55	**Այլ սոցիալական ենթակառուցվածք, որը նպաստում է տարածքային ու տեղական զարգացմանը**	
	IV. Ներքին պոտենցիալի զարգացում	
	Գիտական հետազոտություններ, զարգացում և նորարարություն	
56	Ներդրումներ ՓՄՁ-ների ենթակառուցվածքների, կարողությունների ու սարքավորման ուղղությամբ, ինչը ուղղակիորեն կապված է գիտական	Միկրո ձեռնարկություններ

	հետազոտությունների և նորարարության հետ:	
57	Ներդրումներ մեծ ձեռնարկությունների ենթակառուցվածքների, կարողությունների ու սարքավորման ուղղությամբ, ինչը ուղղակիորեն կապված է գիտական հետազոտությունների և նորարարության հետ:	-
58	Գիտական հետազոտությունների և նորարարության ենթակառուցվածք (պետական):	Տեղական ու տարածքային
59	Գիտական հետազոտությունների և նորարարության ենթակառուցվածք (մասնավոր, ներառյալ տեխնոպարկերը):	Տեղական ու տարածքային
60	Գիտական հետազոտությունների և նորարարության խթանման գործողություններ պետական հետազոտական ու գերազանցության կենտրոններում, համագործակցություն:	Տեղական ու տարածքային
61	Գիտական հետազոտությունների և նորարարության խթանման գործողություններ մասնավոր հետազոտական ու գերազանցության կենտրոններում, համագործակցություն:	Տեղական ու տարածքային
62	Տեխնոլոգիաների փոխանցում և ԲՈՒՀ-ձեռնարկություններ համագործակցություն, որից առաջին հերթին օգուտ են քաղում ՓՄՁ-ները:	Տեղական ու տարածքային (համալսարաններ)
63	Ոլորտային աջակցություն և բիզնես ցանցեր, որոնցից առաջին հերթին օգուտ են քաղում ՓՄՁ-ները:	Տեղական ու տարածքային (ցանցեր)
64	ՓՄՁ ոլորտում գիտահետազոտական ու նորարարական աշխատանք (ներառյալ՝ երաշխավորագրման մեխանիզմներ, վերամշակում, նախագծում, ծառայություններ և սոցիալական նորարարություն)	Միկրո ձեռնարկություններ
65	Գիտական հետազոտության ու նորարարության ենթակառուցվածք, գործընթացներ, ձեռնարկությունների միջև տեխնոլոգիաների փոխանցում և համագործակցություն՝ կենտրոնանալով ածխածնի ցածր արտանետմամբ տնտեսությունների և կլիմայի փոփոխությունների նկատմամբ դիմադրողականության վրա:	Միկրո ձեռնարկություններ
	Գործարարության զարգացում	
66	ՓՄՁ-ների և ՓՄՁ-ների խմբերի աջակցության առաջադեմ համակարգեր (ներառյալ՝ կառավարման, շուկայավարման ու պլանավորման ծառայություններ):	Միկրո ձեռնարկություններ
67	ՓՄՁ գործարարության զարգացում, աջակցություն ձեռնարկատիրությանն ու սկսնակներին (ներառյալ՝ աջակցությունը կորպորատիվ սկսնակներին):	Միկրո ձեռնարկություններ, մարզային ԲՈՒՀ-երի սկսնակ ձեռնարկություններ
68	ՓՄՁ ոլորտի էներգաարդյունավետության և ցուցադրական ծրագրեր, օժանդակ մեխանիզմներ:	Միկրո ձեռնարկություններ
69	Աջակցություն ՓՄՁ-ների շրջանում էկոլոգիապես անվտանգ արտադրական գործընթացներին և ռեսուրսների արդյունավետ օգագործմանը:	Միկրո ձեռնարկություններ
70	Էներգաարդյունավետության խթանում մեծ ձեռնարկություններում:	-
71	Ածխածնի արտանետումների ցածր մակարդակ ապահովող ծառայությունների տրամադրման ու կլիմայի փոփոխություններին ադապտացման ոլորտում մասնագիտացված ձեռնարկությունների խթանում և զարգացում (ներառյալ՝ աջակցությունը նման ծառայություններին):	Միկրո ձեռնարկություններ
72	Գործարարական ենթակառուցվածք ՓՄՁ-ների համար (ներառյալ՝ արդյունաբերական պարկերը և տարածքները), այսինքն՝ Գյումրի և Վանաձոր քաղաքների տեխնոպարկերի ստեղծման ծրագիր:	Միկրո ձեռնարկություններ
73	Աջակցություն սոցիալական ձեռնարկություններին (ՓՄՁ-ներին):	Միկրո ձեռնարկություններ
74	ՓՄՁ-ների շրջանում կոմերցիոն տուրիզմի ակտիվների ստեղծում և զարգացում:	Միկրո ձեռնարկություններ
75	ՓՄՁ-ների շրջանում և նրանց համար կոմերցիոն տուրիզմի զարգացում և խթանում:	Միկրո ձեռնարկություններ
76	Մշակութային ու ստեղծարարական ակտիվների ստեղծում ու խթանում ՓՄՁ-ների շրջանում:	Միկրո ձեռնարկություններ
77	Մշակութային ու ստեղծարարական ակտիվների ստեղծում ու խթանում ՓՄՁ-ների համար:	Միկրո ձեռնարկություններ
	Տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաներ (ՏՀՏ)՝ պահանջարկի խթանում, համակարգչային ծրագրեր և ծառայություններ	

78	Էլեկտրոնային կառավարման ծառայություններ և ծրագրեր (ներառյալ՝ էլ. գնումներ, պետական կառավարման համակարգի բարեփոխումների իրականացմանն ուղղված ՏՀՏ միջոցներ, կիբեր անվտանգություն, կորպորատիվ և անձնական տվյալների պահպանության միջոցներ, էլ. արդարադատություն և էլ. ժողովրդավարություն):	Տեղական իշխանություններ
79	Պետական ոլորտի տեղեկատվության հասանելիություն (ներառյալ՝ էլ. մշակույթ, էլ. շտեմարաններ և էլ. տուրիզմ):	Տեղական իշխանություններ
80	էլ. ներառման, էլ. հասանելիության, էլ. ուսուցման և էլ. կրթության ծրագրեր և ծառայություններ, թվային գրագիտություն:	Տեղական ու տարածքային
81	Առողջ ծերության ու էլ. առողջապահության ՏՀՏ լուծումներ ու ծրագրեր (ներառյալ՝ էլ. խնամք ու առաջին անհրաժեշտությունների ապահովում):	-
82	ՏՀՏ ծառայություններ և ծրագրեր ՓՄՁ-ների համար (ներառյալ՝ էլ. առևտուր, էլ. բիզնես և ցանցային բիզնես գործընթացներ), կենսունակ լաբորատորիաներ, ցանցային ձեռնարկատերեր և ՏՀՏ սկսնակներ):	Միկրո ձեռնարկություններ
	Բնապահպանություն	
83	Օդի որակի միջոցառումներ, որոնցից.	Տեղական ու տարածքային
84	Աղտոտման համալիր կանխարգելում և հսկողություն (ԱՀԿՀ):	Տեղական ու տարածքային
85	Կենսաբազմազանության պահպանություն ու զարգացում, բնության պահպանություն ու կանաչ ենթակառուցվածք:	Տեղական ու տարածքային
86	« Natura 2000» տարածքների պահպանություն, վերականգնում և կայուն օգտագործում:	Տեղական ու տարածքային
87	Կլիմայի փոփոխությանը ադապտացման միջոցառումներ և կլիմային առնչվող ռիսկերի կառավարում, օրինակ՝ էրոզիա, հրդեհներ, հեղեղումներ, փոթորիկներ ու երաշտ, ներառյալ՝ իրազեկվածության բարձրացում, քաղաքացիական պաշտպանություն, աղետների կառավարման համակարգեր ու ենթակառուցվածք:	Տեղական ու տարածքային
88	Ռիսկերի կանխարգելում և կլիմային չվերաբերող բնական ռիսկերի (օր,՝ երկրաշարժների), ինչպես նաև մարդու գործունեությանը վերաբերող ռիսկերի (օր.՝ տեխնածին աղետների) կառավարում, ներառյալ՝ իրազեկվածության բարձրացումը, քաղաքացիական պաշտպանությունն ու աղետների կառավարման համակարգերը և ենթակառուցվածքը:	Տեղական ու տարածքային
89	Արդյունաբերական տարածքների ու աղտոտված հողերի վերականգնում:	Տեղական ու տարածքային
90	Հեծանվային ուղիներ և արշավների արահետներ:	Տեղական ու տարածքային
91	Բնական տարածքների տուրիստական պոտենցիալի զարգացում ու խթանում:	Տեղական ու տարածքային
92	Պետական միջոց հանդիսացող տուրիստական ակտիվների պահպանութուն, զարգացում ու խթանում:	Տեղական ու տարածքային
93	Պետական տուրիստական ծառայությունների զարգացում ու խթանում:	Տեղական ու տարածքային
94	Պատմամշակութային ժառանգության պահպանություն, զարգացում ու խթանում:	Տեղական ու տարածքային
95	Պատմամշակութային ժառանգության ոլորտում ծառայությունների մատչելիության ապահովում:	Տեղական ու տարածքային
	Այլ	
96	Պետական կառավարման ու պետական ծառայությունների ինստիտուցիոնալ կարողություններ:	Տեղական իշխանություններ
97	Գյուղական ու քաղաքային բնակավայրերի համայնքների նախաձեռնած զարգացման միջոցառումներ:	Այո
98	Սահմանամերձ համայնքներ. հասանելիության ցածր մակարդակի և տարածքային մասատվածության պատճառով՝ բոլոր լրացուցիչ ծախսերի հատուցում:	Հակամարտության գոտու համայնքներ
99	Սահմանամերձ համայնքներ. հատուկ գործողություններ, որոնց նպատակն է հատուցել շուկայի չափերի հետևանքով առաջացած լրացուցիչ ծախսերը:	Հակամարտության գոտու համայնքներ
100	Սահմանամերձ համայնքներ. կլիմայական պայմանների ու աջակցության տրամադրման դժվարությունների պատճառով՝ աջակցություն լրացուցիչ ծախսերի հատուցմանը:	Ծովի մակադակից 2000 մետրից բարձր գտնվող համայնքներ
101	-	

	V. Կայուն ու որակյալ աշխատատեղերի ստեղծում և աջակցություն՝ աշխատուժի շարժունակության բարելավմանը	
102	Աշխատանքի հասանելիություն աշխատանք փնտրողների և պարապուրդի մեջ գտնվող անձանց համար, ներառյալ՝ երկարաժամկետ գործազուրկներին և աշխատաշուկաներից հեռու գտնվող անձանց, մասնավորապես, տեղական աշխատատեղերի բացման ու աշխատուժի շարժունակության բարելավման միջոցով: Դա նաև ընդգրկում է.	
103	Աշխատանք չունեցող, կրթական կամ վերապատրաստման դասընթացներ անցած երիտասարդների կայուն ինտեգրում աշխատաշուկաներում, ներառյալ այն երիտասարդներին, ովքեր գտնվում են սոցիալական մարգինալացման վտանգի տակ կամ ներկայացնում են մարգինալացված համայնքներ:	Այո
104	Ինքնազբաղվածություն, ձեռնարկատիրություն և բիզնեսների ստեղծում, ներառյալ նորարական միկրո, փոքր ու միջին ձեռնարկությունները:	Միկրո ձեռնարկություններ
105	Հավասարություն կանանց և տղամարդկանց միջև բոլոր ոլորտներում, ներառյալ աշխատանքի հասանելիության, կարիերային զարգացման, աշխատանքի ու անձնական կյանքի համատեղման և հավասար ծավալի աշխատանքի դիմաց համաչափ վարձատրության տեսանկյուններից:	Միկրո ձեռնարկություններ
106	Աշխատակիցների, ձեռնարկությունների ու ձեռնարկատերերի ադապտացում փոփոխություններին:	Միկրո ձեռնարկություններ
107	Ակտիվ և առողջ ծերացում:	Տեղական ու տարածքային նախաձեռնություններ
108	Աշխատաշուկայի կառույցների արդիականացում, ինչպիսիք են՝ մասնավոր ու պետական զբաղվածության ծառայությունները, աշխատաշուկայի կարիքների բավարարում, ներառյալ՝ աշխատուժի միջպետական շարժունակության ապահովումը և համապատասխան շահագրգիռ կողմերի միջև ավելի խորը համագործակցության խթանումը:	Միկրո ձեռնարկություններ (աշխատատեղեր)
	VI. Սոցիալական ներառման խթանում, պայքար աղքատության ու խտրականության բոլոր ձևերի դեմ	
109	Ակտիվ ներառում, նպատակ ունենալով խթանել հավասար հնարավորություններ ու ակտիվ մասնակցություն և բարելավել աշխատանքի հնարավորությունների հասանելիությունը:	Տեղական ու տարածքային
110	Մարգինալացված համայնքների ու փոքրամասնությունների սոցիալ-տնտեսական ինտեգրում:	Տեղական ու տարածքային
111	Պայքար խտրականության բոլոր ձևերի դեմ և հավասար հնարավորությունների խթանում:	Տեղական ու տարածքային
112	Մատչելի, կայուն ու բարձր որակի ծառայությունների հասանելիության բարելավում, ներառյալ՝ ընդհանուր առողջապահական ու սոցիալական ապահովության ծառայությունները:	Տեղական ու տարածքային
113	Սոցիալական ձեռնարկատիրության խթանում և միջին մասնագիտական կրթությամբ անձանց ինտոգրում սոցիալական ձեռնարկություններում ու սոցիալական ու համերաշխության խթանման տնտեսություններում՝ զբաղվածության հասանելիությունը բարելավելու նպատակով:	Տեղական ու տարածքային
114	Մարզերում համայնքների կողմից նախաձեռնած տեղական զարգացման ռազմավարություններ:	Այո
	VII. Ներդրումներ կրթության, վերապատրաստման ու միջին մասնագիտական ուսուցման ոլորտներում՝ հմտությունների ստեղծման ու շարունակական կրթության ապահովման նպատակներով:	
115	Դպրոցը վաղ լքելու հավանականության նվազեցումն ու կանխարգելումը, բարձր որակի նախադպրոցական, տարրական ու միջնակարգ կրթության հասանելիության ու մատչելիության ապահովումը, ներառյալ՝ ֆորմալ, ոչ ֆորմալ ու արտադասարանային ուսուցման տարբերակները, որոնց նպատակն է ապահովել ինտեգրումը կրթական ու վերապատրաստման ոլորտներում:	Տեղական ու տարածքային
116	Երրորդ մակարդակի ու համարժեք կրթության որակի և արդյունավետության բարելավում՝ նպատակ ունենալով բարելավել մասնակցությունն ու առաջադիմությունը, մասնավորապես խոցելի խմբերի համար:	Տեղական ու տարածքային
117	Շարունակական կրթության հավասար հնարավորությունների ապահովում բոլոր ֆորմալ, ոչ ֆորմալ ու արտադասարանային տիրույթներում՝ բարելավելով աշխատողների գիտելիքը, հմտությունները և ձեռնհասությունը և խթանելով ուսուցանման ճկուն միջոցները, մասնագիտական աճի ուղղորդման ու ստացված կարողությունների հավաստիացմամբ:	Տեղական ու տարածքային

118	Կրթական ու վերապատրաստման համակարգերի համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին, ինչը կհեշտացնի անցումը կրթությունից աշխատանքի և կամրապնդի միջին մասնագիտական ուսուցման որակը և համակարգը՝ ներառելով հմտությունների պլանավորման մեխանիզմներ, կրթական ծրագրերի տեղայնացում ու աշխատանքային ուսուցման համակարգերի ստեղծում, որոնք կընդգրկեն երկու մակարդակից բաղկացած կրթական ծրագրեր ու ուսուցանման հնարավորություններ:	Տեղական ու տարածքային
	VIII. Իշխանությունների և շահագրգիռ կառույցների ինստիտուցիոնալ կարողությունների ընդլայնում և պետական կառավարման արդյունավետություն	
119	Ներդրումներ ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդման, պետական կառավարման արդյունավետության ու պետական ծառայությունների բարելավման ուղղությամբ ազգային, տարածքային ու տեղական մակարդակներում՝ նպատակ ունենալով բարեփոխել, կարգավորել ու ավելի լավ կառավարել համակարգը:	Տեղական իշխանություններ
120	Կարողությունների ամրապնդում բոլոր շահագրգիռ կողմերի համար, որոնք ապահովում են ուսուցման, շարունակական կրթության, վերապատրաստման ու զբաղվածության հնարավորությունները և ստեղծում սոցիալական քաղաքականություն, որը կընդգրկի ոլորտային ու տարածքային համաձայնություններ և կապահովի բարեփոխումների իրականացումը ազգային, տարածքային ու տեղական մակարդակներում:	Տեղական ու տարածքային
	IX. Խորհրդատվական աջակցություն	
121	Նախապատրաստում, իրականացում, մոնիտորինգ և ստուգում:	Տեղական ու տարածքային
122	Գնահատում և ուսումնասիրություններ:	Տեղական ու տարածքային
123	Տեղեկատվություն և հաղորդակցում:	Տեղական ու տարածքային

Աղբյուրը՝ ԵՄ ծրագրային հաշվետվությունների վերլուծություն http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:32014R0215&rid=1

Վերը նշվածի համաձայն՝ ՏԶՌ գործունեության շրջանակը չափազանց լայն է և վերաբերում է պետական գրեթե բոլոր ռազմավարություններին: Կարևոր է այն ընկալումը, որ տարածքային զարգացումը չի սահմանափակվում պարզապես ենթակառուցվածքով և չպետք է դիտարկվի որպես մի խնդիր, որը կարող է լուծվել տեղական իշխանությունների մասնատված ու սահմանափակ լիազորությունների իրականացման միջոցով: Ակնկալվում է, որ ՏԶ քաղաքականության շրջանակներում իրականացված միջոցառումներն, ի վերջո, կընդգրկեն ստորև ներկայացված ոլորտային ուղղությունները.

- պրոդուկտիվ ներդրումներ միկրո ձեռնարկություններում,
- ենթակառուցվածք, որը կապահովի հիմնական ծառայություններ ու հարակից ներդրումներ. տեղական ու տարածքային մակարդակներում (ցածր/միջին լարման էներգետիկ ենթակառուցվածք, նեղ մասշտաբի բնապահպանական ենթակառուցվածք, տեղական ու տարածքային տրանսպորտային ենթակառուցվածք, տեղական ու տարածքային ՏՀՏ ենթակառուցվածք),
- սոցիալական, առողջապահական ու կրթական ենթակառուցվածք ու հարակից ներդրումներ. տեղական ու տարածքային կրթություն, առողջապահական ծառայություններ ու բնակարանային ֆոնդ,
- ներքին պոտենցիալի զարգացում. գիտական հետազոտություն ու ստեղծարարություն (տեղական ու տարածքային, միկրո ձեռնարկություններին վերաբերող, գործարարության ոլորտի զարգացում (միկրո ձեռնարկություններ), տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) պահանջարկի ձևավորում, ծրագրեր ու ծառայություններ տեղական իշխանությունների համար, բնապահպանություն (տեղական ու տարածքային մակարդակներում),
- կայուն և որակյալ աշխատատեղերի խթանում և աջակցություն աշխատուժի շարժունակությանը՝ տեղական ու տարածքային, ինչպես նաև միկրո ձեռնարկություններին վերաբերող միջոցառումներ,

- սոցիալական ներառման խթանում, պայքար աղքատության ու խտրականության բոլոր ձևերի դեմ՝ տեղական ու տարածքային միջոցառումներ,
- ներդրումներ կրթության, վերապատրաստման ու միջին մասնագիտական ուսուցման ոլորտներում՝ հմտությունների ձևավորման ու շարունակական կրթության ապահովման նպատակներով. տեղական ու տարածքային միջոցառումներ,
- պետական կառույցների և շահագրգիռ կողմերի ինստիտուցիոնալ կարողությունների ընդլայնում և պետական կառավարման արդյունավետություն. տեղական իշխանություններ,
- խորհրդատվական աջակցություն՝ տեղական ու տարածքային մասշտաբի միջոցառումներ:

ՏԶ պետական ծրագրերի փաթեթն ընդգրկում է Համաշխարհային բանկի 30 միլիոն ԱՄՆ դոլարի չափով վարկ. 16 միլիոն ԱՄՆ դոլար տեղական/միկրո սոցիալական ենթակառուցվածքին և ավելի քան 10 միլիոն ԱՄՆ դոլար միջհամայնքային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերին (նոր տեսակի միջոցառումներ՝ ՏԶՀ փոխակերպման ռազմավարության համաձայն), իսկ մնացած գումարները կուղղվեն կարողությունների ամրապնդմանն ու գործառնական ծախսերին:

ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Փորձարակական տարածքային ծրագրերի դրամաշնորհների գործիքին Եվրամիությունը տրամադրել է 7 միլիոն եվրո, որը միտված է մեծածավալ ու համակողմանի (ենթակառուցվածքային ու ոչ ենթակառուցվածքային) տարածքային ծրագրերի իրականացմանը (0.5-1.5 միլիոն եվրոյի դրամաշնորհների չափով), ինչը կհանգեցնի տարածքային մակարդակում աշխատատեղերի բացմանն ու տնտեսական հնարավորությունների ստեղծմանը: Ակնկալվում է, որ այդ դրամաշնորհային գործիքը կիրականացվի 2016-2018թթ. ժամանակահատվածում: ԵՄ-ը նաև կապահովի խորհրդատվական աջակցություն՝ որի նպատակն է աջակցել դրամաշնորհային գործիքի մշակմանն ու իրականացմանը, մասնավորապես նաև ՏԶ քաղաքականության ու ռազմավարության ոլորտներում: Այս բաղադրիչները Կառավարությանը հնարավորություն կտան առաջիկայում օգտվել ԵՄ բյուջետային աջակցության ծրագրից:

Համաշխարհային բանկի վարկի առկայությամբ՝ 3 միլիոն եվրո կտրամադրվի Շվեյցարական զարգացման ու համագործակցության գրասենյակի կողմից Սյունիքում և Վայոց Ձորում դրամաշնորհային ՏԶ ծրագրեր իրականացնելու համար: Եվս 0.3 միլիոն եվրո կտրամադրվի ՏԶՀ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման համար: Այլ նվիրատուները, ԱՄՆ ՄԶԳ-ն և ԳՄՀ-ն, նույնպես պլանավորում են առաջիկայում աջակցություն տրամադրել միջհամայնքային ծրագրերի իրականացմանը (մոտ 7 միլիոն եվրո):

ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՄԻԱՎՈՐՈՒՄ

Նախատեսվում է համապատասխան բաղադրիչներով համակարգել այն բոլոր ոլորտային քաղաքականությունները, որոնք կվերաբերեն տարածքային կառավարմանը: Այդ բաղադրիչները հետագայում կմիավորվեն տարածքային զարգացման մեկ մոդելում, որը կաջակցի տեղական ու տարածքային կազմակերպությունների կողմից մեծ մասամբ մրցունակության զարգացմանն ուղղված գործունեությանը: Դա կբացահայտի այդ դերակատարների ներքին պոտենցիալը: Նվիրատուների աջակցությունը միջնաժամկետ հատվածում պետք է անցում կատարի ծրագրերից դեպի ոլորտային բյուջետային աջակցություն:

Միջազգային նվիրատուների և վարկատու կազմակերպությունների կողմից ծրագրերի տեսակների ու գործիքների համադրում՝ միկրո, միջհամայնքային և միջմարզային մակարդակներում, ինչը, թվում է, թե համապատասխանում է տարածքային կարիքներին ու տեղական առանձնահատկություններին և միտված է տարածքային զարգացման համատեքստում այդքան պահանջված ապակենտրոնացման ապահովմանը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Տարածքային զարգացման միջոցառումների ներկայիս շրջանակը սահմանափակվում է տեղական ճանապարհային ենթակառուցվածքով, նախադպրոցական, տարրական ու միջնակարգ կրթական հաստատություններով, արտադասարանային կրթության ու մշակութային ծրագրերով: Հիմնական ենթակառուցվածքի բարելավումը բավարար չէ, քանի որ տարածքներում անհրաժեշտ է ստեղծել աշխատատեղեր ու տնտեսական հնարավորություններ՝ օգտագործելով վերջիններիս զարգացման ներուժը:

Նվիրատուները ցանկանում են շարունակել աջակցությունը տարածքային զարգացման ոլորտում և հետաքրքրված են ծրագրային միջոցառումներից անցում կատարել դեպի բյուջետային աջակցության մեխանիզմ:

Տարածքային զարգացման քաղաքականության շրջանակներում իրականացվող միջոցառումները պետք է ընդգրկեն ընտրված, նախարարությունների միջև փոխհամաձայնեցված, սակայն միաժամանակ լայնամասշտաբ ուղղություններ, որոնք են.

- պրոդուկտիվ ներդրումներ միկրո ձեռնարկություններում,
- ենթակառուցվածք, որը կապահովի հիմնական ծառայություններ ու հարակից ներդրումներ. տեղական ու տարածքային մակարդակներում (ցածր/միջին լարման էներգետիկ ենթակառուցվածք, նեղ մասշտաբի բնապահպանական ենթակառուցվածք, տեղական ու տարածքային տրանսպորտային ենթակառուցվածք, տեղական ու տարածքային ՏՀՏ ենթակառուցվածք),
- սոցիալական, առողջապահական ու կրթական ենթակառուցվածք ու հարակից ներդրումներ. տեղական ու տարածքային կրթություն, առողջապահական ծառայություններ ու բնակարանային ֆոնդ,
- ներքին պոտենցիալի զարգացում. գիտական հետազոտություն ու ստեղծարարություն (տեղական ու տարածքային, միկրո ձեռնարկություններին վերաբերող, գործարարության ոլորտի զարգացում (միկրո ձեռնարկություններ), տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) պահանջարկի ձևավորում, ծրագրեր ու ծառայություններ տեղական իշխանությունների համար, բնապահպանություն (տեղական ու տարածքային մակարդակներում),
- կայուն և որակյալ աշխատատեղերի խթանում և աջակցություն աշխատուժի շարժունակությանը՝ տեղական ու տարածքային, ինչպես նաև միկրո ձեռնարկություններին վերաբերող միջոցառումներ,
- սոցիալական ներառման խթանում, պայքար աղքատության ու խտրականության բոլոր ձևերի դեմ՝ տեղական ու տարածքային միջոցառումներ,
- ներդրումներ կրթության, վերապատրաստման ու միջին մասնագիտական ուսուցման ոլորտներում՝ հմտությունների ձևավորման ու շարունակական կրթության ապահովման նպատակներով տեղական ու տարածքային միջոցառումներ,
- պետական կառույցների և շահագրգիռ կողմերի ինստիտուցիոնալ կարողությունների ընդլայնում և պետական կառավարման արդյունավետություն տեղական իշխանություններ,
- խորհրդատվական աջակցություն՝ տեղական ու տարածքային մասշտաբի միջոցառումներ:

Միջգերատեսչական սերտ համակարգումը և սույն փաստաթղթով ամրագրված ռազմավարական ուղղությունների պահպանությունը կնպաստեն, որ տարածքային զարգացման գործընթացն ավելի մեծ օգուտներ քաղի նվիրատուների և այլ գործընկերների տրամադրած բյուջետային աջակցությունից:

4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ

Տարածքային զարգացումը պետական քաղաքականության համեմատաբար ժամանակակից ճյուղ է, որը հանրահայտ դարձավ 90-ական թվականների արդյունաբերական վերելքից հետո: Այն կայուն տեղ զբաղեցրեց եվրոպական ինտեգրման համատեքստում 80-ական թվականների վերջից՝ միջերկրածովյան ընդլայնումից հետո: Իր էվոլուցիայի ամբողջ ընթացքում այդ քաղաքականությունն ամրապնդվում էր իրականացման փորձով և ԵՄ-ում ու դրա սահմաններից դուրս փոփոխվող սոցիալական ու տնտեսական համատեքստերում:

Ավանդաբար, ՏՋ քաղաքականությունն առավել կենտրոնանում էր անմիջական բաշխվածության վրա, որի արդյունքում դրամաշնորհային փաթեթներն ուղղվում էին առավել թույլ զարգացած տարածքներ: Վերջերս, ուշադրությունը դարձվեց բոլոր մարզերում երկարաժամկետ ինտեգրման մոտեցումներին՝ առավել կենտրոնացված միջոցառումներով: Տարածքային զարգացումն այսօր դիտարկվում է որպես մի մեխանիզմ, որը կբացահայտի տարածքների ներուժը և այն կուղղի արդյունավետ ու բազմամակարդակ կառավարմանը: Քաղաքականության երկու հիմնական նպատակները՝ մրցունակությունն ու համաչափությունը, միշտ հաշվի կառնվեն, թեև այսօր դրանց մոտենում են այլ տեսանկյունից:

Աղյուսակ 12. Տարածքային զարգացման նոր հարացույցը

Ոլորտային մոտեցում		*Ինտեգրված մոտեցում*
Տարբեր սոցիալական և տնտեսական գործոններ, որոնք համարվում են նպաստող	*Մրցունակության նպատակ*	Ռազմավարական զարգացման ուղղություն՝ համաձայնեցված և իրականացված բոլոր ոլորտներում
Փոխհատուցող, վերաբաշխիչ մոտեցում	*Համախմբման նպատակ*	Ուշադրության կետրոնացում “խնդրահարույց տարածքների” վրա՝ մեծ փոփոխություններ ստանալու համար
Դրամաշնորհներ, և պետական օգնություն	*Գործիքներ*	Ինտեգրված ենթակառուցվածքային և ոչ ենթակառուցվածքային միջամտություններ՝ բիզնես և սոցիալական կապիտալի ակտիվացման համար
Վարչական միավորներ, գործող միավորներ՝ տարածքների Միատարրություն (միանման մոտեցում բոլոր գյուղական վայրերին)	*Տարածքային մոտեցում*	գործող միավորներ՝ միատար մոտեցում , (քաղաքներ՝ ի համեմատ շրջակա գյուղերի)
Կառավարություն և մարզային իշխանություններ	*Հիմնական դերակատարներ*	Բազմաշերտ կառավարում՝ սոցիալական դերակատարներ և բիզնես համայնքներ

Աղբյուրը՝ տվյալների վերլուծություն:

Հայաստանում, ժամանակակից ու համաչափ տարածքային զարգացման քաղաքականություն ներկայացնելու և իրականացնելու երեք հիմնական պատճառներ կան.

- մարզերի մրցունակության ընդհանուր մակարդակը (ցածր է, համեմատած նման երկրների հետ),
- տարածքային անհամաչափությունների մակարդակն ու միտումները (մեծ բացերի առկայություն, մասնավորապես մայրաքաղաքի և մարզերի միջև),

- միջազգային քաղաքականության ընթացքը (ՏԶ քաղաքականությունը արդյունավետ գործիք է, որը միտված է գլոբալ մրցունակության ու դիմադրողականության ապահովմանը):

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ-ն) ստեղծել է այն հարթակը, որում տարբեր երկրների կառավարությունները համեմատում են իրենց քաղաքականությունների իրականացման փորձերը, պատասխաններ ստանում ընդհանուր հարցերին, նախանշում լավագույն փորձը ու համակարգում ազգային ու միջազգային քաղաքականությունները: 2009թ.-ին ՏՀԶԿ-ն հրապարակեց «Ինչպե՞ս են տարածքները զարգանում» հոդվածը*: Ըստ ՏՀԶԿ տվյալների՝ աճի հնարավորություններ գոյություն ունեն բոլոր տարածքներում, և տվյալ երկրի Կառավարությունը պետք է կարողանա խթանել դրանց իրականացումը: Աճը ավելանում է, երբ մարզերը կարողանում են մոբիլիզացնել սեփական միջոցներն ու ռեսուրսները և կախվածության մեջ չեն լինում պետական աջակցությունից: Աճի խթանումը, նույնիսկ տնտեսապես թույլ զարգացած մարզերում, բխում է Կառավարության շահերից, քանի որ դա նպաստում է համախառն արդյունքի ավելացմանը՝ առանց այլ ոլորտներում աճի հնարավորությունները խափանելու:

ՏՀԶԿ-ն վերլուծել է տարածքային զարգացման հիմնական որոշիչները, ինչպես նաև այն ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է այդ զարգացումն ապահովելու համար և տարբեր մոտեցումների ամենահաջողված համադրումները, որոնք հանգեցնում են արդյունավետ տարածքային քաղաքականություններից բխող մի շարք առաջարկությունների.

- Ենթակառուցվածքի ապահովում, որպես համապարփակ տարածքային մոտեցման մի մաս. առանձին ենթակառուցվածքը որևէ ազդեցություն չունի տարածքային զարգացման վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ մարզերը կարողանում են ապահովել մարդկային բավարար կապիտալ ու նորարարություն: Այլ կերպ ասած, ենթակառուցվածքն աճի անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմանն է: Անհրաժեշտ է երեք տարի, որպեսզի ենթակառուցվածքը դրական ազդեցություն ունենա տնտեսության աճի վրա:
- Ներդրումներ մարդկային կապիտալում՝ պատշաճ կրթություն ունեցող բնակչությամբ մարզերը կկարողանան ապահովել աճ: Բարձրագույն կրթության համակարգում ներդրումները միայն երեք տարի անց դրական ազդեցություն կունենան տարածքային զարգացման վրա:

* http://www.oecd.org/dataoecd/18/45/42446805.pdf

- Գիտական հետազոտությունների, նորարարության և զարգացման խթանում. ներդրումները տարածքային զարգացման ոլորտում դրական ազդեցություն կունենան պատենտավորվող տեխնոլոգիաների ոլորտի վրա, ինչպես նաև ՏԶ ծախսերը գործարարության, պետական կառավարման ոլորտի, բարձրագույն կրթական համակարգի, մասնավոր ու հասարակական ոլորտների վրա: Այնուամենայնիվ, նորարարությունը երկարաժամկետ գործընթաց է և, ըստ երևույթին, կարող է դրական ազդեցություն ունենալ տարածքային զարգացման վրա՝ միայն հինգ տարի անց: Կապիտալի և տաղանդի ագլոմերացիայի հետ մեկտեղ՝ դրական ազդեցություն կունենա հարևան մարզերի զարգացման վրա: Սակայն, նորարարությունը կշարունակի դիտարկվել որպես տեղայնացված ուղղություն:
- Կենտրոնացում համապարփակ տարածքային քաղաքականությունների վրա՝ ագլոմերացված տնտեսությունները մասամբ պատասխանատու են տարածքային զարգացման համար:

Մարզերում առկա զարգացման աղբյուրները, ինչպես նաև մարդկային կապիտալը և նորարարությունը, ավելի կարևոր են, քան կոնկրետ տարածքի ֆիզիկական հեռավորությունը շուկաներից: Թեև շուկաներին մոտ գտնվող տարածքներն առավելություն ունեն, սակայն նրանց աճը կախված է մարդկային կապիտալից, նորարարությունից, ենթակառուցվածքից ու ագլոմերացիայից: Մարզերը ավելի արդյունավետ են աշխատում, երբ տարածքային նորարարության համակարգի դերակատարները միմյանց միջև ազատ հաղորդակցվում են: Իրապես, մեկ տարածքի հաջողությունը մեծապես կազդի հարևան տարածքների վրա՝ ապացուցելով, որ միջհամայնքային առևտուրը և միջհամայնքային կապերը կարող են դեր խաղալ տարածքային զարգացման գործընթացում:

«ՏՀԶԿ երկրներում տարածքային զարգացման քաղաքականություններ» հաշվետվության (2010թ.)* համաձայն՝ տարածքային անհամաչափության մարտահրավերներն առկա են շատ երկրներում, և վերջիններս այդ մարտահրավերին մոտենում են տարբեր տեսանկյուններից: Շատերը տարածքային քաղաքականությունն իրականացնում են հավասարության (տարածքային համաչափության) և արդյունավետության (աճի ու մրցունակության) խնդիրներից ելնելով: Մեծ ուշադրություն է այսօր դարձվում աճին ու մրցունակությանը, թեև ՏՀԶԿ մի շարք երկրներում նաև կարևորություն են տալիս մարզերի աճի ու տարածքային համաչափության միջև կապին, և այդ երկու քաղաքականությունները դիտարկում որպես սերտորեն փոխկապակցված և փոխլրացնող: «Ինքնաբուխ զարգացման» գաղափարը, որը հիմնված է տարածքային պոտենցիալ միջոցների վրա և համատեղում է սոցիալական ու բնապահպանական կայունությունը, նույնպես մեծ համբավ է ձեռք բերում:

Համաչափության տիրույթը հաճախ քննարկվում է նաև սոցիալական հեռանկարում՝ բոլոր քաղաքացիներին տրվող հավասար հնարավորությունների և մարդու իրավունքների լույսի համատեքստում: Մարդու իրավունքները որոշվում են ոչ թե եկամտի չափով, այլև կոնկրետ

* Regional Development policies in OECD countries, 2010 (http://www.oecd.org/gov/regional-policy/regionaldevelopmentpoliciesinoecdcountries.htm)

նախապայմանների բավարարմամբ, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր անձին ապրելու համար: Այս նախապայմանները ներկայացված են որպես հանրային ծառայությունների (օրինակ՝ կրթության ու տրանսպորտային ենթակառուցվածքի) հասանելիություն: Արդյունավետության տիրույթը վերաբերում է «կենսապայմանները բարելավելու» քաղաքացու հնարավորությանը: Դա հաճախ վերաբերում է հավաքական ծառայություններին, ինչպես բարձրագույն կրթությունը, բարձր որակի հասանելիությունը ու շուկայավարման ծառայությունները: Իրավունքների ու հնարավորությունների սահմանագիծը հեռու է պարզ ու տեսանելի լինելուց: Բայց, չափազանց կարևոր է այդ տարանջատումն անել, քանի որ երկու նպատակները տարբեր են քաղաքականության տեսանկյունից:

Մրցունակության և համաչափության տիրույթները փոխլրացնող են, թեև երբեմն դրանց միջև հակասություն է առաջանում, եթե խախտվում են դիրքերը: Միաժամանակ, որոշ երկրներում (օր.՝ Կանադայում) տնտեսական զարգացման քաղաքականությունը տարանջատվում է համաչափ զարգացման ծրագրերից, իսկ այլ երկրներում (օր.՝ Նորվեգիայում) գոյություն ունի «նեղ» տարածքային քաղաքականություն, որը կենտրոնանում է մրցունակության այնպիսի գործոնների վրա, ինչպես օրինակ՝ ձեռներեցությունը, նորարարությունը, ձեռնհասությունը և ցանցերը, իսկ «լայն» տարածքային քաղաքականությունը՝ հանրային ծառայությունների տրամադրման ու հարակից հասանելիության վրա:

Համաչափության ու աճի բաղադրիչներից բացի, կայուն զարգացումն աստիճանաբար ընդգրկվում է տարածքային քաղաքականության նպատակներում: Արդյունավետ կառավարումը, մասնավորապես ապակենտրոնացումն ու ռեգիոնալիզացիան, որոշ երկրներում նույնպես հանդիսանում են տարածքային քաղաքականության նպատակներ: Տարածական կառուցվածքի պահպանումը և/կամ զարգացումը (ինչպես օրինակ՝ բազմակենտրոն տարածքային միավորը, միջհամայնքային համագործակցությունը)

քաղաքականության նպատակ է այն երկրներում, որտեղ տարածքներում բնակչության նոսրացման և ծառայությունների համաչափության խնդիրներ կան (օր.՝ Ֆինլանդիա, Իռլանդիա և Նորվեգիա):

ԵՄ տարածքային քաղաքականությունը ձևավորվեց շուրջ 20 տարի առաջ, երբ գոյություն ունեցող ֆինանսական մեխանիզմները 1988թ.-ի առաջին կանոնակարգով ընդգրկվեցին այսպես կոչված ԵՄ համաչափության քաղաքականության շրջանակում: Չնայած տարածքային զարգացման անհամաչափությունների նվազեցման նպատակը կար դեռևս եվրոպական ինտեգրման գործընթացի սկզբից՝ համաչափությունը հիմնավորված և հստակ նպատակ դարձավ 1980-ական թվականների վերջին՝ խրախուսելու թույլ զարգացած տարածքների և երկրների ինտեգրումը միասնական շուկային, ինչպես նաև խթանելու ներդրումները՝ աճի և զբաղվածության ապահովման ԵՄ գերակայություններում: Համաչափությունը, որպես նպատակ, պաշտոնապես ամրագրվեց 1993թ.-ի Եվրոպական միության մասին պայմանագրով:

Համաչափության քաղաքականությունը, ընդհանուր առմամբ, տարածքների անհամաչափ զարգացման նվազեցմամբ, չօգտագործված ներուժի համախմբմամբ, ինչպես նաև զարգացմանն ուղղված ներդրումների վրա ռեսուրսների կենտրոնացմամբ՝ հնարավորություններ է ընձեռում յուրաքանչյուր քաղաքացու անկախ նրա ապրելավայրից: 2007-2013թթ. ծրագրավորման ժամանակաշրջանում ԵՄ համաչափության քաղաքականության հիմնական նպատակներն էին.

- Միավորում (խթանել զարգացման պայմանները և թույլ զարգացած անդամ-պետությունների և տարածքների իրական միավորման գործոնները).
- Տարածքային մրցունակության բարձրացում և զբաղվածության ապահովում (բարձրացնել տարածքների մրցունակությունը և գրավչությունը, ինչպես նաև ապահովել զբաղվածությունը՝ նախատեսելով տնտեսական և սոցիալական փոփոխություններ).
- Եվրոպական տարածքային համագործակցություն (ուժեղացնել համագործակցությունը՝ միջսահմանային, միջազգային և միջտարածքային մակարդակներում):

Տարածքային համաչափության վերաբերյալ տարեկան հաշվետվությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ԵՄ համաչափության քաղաքականությունն օգնել է կրճատել սոցիալական բացառումը և աղքատությունը, ինչպես նաև բարձրացնել հասարակական և պետական կառավարման արդյունավետությունը՝ մասնավորապես ենթազգային մակարդակով: Համաչափության ապահովման ծրագրերը նաև ուղղակիորեն օգնել են խթանել տարածքների միավորումը և զբաղվածությունը: Այնուամենայնիվ, չնայած նրան, որ անցած տասնամյակի ընթացքում Եվրոպական միության շրջանում նվազել են եկամուտների և զբաղվածության անհամաչափությունները, խիստ անապահովների և մնացած խմբերի միջև դեռևս կան էական տարբերություններ, որոնց նվազեցումը երկարաժամկետ ջանքեր կպահանջի: ԵՄ-ի տարածքային քաղաքականությունն այսօր նպատակաուղղված է հետևյալ խնդիրների լուծմանը՝ երկրների և նրանց տարածքների միջև տնտեսական և սոցիալական անհամաչափություններ, միասնության ապահովման և մրցունակության բարձրացման անհրաժեշտություն, աճի և զբաղվածության խթանում, ինչպես նաև այնպիսի նոր մարտահրավերների հաղթահարում, ինչպիսին են գլոբալիզացիան, կլիմայի փոփոխությունը և ծերացումը:*

Համաչափության քաղաքականության միջոցով ԵՄ-ն նաև փորձում է իրագործել 2020թ. Եվրոպայի ռազմավարության հավակնոտ նպատակները: Տնտեսական, սոցիալական և տարածքային համաչափությունը շարունակում է մնալ 2020թ. Եվրոպայի ռազմավարության հիմքում, որտեղ սահմանված են երեք միմյանց փոխլրացնող գերակայություններ.*

- Գիտահեն աճ՝ գիտելիքի և նորարարության վրա հիմնված տնտեսության զարգացում.
- Կայուն աճ՝ ռեսուրս արդյունավետ՝ ավելի կանաչ և մրցունակ տնտեսության խթանում.
- Ներառական աճ. Զբաղվածության բարձր մակարդակով տնտեսության խթանում՝ ապահովելով սոցիալական և տարածքային համաչափությունը: Ներառական աճը նշանակում է աջակցել բնակչությանը՝ զբաղվածության մակարդակի բարձրացման, կարողությունների զարգացման, աղքատության մակարդակի կրճատման, աշխատանքի շուկաների արդիականացման, վերապատրաստման և սոցիալական պաշտպանության համակարգերի միջոցով՝ այդպիսով օգնելով նախատեսել և կառավարել փոփոխությունը, ինչպես նաև կառուցել միասնական հասարակություն:

2020թ.-ի համար ԵՄ մակարդակով սահմանված են հետևյալ հինգ թիրախները, որոնք արտացոլված են նաև անդամ-պետությունների ազգային թիրախներում.

- 20-64 տարեկան բնակչության 75%-ը պետք է աշխատի.
- ԵՄ ՀՆԱ-ի 3%-ը պետք է ներդրվի տարածքային զարգացման (ՏԶ) ուղղությամբ.
- Պետք է հասնել կլիմայի/էներգետիկայի «20/20/20» թիրախներին.

* Եվրոպական հանձնաժողով՝ Տնտեսական, սոցիալական և տարածքային համաչափության վերաբերյալ վեցերորդ զեկույցը (2014թ. հուլիս)
* 2020թ. Եվրոպայի ռազմավարություն՝ խելացի, կայուն և ներառական աճի եվրոպական ռազմավարությունը (http://ec.europa.eu/eu2020/pdf)

- Դպրոցը ժամանակից շուտ թողնողները պետք է կազմեն մինչև 10%, և երիտասարդ սերնդի առնվազն 40%-ը պետք է ունենա գիտական աստիճան կամ բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ.
- 20 միլիոնով ավելի քիչ մարդ պետք է ենթարկված լինի աղքատության ռիսկերին:

Հաշվի առնելով Եվրոպայի 2020թ. ռազմավարության նպատակները՝ համաչափության քաղաքականությունը բոլոր անդամ-պետություններին և տարածքներին թույլ է տալիս ակտիվորեն հետամուտ լինել խելացի, կայուն, ներառական աճին՝ միևնույն ժամանակ, համերաշխության սկզբունքներին համապատասխան, խթանելով ծայրահեղ աղքատ տարածքների զարգացումը: Այնուամենայնիվ, խելացի, կայուն և ներառական աճի երեք գերակայությունները սպառիչ չեն. դրանք պետք է հենված լինեն ԵՄ-ի, միջազգային և ազգային մակարդակներով իրականացվող մի շարք միջոցառումների վրա: Եվրոպական հանձնաժողովն առաջարկել է յոթ կարևորագույն նախաձեռնություններ՝ յուրաքանչյուր գերակայության առաջընթացը խթանելու համար: Օրինակ՝ «Աղքատության հաղթահարման եվրոպական սկզբունքներ» առաջնահերթությունը, որ նպատակաուղղված է սոցիալական և տարածքային համաչափության ապահովմանը (օր.՝ լայնատարած աճ, զբաղվածության մակարդակի բարձրացում): Վերջին տարիներին՝ ճգնաժամից հետո ԵՄ-ի «Համաչափության վերաբերյալ զեկույցի» (2014թ.) համաձայն՝ ԵՄ-ի ընդհանուր աճը՝ ՀՆԱ-ի առումով, դանդաղել է: Ճգնաժամը վերջ դրեց այն երկար ժամանակահատվածին, որի ընթացքում նվազում էին մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի տարածքային ցուցանիշների անհամաչափությունները և գործազրկության մակարդակը: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի տարածքային ցուցանիշների անհամաչափությունները 2000 – 2008թթ.-ի ընթացքում ամեն տարի նվազում էին, սակայն 2009թ.-ին այդ միտումները դադարեցին և աճեցին 2010-2011թթ.-ին: Տարածքային գործազրկության մակարդակները զուգամիտեցին 2001-2007թթ.-ի ընթացքում, սակայն 2007-2012թթ.-ից սկսած ամեն տարի ավելացան: Սկսած 2007թ.-ից՝ ԵՄ-ի 15 պետություններում նույնպես արձանագրվեց անհամաչափությունների ավելացում՝ ինչպես մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշների, այնպես էլ տարածքային գործազրկության մակարդակների առումով: Ճգնաժամի տարածքային ազդեցությանը զուգահեռ ավելացավ գյուղական տարածքների ճկունությունը: Այդ բացասական ֆոնին լայն տարածում գտավ բարձրագույն կրթությունը և ՏԶ-ն՝ ՀՆԱ-ի առումով, չնվազեց: Նորարարությունը հիմնականում կենտրոնացած էր առաջատար տարածքներում: Նիդեռլանդների, Գերմանիայի, Իտալիայի՝ երկրորդային քաղաքներով որոշ տարածքներում դեռ անհնար էր հասնել մրցունակության ավելի բարձր մակարդակի, քան մայրաքաղաքների տարածքներում:

Վերջին տարիների ճգնաժամն ավելի է դժվարացրել Եվրոպայի 2020թ.-ի նպատակների իրագործումը՝ զբաղվածության մակարդակների նվազման և աղքատության ու սոցիալական բացառման մակարդակների ավելացման պատճառով: Մյուս կողմից, տարածքային զարգացման անհամաչափությունները խոչընդոտում են Եվրոպական միության հիմնական նպատակների և միասնության քաղաքականության իրագործումը: Չնայած որոշ անդամ-պետություններ, օր.՝ Գերմանիան և Լեհաստանը, ճգնաժամից համեմատաբար անվնաս են դուրս եկել՝ պետությունները հիմնականում ավելի շատ խնդիրներ ու ավելի քիչ պետական ռեսուրսներ կունենան: Անդամ-պետություններից շատերը, եթե ոչ բոլորը, կունենան այնպիսի խնդիրներ, ինչպիսին են գործազրկության, աղքատության և սոցիալական բացառման մակարդակների աճը, ընտանեկան եկամուտների նվազումը, որը բացասաբար կազդի սպառման ինչպես նաև ներմուծման վրա, ինչպես նաև պետական պարտքի աննախադեպ աճը և հարկաբյուջետային համախմբման անհրաժեշտությունը:

Համաչափության քաղաքականության 2010-2012թթ. ֆինանսավորումն այդ դժվար ժամանակներին կազմել է ԵՄ-ի պետական ներդրումների 21%-ի և համաչափության երկրների՝ 57%-ի

չափով: Առանց այդ ֆինանսավորման՝ ԵՄ-ի թույլ զարգացած պետություններում կտրուկ կնվազեին պետական ներդրումները:

Ելնելով վերոնշյալ իրավիճակից՝ համաչափության ընթացիկ ծրագրերում (2014-2020թթ.) հատուկ շեշտադրում է արվում աճի խթանմանը և աշխատատեղերի ստեղծմանն ուղղված ներդրումներին: Միայն կայուն և լիարժեք վերականգնումը կարող է նվազեցնել գործազրկության մակարդակները: Այդ իսկ պատճառով, Հանձնաժողովն առաջարկել է ռեսուրսները կենտրոնացնել մի քանի կարևոր բնագավառներում՝ զբաղվածություն (հատկապես երիտասարդների), վերապատրաստում և կրթություն, սոցիալական բացառում, նորարարություն և ՓՄՁ-ներ, էնեգաարդյունավետություն և ցածր ածխածնային տնտեսություն, ինչպես նաև ՏՀՏ (տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ) ենթակառուցվածքներ և թվային տնտեսության աճին ուղղված միջոցառումներ: Միասնության քաղաքականության շրջանակում տրամադրվող ֆինանսական աջակցությունը, որ մշտապես կենտրոնացած է եղել թույլ զարգացած տարածքների վրա, ընթացիկ խոչընդոտների հաղթահարման նպատակով, բարդ ենթակառուցվածքներից տեղափոխվել է գործարարության աջակցման և նորարության, զբաղվածության և սոցիալական բացառման բնագավառներ:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

Համաչափության քաղաքականության իրականացման սկզբնական շրջանում Հայաստանը տարածքային զարգացման միջազգային փորձն աստիճանաբար համապատասխանեցնում է իր կարիքներին և առանձնահատուկ իրավիճակին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

ՀՀ քաղաքականությունների և բարեփոխումների գործընթացին աջակցում են միջազգային կազմակերպությունները և երկկողմ դոնորները: Տարածքային զարգացման ոլորտում նշանակալի դեր են կատարում Եվրոպական միությունը և Համաշխարհային բանկը: Տարածքային և տեղական կառավարման ոլորտում աջակցություն տրամադրելով՝ ԱՄՆ ՄԶԳ-ն, ԳՀՄԸ-ն, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալությունը և այլ դոնորները նույնպես նպաստում են ՏԶ-ին առնչվող բարեփոխումների և փոփոխությունների իրականացմանը:

ԵՄ-ն առաջարկում է համաչափության քաղաքականության բազմակի դասեր և լուծումներ, որոնք փորձվել են զարգացման տարբեր մակարդակներ ունեցող երկրներում: ԵՄ-ը տարածքային զարգացման առումով մեծ աջակցություն է ցուցաբերում Կառավարությանը, «Աջակցություն ՀՀ ՏԿԶՆ-ին տարածքային զարգացման միջոցառումների մշակման գործում» ընթացիկ ծրագրի շրջանակում՝ տարածքային ծրագրերի պիլոտային դրամաշնորհային համակարգում համապարփակ կերպով ընդգրկելով ՏԶ քաղաքականության բոլոր բաղադրիչները (ռազմավարություն, ֆինանսավորման մեխանիզմ, կարողությունների զարգացում և այլն):

Համաշխարհային բանկը Հայաստանին աջակցում է մի քանի ոլորտներում, ներառյալ ենթակառուցվածքային ոլորտում (տրանսպորտ, էներգետիկա, ջուր, ոռոգում) հինգ ներդրումային վարկային գործառնությունները, հասարակական ոլորտներում՝ չորսը (առողջապահություն, կրթություն, սոցիալական պաշտպանություն, սոցիալական ներդրումների հիմնադրամ), պետական ոլորտում՝ երեքը (դատաիրավական համակարգի բարեփոխումներ, պետական կառավարման ոլորտի արդիականացում, հարկային վարչարարություն) և զարգացման՝ երկուսը (ՏՀՏ, գյուղատնտեսություն): 2015-2017թթ.-ին Համաշխարհային բանկը նպատակ ունի զարգացման առաջընթացը համախմբել սոցիալական պաշտպանության, կրթության և առողջապահության ոլորտներում, որտեղ կառավարման և իրականացման կարողություններն արդեն ուժեղ են:

Համաշխարհային բանկն անմիջականորեն աշխատում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) հետ և աջակցում դրա ձևափոխման գործընթացին:

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Կառավարության՝ տարածքային զարգացման ներկայիս դիրքորոշումն արտացոլված է «Հայաստանի տարածքային զարգացման հայեցակարգում», որն ընդունվել է Կառավարության կողմից 2011թ.-ի հունիսին: Նշված հայեցակարգով գնահատվում և կարևորվում է տարածքային զարգացումը, ինչպես նաև բոլոր մարզերից (վարչական շրջաններից) պահանջվում են տարածքային զարգացման

պլաններ և միջոցառումների ծրագրեր: Այդ դիրքորոշումը հետագայում արտացոլվեց նաև Հայաստանի զարգացման ռազմավարությունում (2014թ. մարտ):

Առաջիկա տարիներին Հայաստանի տարածքային զարգացման հիմնական, ընդհանուր համաձայնեցված ուղղությունը որակյալ և արդյունավետ աշխատատեղերի ստեղծման միջոցով զբաղվածության մակարդակի բարձրացումն է, որ պետք է լուծի ամենահրատապ խնդիրներից մեկը՝ գործազրկության բարձր մակարդակը, հատկապես երիտասարդների շրջանում: Այն նաև կնպաստի տարածքային համաչափ զարգացմանը, տարածքային մրցունակության բարձրացմանը, տարածքային տնտեսությունների դիվերսիֆիկացմանը, գյուղական բնակչության բարեկեցության ապահովմանը և կենսամակարդակի բարձրացմանը:

Հայաստանի Հանրապետության զարգացման ռազմավարական ծրագրում (ՀԶՌԾ) հստակ նշված է, որ զբաղվածության մակարդակի բարձրացումը կարևոր գերակայություն է: Մարդկային կապիտալի զարգացումը մեկ այլ գերակայություն է, որ պետք է հաշվի առնվի: Ակնհայտ է, որ (հատկապես աշխատանքի շուկա մտնող) մարդկային կապիտալի որակը սերտորեն կապված է ապագա տնտեսական զարգացման և աշխատանքային հնարավորությունների հետ:

Հաշվի առնելով աշխատատեղերի ստեղծման կարճաժամկետ և երկարաժամկետ հնարավորությունները, ինչպես նաև արդյունավետ տնտեսական աճի երաշխավորման հարցում դրանց մեծ կարևորությունը՝ ՀԶՌԾ-ում սահմանվում են հետևյալ գերակա ոլորտները և ուղղությունները.

- Արդյունաբերության և արտահանման խթանում. ակնկալվում է արտահանման ոլորտներում արդյունաբերության մասնաբաժնի շարունակական մեծացումը.
- Զբոսաշրջություն. զարգացման և ծառայությունների ոլորտներում մեծ ներուժ ընդլայնում.
- Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը. Հայաստանի տնտեսության գերակա ճյուղերից մեկն է, գիտելիքի վրա հիմնված տնտեսությանն անցում.
- Գյուղատնտեսության արդիականացում և գյուղական տարածքների զարգացում. (Հայաստանի ընդհանուր 1003 բնակավայրերից 954-ը գյուղերն են. երկրի բնակչության 35%-ն ապրում է գյուղերում, ուստի գյուղատնտեսությունը կարևոր դեր է խաղում): Ակնկալվում է գյուղատնտեսության ոլորտի արդյունավետության և արտահանման ծավալների աճ: Սննդի արդյունաբերությունը և գյուղատնտեսական արտադրանքների մշակումն արտահանման ներուժ ունեցող տնտեսության ճյուղերից է.
- ՓՄՁ-ների հիմնում և նրանց արդյունավետ գործունեության երաշխավորում (հատկապես վերամշակող ընկերությունները, շինարարական ծառայությունները, անհատական ծառայությունները): ՓՄՁ-ների հիմնադրման և տնտեսության վերոնշյալ ոլորտներում նրանց հաջող գործունեության խթանումը Կառավարության տնտեսական քաղաքականության գերակայություններից մեկն է: ՀԶՌԾ-ում ներառված են վերամշակող արդյունաբերության հետևյալ ենթաճյուղերը՝ որպես զարգացման ծրագրերում ուշադրության արժանի հնարավոր ուղղություններ, քանի որ աշխատատեղերի ստեղծումն ակնկալվում է հիմնականում այդ ոլորտներում՝ ադամանդագործություն, ոսկերչություն, ժամացույցների արտադրություն, թեթև արդյունաբերություն, կոնյակի և գինու արտադրություն, դեղագործություն և կենսատեխնոլոգիաներ, պահածոյացված սննդամթերքի արտադրություն, հանքային ջրերի և հյութերի արտադրություն, ճարտարագիտություն, գունավոր մետաղների մշակում:

Կարևոր է նշել, որ, ՀԶՌԾ-ի համաձայն, նորարարական զարգացմանն ուղղված քաղաքականությունները չեն սահմանափակվի միայն գերակա ոլորտներով, այլ կիրականացվեն հանրապետության ողջ մասշտաբով:

Կառավարության տարածքային զարգացման ոլորտում կատարված բարեփոխումներից է 2014թ. Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամը Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի վերակազմակերպելը:

Հայաստանում տարածքային զարգացման անհամաչափությունները նշանակալի են ու արմատացած՝ չնայած 2009թ.-ից սկսած նվազման դրական միտումներին: Տարբեր մարզերի միջև տնտեսական հնարավորությունների և կենսապայմանների անհամաչափության պատճառով՝ որոշ մարզերում նշանակալիորեն նվազում է բնակչության թիվը (հատկապես տնտեսապես անապահով մարզերում): Մարզերի մեծ մասում (Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Լոռի, Շիրակ, Վայոց Ձոր, Տավուշ) մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը ազգային միջինի 70%-ից ցածր է, և այդ մարզերում ապրող բնակչությունը Հայաստանի Հանրապետության ամբողջ բնակչության 46%-ն է կազմում: Մեծ

անհամաչափություններ են նկատվում մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքի ծավալների, արդյունաբերության, ծառայությունների և արտաքին առևտրի ոլորտներում: Տարածքային զարգացման նշանակալի անհամաչափությունները պահպանվում են տնտեսապես ակտիվ բնակչության, գործազրկության, անձնական եկամտի, աղքատության մակարդակներում: Նույնը վերաբերում է նաև հանրային ծառայություններին, հատկապես առողջապահությանը:

Նշված անհամաչափությունները ցույց են տալիս, որ տարածքները դժվարությամբ են հարմարվում շուկայական տնտեսության մրցակցային ճնշումներին, ինչը հանգեցնում է արդյունաբերական և մարդկային կապիտալի ոչ օպտիմալ օգտագործման: Հայաստանն ամբողջությամբ պետք է ավելի մրցունակ դառնա և միևնույն ժամանակ երաշխավորի բոլոր տարածքների համաչափ զարգացումը: Առկա խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է ունենալ արդյունավետ և համապարփակ քաղաքականություն, որը հնարավորություն կտա տարածքային մոտեցմամբ ներդաշնակեցնելու ոլորտային միջոցառումները:

ԱՄՓՈՓՈՒՄ

Միջազգային հեռանկարներում առաջարկվում են ՏԶ քաղաքականության օգտակար դասեր և հաջողված փորձեր, որոնք կիրառելի են Հայաստանի ներկա իրավիճակում: Ֆինանսական միջոցների սղության պայմաններում խիստ կարևոր է պետական և մասնավոր առկա միջոցների հնարավորինս արդյունավետ օգտագործումը:

Տարածքային զարգացման արդի քաղաքականությունը՝ մրցունակության ու համաչափության նպատակներին հասնում է տարածքային մոտեցումներով՝ ընդգրկելով մարդկային կապիտալ, նորարարություն, մարզերի ներգրավում, ենթակառուցվածներ: Նման համապարփակ, տարածքային մոտեցումները կիրառելի են նաև Հայաստանում: ԵՄ համաչափության քաղաքականությունը կարող է տեղայնացվել որպես տարածքային զարգացման արդի քաղաքականության ընդհանուր մոդել:

Զարգացմանն ու աշխատատեղերի ստեղծմանն ուղղված միջոցառումները համահունչ են Հայաստանի զարգացման ռազմավարական ծրագրին և արտացոլում են տարածքային կարիքները: Արդյունաբերության և արտահանման խթանումը, զբոսաշրջությունը, ՏՀՏ ոլորտը, գյուղատնտեսության արդիականացումն ու գյուղական տարածքների զարգացումը, սննդի արդյունաբերությունը, ՓՄՁ-ների ստեղծումը ՀԶՌԾ-ի հիմնական նպատակներն են և կարող են օգնել նվազեցնել տարածքային զարգացման անհամաչափությունները: Հայաստանի մարզերը մեծապես կախված են ավանդական գյուղատնտեսությունից, թեև տնտեսության դիվերսիֆիկացման անհրաժեշտություն կա:

Հայաստանում տարածքային զարգացման անհամաչափությունները պահպանվում են՝ չնայած վերջերս նկատվող նվազման միտումին: Տարբեր մարզերի միջև տնտեսական հնարավորությունների և կենսապայմանների անհամաչափության պատճառով՝ որոշ մարզերում նշանակալիորեն նվազում է բնակչության թիվը (հատկապես տնտեսապես անապահով մարզերում): Մարզերի կեսից շատում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ազգային միջինի 70%-ից ցածր է, և այդ մարզերում ապրող բնակչությունը Հայաստանի Հանրապետության ամբողջ բնակչության 46%-ն է կազմում:

Տարածքային զարգացման անհամաչափությունները ցույց են տալիս, որ տարածքները դժվարությամբ են հարմարվում շուկայական տնտեսության մրցակցային ճնշումներին, ինչը հանգեցնում է արդյունաբերական և մարդկային կապիտալի ոչ օպտիմալ օգտագործման: Հայաստանն ամբողջությամբ պետք է ավելի մրցունակ դառնա և միևնույն ժամանակ երաշխավորի բոլոր տարածքների (մարզերի) միջև համաչափությունը: Առկա խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է ունենալ արդյունավետ և համապարփակ քաղաքականություն, որը հնարավորություն կտա տարածքային մոտեցմամբ ներդաշնակեցնելու ոլորտային միջոցառումները:

Հիմնվելով զարգացած երկրների հարուստ փորձի, ինչպես նաև ընթացիկ միջազգային և ազգային քաղաքականությունների վրա՝ Հայաստանը պետք է տարածքային զարգացման իր քաղաքականությունում հաշվի առնի հետևյալ հիմնական մոտեցումները.

- Կենտրոնանալ համապարփակ տարածքային քաղաքականությունների և ծրագրերի վրա, որոնց թեման խոշոր, համակցված սոցիալ-տնտեսական միավորներն են (առնվազն միջհամայնքային): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարածքային մրցունակության ու միասնության վրա ազդում են բազմակի գործոններ և ոլորտներ, անհրաժեշտ է մարդկային կապիտալի, նորարարության, ներառման, ենթակառուցվածքների համադրմամբ մշակել միջոլորտային բնույթի միջոցառումներ՝ հարմարեցված կոնկրետ տվյալ տարածքի

միջոցներին և կարիքներին: Տարածքային զարգացման ծրագրերը պետք է սերտորեն համակարգվեն համապատասխան ոլորտի նախարարությունների և գերատեսչությունների հետ:

- Բոլոր տարածքներն ընդգրկել տարածքային զարգացման նպատակների խթանման շրջանակում, որ սահմանված է 2016-2025թթ. Հայաստանի զարգացման ռազմավարական ծրագրով և արտացոլում է տնտեսության մեջ բնակչության լիակատար ինտեգրման, կրթության, նորարարության ու կայունության խթանման անհրաժեշտությունը (Եվրոպայի 2020թ. ռազմավարության շրջանակում տրվում է երկարաժամկետ օգտակար ռազմավարական ուղղությունը):
- Համաչափության քաղաքականությունը պետք է հիմնված լինի զարգացման և աշխատատեղերի ստեղծմանն ուղղված ներդրումների վրա: Հայաստանի մարզերում մեծ ջանքեր պետք է գործադրվեն տնտեսության դիվերսիֆիկացման և արդիական ոլորտների տարածքային զարգացման ուղղությամբ, որը կարող է ապահովել տարածքային մակարդակով որակյալ աշխատատեղերի ստեղծումը:
- Հաշվի առնել գործառութային և հարկաբյուջետային ապակենտրոնացման գործընթացի համապատասխան առաջընթացը և ստեղծել արդյունավետ տարածքային զարգացման միջավայր՝ հիմնվելով հետևյալ հիմնական սկզբունքների վրա՝ գործընկերություն, իրավազորում և կառուցողականություն:
-

5. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Տարածքային զարգացման նպատակները և գերակայությունները հիմնականում ուղղված են իրավիճակի և քաղաքականությունների վերլուծության արդյունքում վերհանված հիմնախնդիրների լուծմանը՝ ապահովելով նպատակահեն կառավարման համակարգ:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Տարածքային զարգացման քաղաքականությունը Հայաստանի բոլոր մարզերին տրամադրում է փոխկապակցված շարժառիթների շարք՝ ներուժերի հիման վրա մրցունակությունը բարձրացնելու և բոլոր մարզերի միջև սոցիալ-տնտեսական համաչափությունը երաշխավորելու նպատակով: Քաղաքականությունը սերտորեն համակարգվում է նախարարությունների միջոցով և իրականացվում միջազգային, ազգային և ենթազգային դերակատարների միջև համագործակցությամբ:

ՏԵՍԼԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Տարածքային զարգացումը ղեկավարվում է ռազմավարական տեսլականով, որի համաձայն Հայաստանը երկրի բոլոր մարզերում կակտիվացնի աճը, կապահովի համաչափություն և կայունություն:

Հայաստանի տարածքային զարգացման քաղաքականության ընդհանուր նպատակը երկրի բոլոր մարզերի տնտեսական և սոցիալական, տարածքային համաչափ և կայուն զարգացման խթանումն է՝ հաշվի առնելով առանձին մարզերի կարիքներն ու ռեսուրսները: Նշված ընդհանուր նպատակն ունի երեք բաղադրիչ.

- առկա ներուժի հիման վրա բոլոր տարածքների (մարզերի) մրցունակության բարձրացում՝ ստեղծելով ազգային և միջազգային տնտեսություններին արդյունավետորեն ինտեգրվելու հնարավորություն.
- առավելագույն տարածքային համաչափության երաշխավորում՝ հատուկ ուշադրություն դարձնելով թույլ զարգացած և սահմանամերձ տարածքների, ինչպես նաև ռեսուրսների կայուն օգտագործման վրա.

- տարածքային զարգացման քաղաքականության և փորձի բարելավում՝ ապահովելով տարածքային ու տեղական դերակատարների ակտիվ մասնակցությունը պլանավորման և իրականացման գործընթացներում:

Ռազմավարական տեսանկյունից տարածքային զարգացման հաջողությունը կգնահատվի երեք ընդհանուր, սակայն հստակ կերպով սահմանված ու չափելի ցուցանիշների հիման վրա՝ կազմելով երկարաժամկետ տեսլական.

- 2017թ.-ին ՀՀ-ն կունենա տարածքային զարգացման քաղաքականությանիրականացման մեկ ընդհանուր Տարածքային զարգացման գործառնական ծրագիր (ՏԶԳԾ), որը հիմք կհանդիսանա, ՏԿԶՆ բյուջետային ծրագրերի նախապատրաստման և տարածքային զարգացման նպատակներով,արտաքին աղբյուրներից բյուջետային աջակցության ստացման համար:
- 2025թ.-ի դրությամբ առանձին վերցված յուրաքանչյուր մարզում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կգերազանցի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջին հանրապետական ցուցանիշի 60 տոկոսը և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 70%-ից ցածր կգտնվի մարզերի բնակչության ոչ ավել քան 30%-ը :

- 2025թ.-ի դրությամբ բոլոր մարզերում միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների և ակտիվ ձեռնարկությունների թվաքանակը կաճի առնվազն 10 տոկոսով ՝ համեմատած 2014թ.-ի հետ:

Վերոնշյալի առումով՝ տարածքային զարգացումը կենտրոնացած է քաղաքային աճի բևեռների, գործարար միջավայրի բարելավման, մարդկային կապիտալի ամրապնդման, նորարարության և հիմնական ենթակառուցվածքների խթանման վրա: Գերակայությունը կտրվի թույլ զարգացած մարզերին և տարածքի բազմակենտրոն զարգացմանը: Հայաստանի մարզերը, հատկապես թույլ զարգացածները, կարող են գրավիչ դառնալ ապրելու, աշխատելու, այցելելու և ներդրում կատարելու համար:

Հիմնական նպատակները կիրագործվեն զարգացման ոլորտների համապատասխան դերակատարների հետ սերտ համագործակցությամբ, մարզերի միջև տարբերակված ծրագրային բաղադրիչների և ֆինանսական հատկացումների միջոցով՝ հաշվի առնելով զարգացման մակարդակը: Երկրի բոլոր տարածքների համաչափ զարգացման նպատակը կիրագործվի համապարփակ մոտեցմամբ՝ համախմբելով ենթակառուցվածքների, մարդկային կապիտալի, հանրային ծառայությունների ոլորտներում պետական ու մասնավոր ներդրումները և խթանելով տնտեսական գործունեությունը:

ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Տարածքային զարգացման ծրագրավորման ընթացքում կկիրառվեն հետևյալ հիմնական սկզբունքները.

- Ռեսուրսների և ջանքերի կենտրոնացում. մարզերին ֆինանսական միջոցներ հատկացնելիս կենտրոնանալ տնտեսապես անապահով տարածքների ու խմբերի վրա, ինչպես նաև ֆինանսական միջոցները կենտրոնացնել այն միջոցառումների վրա, որոնք նոր աշխատատեղերի ստեղծման, ինքնազբաղվածության, եկամուտների ստացման առավելագույն պայմաններ ու հնարավորություններ կստեղծեն.
- Ծրագրավորում. բազմամյա ծրագրեր, որոնք հիմք կհանդիսանան միջոցառումների և բյուջետավորման համար.
- Գործընկերություն. մասնակցային, խորհրդակցական և կոլեկտիվ գործընթացներով մշակված ծրագրեր՝ ներգրավելով կենտրոնական, տարածքային և տեղական գերատեսչություններին, հասարակական գործընկերներին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին.
- Կառուցողականություն. հավելյալ ֆինանսավորում նախատեսել տարածքային և տեղական մակարդակով նախաձեռնվող ծրագրերի և նախագծերի համար, որոնց դեպքում երաշխավորվում է տարածքային և տեղական դերակատարների կողմից

համաֆինանսավորումը, տնօրինումը և շարունակականությունը: Ծրագրերն ու նախագծերը միայն բացառիկ դեպքերում կարող են ամբողջությամբ ֆինանսավորվել պետական կամ միջազգային աղբյուրներից: Ծրագրերն ու նախագծերն իրականացվում են տարածքային և տեղական դերակատարների կողմից՝ կենտրոնական կառավարության սահմանափակ տեխնիկական աջակցությամբ.

- Կամավորություն և տարածքային ռազմավարությունների դիտարկում. ծրագրերն ընտրել մարզերի միջև կամ առանձին մարզերի շրջանակում հայտարարված բաց կամ սահմանափակ մրցույթի հիման վրա՝ հաշվի առնելով տարածքային մակարդակով համաձայնեցված ռազմավարություններն ու գերակայությունները:

ԹԵՄԱՏԻԿ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Նախատեսված են հետևյալ թեմատիկ գերակայությունները.

- **1-ին գերակայություն՝ տարածքային աճի բևեռների զարգացում: Այս գերակայությունը նպատակաուղղված է քաղաքներում նոր աշխատատեղերի ստեղծմանն ու կյանքի որակի բարձրացմանը՝ քաղաքային ենթակառուցվածքների վերականգնման, ծառայությունների, ներառյալ սոցիալական ծառայությունների որակի բարձրացման, ինչպես նաև գործարարության աջակցման կառույցների և ձեռներեցության զարգացման միջոցով: Ելնելով Երևանի և Հայաստանի մնացած մարզերի համաչափ զարգացման անհրաժեշտությունից, ինչպես նաև հաշվի առնելով աշխարհաքաղաքական նկատառումները՝ երկարաժամկետ աջակցության տրամադրման համար կնախանշվեն 1-3 առաջնային քաղաքներ՝ վերտարածքային աճի բևեռներ դարձնելու նպատակով:**
- **2-րդ գերակայություն՝տարածքային և տեղական տրանսպորտի ենթակառուցվածքի բարելավում, որի նպատակն է մեծացնել մարզեր այցելությունների և բնակչության շարժունակության հնարավորությունները, զարգացնել զբոսաշրջությունը, ապրանքներն ու ծառայությունները՝ կայուն տնտեսական զարգացումը և սոցիալական փոփոխությունները խթանելու նպատակով: Բոլոր մարզերի և խոշոր բնակավայրերի միջև հաստատուն կապն ապահովելու համար անհրաժեշտ են տարածքային և տեղական մակարդակով ներդրումներ:**
- 3-րդ գերակայություն՝ տարածքային և տեղական գործարար պայմանների բարելավում: Այս գերակայությունը նպատակաուղղված է տարածքային և տեղական նշանակության գործարարության աջակցման կառույցների ստեղծմանն ու զարգացմանը, արտադրական տարածքների վերականգնմանը, ինչպես նաև տարածքային և տեղական ձեռնարկատիրական նախաձեռնությունների օժանդակմանը՝ աշխատատեղերի ստեղծումն ու կայուն տնտեսական աճը խթանելու համար:
- 4-րդ գերակայություն՝ մարդկային կապիտալին և սոցիալական ենթակառուցվածքներին ուղղված ներդրումներ: Այս գերակայության նպատակն է մեծացնել բնակչության համար էապես կարևոր ծառայություններից օգտվելու հնարավորությունները՝ նպաստելով տնտեսական և սոցիալական միասնության ձեռքբերմանը, վերականգնելով առողջապահության, կրթության, մշակույթի, արտակարգ իրավիճակներում սոցիալական ու հասարակական անվտանգության ապահովման ենթակառուցվածքները: Կրթության, զբաղվածության և ձեռնարկատիրության խթանումը, ինչպես նաև խոցելի խմբերի ներառումը կօժանդակեն վերոնշյալ նպատակի իրագործմանը:
- 5-րդ գերակայություն՝ կայուն զարգացում և զբոսաշրջության խթանում: Այս գերակայությունը հիմնականում նպատակաուղղված է պատմամշակութային ժառանգության և բնապահպանական ռեսուրսների պահպանմանն ու խթանմանը, ինչպես նաև զբոսաշրջական ենթակառուցվածքի որակի բարելավմանը՝ մարզերն ավելի գրավիչ դարձնելու, մարզային տնտեսությունները զարգացնելու և նոր աշխատատեղեր ստեղծելու համար:
- 6-րդ գերակայություն՝ տարածքային զարգացման կառավարման կարողությունների ամրապնդում, որի նպատակն է աջակցել ազգային և ենթազգային դերակատարների կողմից տարածքային զարգացման ծրագրերի թափանցիկ ու արդյունավետ իրականացմանը, ներառյալ

ռազմավարական պլանավորումը, ծրագրերի կառավարումը, ընդհանուր վարչարարության հարցերը:

Վերոնշյալ գերակայությունները հետագայում կմասնավորեցվեն ըստ օբյեկտիվորեն ստուգաչափելի ցուցանիշների և որպես գործառնական պայմաններ կարտացոլվեն Տարածքային զարգացման գործառնական ծրագրերում (ՏԶԳԾ):

Աղյուսակ 13. Տարածքային զարգացման գերակայությունները



Աղբյուրը՝սեփական մշակում

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Թեմատիկ գերակայություններն ուղեկցվում են մի շարք հորիզոնական նպատակներով, որոնք կիրառելի են բոլոր տարածքներում և ոլորտներում, և որոնք կընդգրկվեն տարածքային զարգացման բոլոր նախաձեռնություններում՝ ունենալով դրական կամ առնվազն չեզոք ազդեցություններ.

- **1-ին հորիզոնական նպատակ՝ հավասարություն և խտրականության բացառում.** տղամարդկանց և կանանց հանդեպ հավասար վերաբերմունք, տարիքի, կրոնի, ազգային պատկանելիության, առողջության կամ համոզմունքների պատճառով խտրականության բացառում.
- **2-րդ հորիզոնական նպատակ՝ շրջակա միջավայրի պահպանություն և էներգաարդյունավետություն**. շրջակա միջավայրի վրա ազդեցությունները, ներառյալ պահպանվող տարածքների, էներգաարդյունավետության, կենսաբազմազանության, կլիմայի փոփոխության հետ կապված ազդեցությունները.
- **3-րդ հորիզոնական նպատակ՝ տեղեկատվական հասարակության զարգացում.** ժամանակակից հաղորդակցական և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում, քաղաքացիների համար տեղեկատվության հասանելիության ապահովում, որոշումների կայացման գործընթացին մասնակցություն.

- **4-րդ հորիզոնական նպատակ՝ մրցակցության պաշտպանություն.** հավասար վերաբերմունք և գնման թափանցիկ գործընթացներ, առանց խտրականության պետական աջակցություն՝ ստեղծելով տնտեսական օբյեկտների միջև արդար մրցակցության պայմաններ:

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռազմավարության հիմնական ուղղությունները տարածքային զարգացման ծրագրերում արտահայտելիս անհրաժեշտ է ավելի մանրամասնորեն դիտարկել տարածքային ու տեղական իրավիճակների և դրանց բարելավման հետ ուղղակիորեն և անուղղակիորեն կապված հետևյալ հարցերը.

- ՏԶ-ին առնչվող տեղեկատվական համակարգերի, ներառյալ տարածքային վիճակագրական տվյալների մշակում և արդյունավետ ընդգրկում՝ տարածքների սոցիալ-տնտեսական վիճակը շարունակաբար գնահատելու նպատակով: Հայաստանում վիճակագրության համար կիրառվում է տարածքային միավորների վիճակագրական համակարգի նոմենկլատուրան (NUTS)*: Վերջինս թույլ է տալիս տվյալները հավաքել և հրապարակել տարածքային զարգացման քաղաքականության տեսանկյունից առավել հետաքրքրող մակարդակում՝ ըստ մարզերի (NUTS 3-րդ մակարդակ): Տարածքային վիճակագրությունը պետք է ավելի զարգանա՝ ներառելով տարածքներում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի վերաբերյալ տվյալներ, ինչպես նաև խստորեն վերահսկելով իրական ժողովրդագրական դինամիկան (փաստացի բնակչության թվի հաճախակի հաշվում, տարիքի, սեռի, կրթական խմբերի և այլ անհամամասնությունների ու միտումների բացահայտում):
- Մարզերի տնտեսական ներուժի գնահատման մեթոդաբանությունների մշակում: Հաշվի առնելով, որ Հայաստանի մարզերը հիմնականում կախված են գյուղատնտեսությունից՝ նրանց ապագայի համար պետք է դիտարկվեն հետևյալ երկու հիմնական տարբերակները՝ գյուղատնտեսության արդյունավետության բարձրացում (արտադրական համակարգերի, հմտությունների, հողօգտագործման ձևերի արդիականացում) և մարզային տնտեսությունների դիվերսիֆիկացում՝ ոչ գյուղատնտեսական տնտեսական գործունեությունների մասնաբաժինն ավելացնելու նպատակով: Այսպիսով, պետք է մշակվի գյուղատնտեսական քաղաքականություն, որտեղ հատուկ ուշադրություն պետք է դարձվի ուղղահայաց գոտիավորման և ինտենսիվ արտադրության համար հարմար տարածքների բացահայտման վրա: Մարզերի տնտեսական գրավչությունը՝ որոշակի ոչ գյուղատնտեսական գործունեությունների կենտրոնացման և ներդրումների առումով, պետք է արտահայտվի կլաստերների, աճի բևեռների և ինտելեկտուալ մասնագիտությունների ուսումնասիրմամբ, ինչպես նաև համապատասխան միջոցառումների

* http://www.armstat.am/file/doc/99460113.pdf

իրականացմամբ: Դա կարող է նշանակել ազատ/հատուկ տնտեսական գոտիների, արտադրական կամ տեխնոլոգիական պարկերի և տարածքային տնտեսությունները խթանող այլ բարդ մեխանիզմների ստեղծում:

- Բացասական ժողովրդագրական միտումների հակակշիռների ստեղծում: Գրեթե բոլոր մարզերում բնակչության թիվը նվազում է (որոշ դեպքերում էապես) և «ուղեղների արտահոսք» է տեղի ունենում. կրթված երիտասարդները թողնում են մարզերը և գնում Երևան կամ արտասահման: Բարձրագույն ուսումնական համակարգերը պետք է տեղում որակավարում ստանալու ավելի մեծ հնարավորություններ ընձեռեն և ավարտողներին խրախուսեն մնալ կամ վերադառնալ իրենց հայրենի մարզերը: Դա կարելի է անել շրջանների ուսանողների ընդունելության ավելացման և մարզային տնտեսությունների վերաբերյալ գիտելիքների ներառման միջոցով՝ զարգացող ոլորտներում և ամենագրավիչ տարածքներում (հատկապես Երևանից դուրս գտնվող) ստեղծելով բարձրորակ աշխատատեղեր:
- Մարզերի բնակչության համար ավելի որակյալ սոցիալական ծառայությունների ապահովում: Մարզային համայնքներին կենսունակ ու տոկուն պահելու համար անհրաժեշտ է հանրային/սոցիալական ծառայությունների հասանելիության հավասարակշռություն ապահովել, ներառյալ երեխաների խնամքը, առողջապահական և մշակութային հաստատությունները: Այդ առումով տարածքային մակարդակով արդեն նախաձեռնված համապարփակ սոցիալական ծառայությունների տրամադրումը անհրաժեշտ է և շարունակելի:
- Վարչատարածքային բարեփոխումների և տարածքային զարգացման գործընթացների ինտեգրում: Տեղական համայնքների փնջերի ձևավորման (պիլոտային) նախաձեռնությունների իրականացման, միջհամայնքային համագործակցության և հանրային ծառայությունների համապարփակ մատուցման ուղղությամբ արդեն նախաձեռնված գործընթացներն էական ազդեցություն կունենան ենթամարզային տարածքների գործունեության վրա: Ակնկալվող ծախսային խնայողությունները և արդյունավետությունը կարող են և պետք է մեծ հնարավորություններ ստեղծեն տեղական մակարդակով սոցիալ-տնտեսական զարգացման համար և ուժեղ համագործակցություն ձևավորեն տեղական ու տարածքային գերակայությունների շուրջ: Այդ գործընթացներին կօժանդակի նաև հարկաբյուջետային ապակենտրոնացումը: Տարածքային զարգացման տեսանկյունից՝ որքան հզոր են տարածքային և տեղական դերակատարների կարողությունները, այնքան ամուր են զարգացման ծրագրերի մշակման հիմքերը, և այնքան մեծ է այդ դերակատարների կողմից իրատեսական նախաձեռնությունների մշակման և իրականացման հնարավորությունը:

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է մշակել և իրականացնել հատուկ գործառնական ծրագրեր: 2016-2025թթ. հեռանկարում նախատեսված է հետևյալ ծրագրերի իրականացումը՝ ՄԺԾԾ-ի բազմամյա պլաններին զուգահեռ:

- սկզբնական փուլ. սկզբնական, ընթացիկ փուլում կհամախմբվեն ոլորտային և նվիրատուների կողմից իրականացվող միջոցառումները, հատկապես «Տարածքային զարգացման միջոցառումների մշակում» ԵՄ ծրագրի և Համաշխարհային բանկի 2014-2017թթ. ծրագրի շրջանակում նախատեսված միջոցառումները: Որոշ կարևոր նորություններն են.
    - ՏԶ պիլոտային ծրագիրը, որն ունի դրամաշնորհային բաղադրիչ՝ ուղղված քաղաքականությունների նպատակների իրագործմանը.
    - Տեղական և տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման նոր տեսակները՝ ՀՏԶՀ-ի կողմից:
- 2017-2020թթ. ՏԶ գործառնական առաջին ծրագիրը կհիմնվի սկզբնական փուլում քաղված դասերի վրա և կարտացոլի ծրագրային այն մոտեցումը, որ կիրառվում է ԵՄ կառուցվածքային ֆինանսական միջոցներով իրականացվող ծրագրերի շրջանակներում: Մինչև 2020թ.-ը 2025թ.-ի թիրախների մոտ 40%-ը պետք է իրագործված լինի:
- Հետագա ՏԶ գործառնական ծրագիրը (ծրագրերը), որոնց ժամանակացույցը կսահմանվի՝ հիմնվելով նախորդ ծրագրերի իրականացման փորձի վրա: Դրանք պետք է նպատակաուղղված լինեն 2025թ.-ի թիրախների մնացած 60%-ի իրագործմանը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Տարածքային զարգացման ռազմավարական մոտեցումը պահանջում է Հայաստանի մարզերի միջև մրցակցության բարձրացման և, միևնույն ժամանակ, համաչափության ապահովման երկարաժամկետ հանձնառություն՝ հավատարիմ մնալով կայուն զարգացման սկզբունքներին:

«Հայաստանը պետք է կարողանա երկրի բոլոր մարզերում ակտիվացնել աճը, ապահովել համաչափություն և կայունություն» տեսլականը համապատասխան կապ է ստեղծում կոնկրետ ռազմավարական նպատակների հետ.

- ներհատուկ ներուժի հիման վրա բոլոր տարածքների (մարզերի) մրցունակության բարձրացում՝ ստեղծելով ազգային և միջազգային տնտեսություններին արդյունավետ ինտեգրվելու հնարավորություն.
- առավելագույն տարածքային միասնության երաշխավորում՝ հատուկ ուշադրություն դարձնելով թույլ զարգացած և սահմանամերձ տարածքների, ինչպես նաև ռեսուրսների կայուն օգտագործման վրա.
- տարածքային զարգացման քաղաքականության և փորձի բարելավում՝ ապահովելով տարածքային ու տեղական դերակատարների ակտիվ մասնակցությունը պլանավորման և իրականացման գործընթացներում:

Կարևոր է, որ այս խնդիրների իրականացումն ուղեկցվում է մի շարք ռազմավարական ցուցանիշներով.

- 2017թ.-ին ՀՀ-ն կունենա տարածքային զարգացման քաղաքականությանիրականացման մեկ ընդհանուր Տարածքային զարգացման գործառնական ծրագիր (ՏԶԳԾ), որը հիմք կհանդիսանա, ՏԿԶՆ բյուջետային ծրագրերի նախապատրաստման և տարածքային զարգացման նպատակներով,արտաքին աղբյուրներից բյուջետային աջակցության ստացման համար:
- 2025թ.-ի դրությամբ առանձին վերցված յուրաքանչյուր մարզում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կգերազանցի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջին հանրապետական ցուցանիշի 60 տոկոսը և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 70%-ից ցածր կգտնվի մարզերի բնակչության ոչ ավել քան 30%-ը :
- 2025թ.-ի դրությամբ բոլոր մարզերում միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների և ակտիվ ձեռնարկությունների թվաքանակը կաճի առնվազն 10 տոկոսով ՝ համեմատած 2014թ.-ի հետ:

Սույն ռազմավարության հիմքում ընկած ցանկացած ՏԶ ծրագիր պետք է հավատարիմ մնա տարածքային և տեղական դերակատարների կենտրոնացման, ծրագրավորման, գործընկերության, կառուցողականության, կամավորության հիմնական սկզբունքներին և կոնկրետ տարածքներին հատուկ ռազմավարություններին:

Հայաստանում տարածքային զարգացումը կենտրոնացած կլինի մի շարք թեմատիկ գերակայությունների վրա՝ քաղաքային աճի բևեռների զարգացում, տարածքային և տեղական տրանսպորտի ենթակառուցվածքի բարելավում, տարածքային և տեղական գործարար պայմանների բարելավում, մարդկային կապիտալին և սոցիալական ենթակառուցվածքներին ուղղված ներդրումներ, զբոսաշրջության կայուն զարգացում և խթանում, ինչպես նաև ՏԶ կառավարման կարողությունների զարգացում: Նշված թեմատիկ նպատակները կուղեկցվեն հորիզոնական նպատակներով՝ հավասարություն և խտրականության բացառում, շրջակա միջավայրի պահպանում, էներգաարդյունավետության ապահովում, տեղեկատվական հասարակության զարգացում, մրցակցության պաշտպանություն:

Կդիտարկվեն նաև հարակից որոշ քաղաքականությունները և գործողությունները՝ ՏԶ-ի համար Կառավարման տեղեկատվական համակարգերի մշակում և ինտեգրում, տարածքների տնտեսական ներուժի գնահատման մեթոդաբանություններ, բացասական ժողովրդագրական միտումների թուլացում,

սոցիալական ծառայությունների ինտեգրում, վարչարարության համակարգի բարեփոխումներ, օր.՝ համայնքների փնջերի ձևավորում և զարգացման գործընթացներ:

Ակնկալվում է, որ ՏԶ գործառնական առաջին ծրագիրը կմշակվի 2016-2017 և կիրականացվի 2017-2020 թվականներին:

6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

Ակնհայտ է, որ ցանկացած պետական քաղաքականություն արդյունավետ չի կարող լինել առանց համապատասխան ֆինանսավորման կամ ֆինանսավորման մեխանիզմի: Հայաստանի ՏԶՖ-ի ռազմավարական ուղղությունները սահմանելու նպատակով 2014թ.-ին իրականացվեց տարբեր երկրների փորձի ուսումնասիրություն՝ այդ թվում չորս հենանիշային երկրները՝ Ալբանիա, Խորվաթիա, Վրաստան և ՆՀՀ Մակեդոնիա, ինչպես նաև այնպիսի երկրները, որոնք ապահովել են ԵՄ միջոցների կլանման բարձր մակարդակ՝ Լիտվա և Լեհաստան: Նշված երկրները տարածքային զարգացման ֆինանսավորման այլընտրանքային տարբերակների հարուստ ներկապնակ են՝ ֆինանսավորման աղբյուրների, ծավալների, բաշխման, ինչպես նաև ինստիտուցիոնալ, ընթացակարգային, ծրագրավորման և այլ հարցերի տեսանկյունից: Հաշվի առնելով, որ վերջին երկու երկրներն աշխարհագրական, ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական առանձնահատկություններով շատ նման չեն Հայաստանին և նրանց տարածքային զարգացման քաղաքականությունները մեծապես կախված են ԵՄ միջոցներից, ուստի դրանք միայն որպես ընդհանուր օրինակ են դիտարկվում:

Տարածքային զարգացման ֆինանսավորման տարբերակները բարդ են և պետք է առանձին-առանձին վերլուծության ենթարկվեն՝ դիտարկվելով տարբեր տեսանկյուններից: Հիմնվելով տարբեր երկրների փորձի մանրամասն վերլուծության վրա՝ ստորև ներկայացված են հիմնական տեսանկյունները:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՀԵՆՔԱՅԻՆ ՄՈԴԵԼ

ԵՄ կառուցվածքային ֆինանսական միջոցները ապահովում են այն համապատասխան հիմնական մոդելը, որ կիրառվել է տասնամյակներ շարունակ և բարելավվել բազմակի անգամներ: Հայաստանի ՏԶ ֆինանսավորման հարմար եղանակ գտնելու նպատակով քննարկվել են հիմնական գաղափարները, մեթոդները և սկզբունքները: Տարբեր երկրների՝ ՏԶՖ/ֆինանսավորման մեխանիզմների համեմատական վերլուծությունն ուղղորդվել է ԵՄ համաչափության միջոցների դեպքում կիրառելի հիմնական սկզբունքներով՝ կենտրոնացում, ծրագրավորում, գործընկերություն, կառուցողականություն: Ընդգրկվել են նաև քաղաքականության ընդհանուր որակային առանձնահատկությունները՝ արդյունավորություն, արդյունավետություն, կայունություն և ազդեցություն:

ՏԶ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

Սովորաբար, ՏԶՖ-ն տարեկան պետական բյուջեներում ներկառուցված ֆինանսական մեխանիզմ է (Ալբանիա, Խորվաթիա, Վրաստան, ՆՀՀ Մակեդոնիա), ուստի խոցելի է պետական ֆինանսների հավասարակշռման նպատակով արվող կարգավորումներից, որ կիրառվում են կարճաժամկետ նպատակներով և չի կարող ծառայել որպես տարածքային զարգացման երկարաժամկետ ռազմավարական նպատակների իրագործման կայուն մեխանիզմ: Որոշ երկրներում նույնպես հիմնվում են ՏԶՀ գործառույթներով կենտրոնական կառույցներ (Վրաստանում՝ համայնքային ԶՀ և գյուղատնտեսական ԶՀ, որոնք միայն վարկային համակարգերի համար են): Այլ երկրներում այդ գործառույթներն իրականացվում են համապատասխան նախարարությունների կողմից: Ստորև բերված են ուսումնասիրված երկրներում ՏԶՀ կառուցվածքների հիմնական տարբերությունները.

- Ալբանիա. ՏԶՖ-ն կազմված է տեղական ենթակառուցվածքների և ծառայությունների համար մրցակցային դրամաշնորհներից, որ ֆինանսավորվում են կենտրոնական բյուջեից՝ համապատասխան նախարարությունների բյուջետային հոդվածներից:

- Խորվաթիա. ՏԶՀ մեխանիզմը կազմված է երեք բաղադրիչներից՝ ԵՄ ծրագրերի մշակման նախաձեռնություն (աջակցությունը հիմնականում տրամադրվում է ԵՄ անդամակցության
- ֆինանսական միջոցներից), բիզնես ենթակառուցվածքների զարգացման աջակցության ծրագիր (աջակցությունը հիմնականում տրամադրվում է ԵՄ նախամուտի ֆինանսական միջոցներից), հատուկ նշանակության տարածքների և կղզիների համար ծրագրեր (հիմնականում հարկային արտոնություններ):
- Վրաստան. ՏԶՖ-ն կենտրոնական բյուջեի հատկացված միավոր է՝ ԵՄ բյուջետային աջակցությամբ, համալրվելով լրացուցիչ մեխանիզմներով՝ Համայնքային զարգացման հիմնադրամ (համայնքային ենթակառուցվածքների համար միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից տրվող վարկերը և նվիրատուների ֆինանսական աջակցությունը) և Գյուղատնտեսական զարգացման հիմնադրամ (գյուղական տարածքներում գյուղատնտեսներին և սննդի վերամշակման ոլորտին տրվող ցածր տոկոսով վարկերը):
- ՆՀՀ Մակեդոնիա. ՏԶՖ-ն կազմված է տարբեր նախարարությունների և այլ պետական մարմինների բյուջեներից, ԵՄ նախակառուցվածքային ֆինանսական միջոցներից և այլ նվիրատուների ֆինանսական աջակցությունից:

ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Որոշ երկրներում ՏԶՖ-ն հիմնված է բյուջեի մասին օրենքի դրույթների վրա, որոնք կարող են ամեն տարի փոփոխվել (Ալբանիա, Վրաստան), այլ երկրներում կան տարածքային զարգացման մասին հատուկ օրենքներ (Խորվաթիա, ՆՀՀ Մակեդոնիա): Այնուամենայնիվ, նույնիսկ այդ դեպքում ֆինանսավորման չափը երաշխավորված չէ (միայն ՆՀՀ Մակեդոնիայի իրավական դաշտն է սահմանում, որ ՏԶ-ի ծախսերը պետք է շարունակել իրականացնել ՀՆԱ-ի 1%-ի չափով, սակայն փաստացի հաշվարկը լրացուցիչ մեկնաբանման կարիք ունի): Շատ երկրներում չկան ֆինանսական միջոցների օգտագործման չափանիշներ կամ կան, բայց ժամանակի ընթացքում հետևողականորեն չեն կիրառվում: Ընդհանուր առմամբ, հենանիշային երկրների տարածքային զարգացմանն ու ՏԶ ֆինանսավորմանն առնչվող իրավական դաշտերը համարվում են թույլ:

Տարածքային զարգացման ֆինանսավորման իրավական հիմքերն ամուր են ԵՄ անդամ-պետություններում (օր.՝ Լիտվա, Լեհաստան, որ ընդգրկված էին ՏԶՀ հենանիշային երկրների շարքում), որտեղ ԵՄ-ն ամբողջական, բարձր և ցածր մակարդակների օրենսդրական փաթեթ է մշակել՝ սկսած ԵՄ պայմանագրից մինչև ծրագրերի ընտրական ընթացակարգերի վերաբերյալ ուղեցույցները, իրականացման կարգերը, մոնիտորինգի և գնահատման ընթացակարգերը: ԵՄ համաչափության ապահովման համար տրամադրվող միջոցները նույնպես ծրագրավորման ամուր հիմքեր ունեն:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՏԶՖ-ն սովորաբար կառավարվում է նախարարությունների և այլ պետական կառույցների կողմից, սակայն առանձին մարմիններն ունեն տարբեր իրավասություններ և դերեր:

Աղյուսակ 14. Համեմատական վերլուծության ենթարկված երկրներում ՏԶՀ կառավարման հիմնական կառույցները

Դեր	Ալբանիա	Խորվաթիա	Վրաստան	ՆՀՀ Մակեդոնիա
Բարձր մակարդակով որոշումների կայացում/ քաղաքականու-թյունների մշտադիտարկում	Միջնախարարական հանձնաժողով՝ տեղական կառավարման մարմինների ներկայացուցիչների ներգրավմամբ	Տարածքային զարգացման նախարարություն	Տարածքային զարգացման միջնախարարական հանձնաժողով	Տարածքային զարգացման (միջնախարարա-կան) ազգային խորհուրդ
Կենտրոնական կառավարման մարմին/ գործադիր	Վարչապետի աշխատակազմին առընթեր հատուկ վարչություն,	Տարածքային զարգացման նախարարության վարչություն և	Տարածքային զարգացման և ենթակառուցվածք-ների	Տեղական ինքնակառավարման նախարարություն

	համապատասխան ոլորտային նախարարություն-ներում վարչություններ, Ֆինանսների նախարարություն (ֆինանսների բաշխում և վերահսկում)	ԵՄ ֆինանսական միջոցներ	նախարարություն	
Իրականացման/ օժանդակ կառույց (ներ)՝ կենտրոնական մակարդակով	Նախարարական վարչություններ	Նախարարական վարչություններ	Նախարարական վարչություններ և հատուկ պետական մարմին (ՏԶՀ)	Նախարարության ոլորտում գործող մարմին (տարածքային զարգացման բյուրո) Սրանք տարբեր երկրների ՏԶ իրականացնող մարմիններն են
Տարածքային մակարդակով իրականացնող մարմիններ	Հիմնականում տեղական կառավարման մարմիններ	Հիմնականում օկրուգներ (ՏԿՄ-ների երկրորդ մակարդակը)	Հիմնականում ՏԿՄ-ներ (սակայն ոչ ՏԶՖ-ի միջոցների մասով, որ նախարարութ-յունն է իրականացնում)	Հիմնականում Տարածքային զարգացման կենտրոններ (տարածքների պլանավորում)

Աղբյուրը՝ սեփական մշակում

ՏԶՖ-ի իրականացումը կարող է հեշտությամբ վերապահվել կենտրոնական պետական կառույցին (դերերի հստակեցում, քաղաքականությունների մշակման և իրականացման գործառույթների տարանջատում), սակայն նույնը չի կարելի ասել տարածքային զարգացման մարմինների կամ տարածքային մակարդակով գործող կենտրոնների մասին, որոնց նպատակահարմարությունը և կայունությունը հարցականի տակ են: Համեմատական վերլուծության ենթարկված երկրների տարածքները հիմնականում փոքր են, իսկ լրացուցիչ կառույցները, որպես կանոն, ծախսատար են և հաճախ ստիպված են լինում առևտրային գործունեություններում ներգրավվել:

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ

Տարածքային զարգացման ֆինանսավորման հիմնական աղբյուրները պետական բյուջեներն են, նույնիսկ այնպիսի երկրներում, որոնք աջակցություն են ստանում ԵՄ-ից և այլ դոնոր կազմակերպություններից: Օրինակ՝ Վրաստանին տրվող ԵՄ-ի ուղղակի բյուջետային աջակցությունը կազմում է ՏԶ հատկացված պետական միջոցների 8%-ը:

Համեմատության երկրներում տարածքային զարգացման ծախսերի հարաբերական ծավալները կտրուկ տարբերվում և տարեցտարի փոխվում են: Ստորև ներկայացված են տարբեր երկրների ՏԶՖ չափերը՝ երկրի ՀՆԱ-ի համեմատ.

- Ալբանիա՝ 0.4% (2011թ., 2012թ.) - 1.0% (2009թ.), իսկ ներկայում (2014թ.)՝ 0.7%.
- Խորվաթիա՝ վերջին 3 տարվա ընթացքում՝ 0.1%-ից ցածր.
- Վրաստան՝ 11.0% (2010թ., 2012թ.) - 14.0% (2011թ., 2013թ.), որից հետո նշանակալիորեն նվազել է և 2014թ.-ին կազմել 8%.
- ՆՀՀ Մակեդոնիա՝ 2012թ.-ին՝ 0.9%:

Վերոնշյալ գնահատումներից երևում է, որ մնացած երկրների հետ համեմատած, տարածքային զարգացման համար ամենաշատը Վրաստանում է ծախսվել: Այնուամենայնիվ, հաշվետու տվյալներում ներկայացված են նաև տարածքներում իրականացված պետական նշանակության խոշոր ենթակառուցվածքային ծրագրերը: Մնացած երկրների (Ալբանիա, Խորվաթիա) տվյալներում նման ծրագրեր չկան:

Հենանիշային երկրներում ՏԶ ծախսերի նվազագույն ծավալները համապատասխանում են ազգային ՀՆԱ-ի մոտ 1%-ին կամ պետական բյուջեների 3-5%-ին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ

Տարածքների միջև ՏԶ ֆինանսավորման բաշխումն իրականացվում է միջոցների հատկացման ալգորիթմների կամ ծրագրերի ընտրական չափանիշների կամ նշված երկուսի կիրառմամբ: Այստեղ կրկին, մեծ տարբերություններ և էական թերություններ են դիտվում համեմատվող երկրներում.

- Ալբանիա. ՏԶՖ-ն, ի սկզբանե, տարածքներին հատկացվում է ըստ բնակչության թվի և սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի (մանրամասներ չեն ներկայացվում) և պաշտոնական, տեխնիկական, ռազմավարական չափանիշների հիման վրա: Այնուամենայնիվ, չափանիշները հետևողականորեն չեն կիրառվում բոլոր հայտերի նկատմամբ, և վերջնական հատկացումների վրա ազդում են այլ գործոններ:
- Խորվաթիա. ՏԶՖ-ն հիմնականում ուղղված է տնտեսապես անապահով տարածքներին (21 շրջաններից 10-ին) և բաշխվում է կիսամրցակցային եղանակով: Այնուամենայնիվ, թույլ զարգացած տարածքների համաֆինանսավորման կարողությունների ցածր մակարդակի պատճառով, որոշ մրցույթներ բաց են լինում բոլոր շրջանների համար: Ընտրական չափանիշները սահմանվում և կիրառվում են հատկապես այն դեպքում, երբ առկա է ԵՄ կողմից ֆինանսավորում:
- Վրաստան. ՏԶՖ-ի 75%-ը ծախսվում է ծրագրերի ընտրության մրցութային գործընթացի վրա, իսկ 25%-ը՝ նախարարության կողմից, մեծամասշտաբ ծրագրերի վրա: Չկան հստակ սահմանված ընտրական չափանիշներ, որոնք հետևողականորեն կկիրառվեն:
- ՆՀՀ Մակեդոնիա. Ֆինանսական միջոցները տարածքների միջև բաշխվում են զարգացման համաթվի հիման վրա, որ կազմված է սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական ենթահամաթվերից (5 տարի վավերականության ժամկետով): Ծրագրերի ընտրության չափանիշները հետևողականորեն չեն կիրառվում:

Ֆինանսական միջոցների հատկացման անթերի ալգորիթմներ սահմանելը հեշտ գործ չէ: Համաչափության սկզբունքը պահանջում է տարբեր զարգացման մակարդակ ունեցող տարածքներին տարբերակված օժանդակության տրամադրում: Արդյունավետ լուծումները հիմնված են բնակչության թվի վրա՝ կարգավորվելով զարգացման համաթվերով: Տարածքների դասակարգումը պետք է կատարվի հարաբերականորեն պարզ ու թափանցիկ ճանապարհով, և աջակցությունը պետք է լինի երկարաժամկետ, քանի որ տարածքային զարգացման անհամաչափությունները տևական բնույթ են կրում: Մեկ այլ հնարավոր տարբերակ է զարգացման տարբեր մակարդակներով տարածքների համար համաֆինանսավորման տարբեր շեմերի սահմանումը՝ ի տարբերություն միջոցների նպատակային պահուստների: Այնուամենայնիվ, սա կարող է դիտարկվել քաղաքականության հետագա փուլերում, երբ բոլոր տարածքները կունենան ֆինանսական աջակցության արդյունավետ օգտագործման հնարավորություններ:

Ըստ զարգացման մակարդակի տեղական համայնքների դասակարգման և ֆինանսավորման բաշխման նպատակով՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը ներկայումս օգտագործում է ՏԶ տվյալների բազան, որ կազմված է հարյուրավոր ցուցանիշներից և համայնքների բնակչության թվի, եկամուտների ստացման հնարավորության և խոցելիության վրա հիմնված ալգորիթմից՝ ամփոփված նաև տարածքային մակարդակով: Սա բացառիկ չափեր ունեցող տեղեկատվական բազա է (հենանիշային երկրներից ոչ մեկը նման բարդ համակարգ չունի), սակայն սկզբնական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այդ մոտեցումը որոշ վերապահումներով կարող է կիրառվել տարածքային զարգացման ապագա միջոցառումների համար:

- Չնայած ալգորիթմի տրամաբանական լինելուն՝ այն լիարժեքորեն ստուգաչափված չէ և համայնքների ճշգրիտ դասակարգումը կատարում է հիմնվելով հարաբերականորեն մոտավոր տվյալների վրա. որոշ մուտքային տվյալներ զուտ գնահատումների արդյունքներ են, և որոշ տվյալների աղբյուրներ լիովին հավաստի չեն:
- Վերոնշյալ անկախ տվյալների բազայի պահպանման ծախսերը և դրա գործարկման համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսները բավականին մեծ են, թեև որոշ ցուցանիշներ կարող են ազգային վիճակագրական ծառայության կողմից տրամադրվել (խորհուրդ է տրվում համախմբում), և ալգորիթմի համար կարող են միայն ընտրված ցուցանիշներ օգտագործվել՝ տեղական և տարածքային զարգացման մակարդակով չափումներ կատարելու համար:
- Տվյալների բազայում Երևանն ընդգրկված չէ, ինչը նշանակում է, որ ՏԶ քաղաքականության մեջ ներառված չէ բնակչության և տնտեսության մեծ մասնաբաժինը: Թեև, դա մասամբ

բացատրվում է նրանով, որ Երևանը ներկայում ՏԶ կիզակենտրոնում չի գտնվում, այնուամենայնիվ, դա դեմ է բոլոր տարածքների և շրջանների զարգացման ամբողջ ներուժի օգտագործման սկզբունքին, որն առանցքային նշանակություն ունի ՏԶ ժամանակակից քաղաքականության համար:

Զարգացման քաղաքականության համար անհրաժեշտ է տեղական մակարդակով տեղեկատվության հավաքագրումը, և ՏԿԶՆ-ն բավականին արդյունավետորեն իրականացնում է այդ գործառույթը: Մեկ այլ իրատեսական տարբերակ է տվյալների պահպանման գործում Ազգային վիճակագրական ծառայության ներգրավումը: Ֆինանսավորման բաշխման և քաղաքականության այլ նպատակների համար շատ բարդ մոդելների օգտագործումն անարդյունավետ է: ՏԶՖ մանրամասն պլանի մշակման ընթացքում կքննարկվեն հնարավոր այլընտրանքային մոտեցումները. տարածքային ՀՆԱ-ի գնահատումը միջնաժամկետ հեռանկարում պետք է դառնա ՏԶ քաղաքականության ուղղորդման և ՏԶ միջոցների հատկացման կարևորագույն ցուցանիշներից մեկը:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Բոլոր երկրներում, բացառությամբ ՆՀՀ Մակեդոնիայի, մոնիտորինգի և գնահատման (ՄԳ) համակարգերը զարգացած չեն կամ ընդհանրապես գոյություն չունեն: Միայն հատուկենտ ու մասնակի տեղեկատվություն է հավաքվում, և այն հիմնականում առնչվում է ծրագրերի իրականացման ֆինանսական հարցերին: Որոշ միջոցառումներ են ձեռնարկվում տարբեր աստիճանի ֆունկցիոնալությամբ և տարբեր մասշտաբի տվյալներով ՏԶ/ՏԶՀ կառավարման տեղեկատվական համակարգերի ստեղծման ուղղությամբ (Ալբանիա, Խորվաթիա, ՆՀՀ Մակեդոնիա): ՏԶ ռազմավարությունների և ծրագրերի գնահատումն առավել քիչ է զարգացած, և նախաձեռնությունները հիմնականում իրականացվում են ԵՄ-ի աջակցությամբ: Ուսումնասիրված երկրներում վերհանված ՏԶՀ խնդիրները հիմնականում գալիս են նրանից, որ հիմնավոր փաստեր չկան ՏԶ քաղաքականության և իրականացված միջոցառումների ազդեցությունների գնահատման վերաբերյալ:

Իրավիճակը լիովին տարբեր է ԵՄ անդամ-պետություններում (օր.՝ Լիտվա, Լեհաստան): Այդ երկրները համախմբել են իրենց ՏԶ միջոցառումները և ԵՄ համաչափության միջոցները, և հետևում են ԵՄ-ի ՄԳ կանոնակարգերին և ուղեցույցներին:

ՎԵՐՋԵՐՍ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Համեմատության առարկա երկրների ՏԶ ֆինանսավորման բարեփոխումներն արտացոլում են տարածքային զարգացման ֆինանսավորման մեխանիզմի հիմնական թերությունները և արդյունավետ ու արդյունավոր լուծումներ են առաջարկում:

- Ալբանիա. ՏԶՖ-ն գերշահագործվել է ընտրական գործընթացներում հաջողության ապահովման նպատակով, և միայն հիմա են տարածքային կառավարման մարմիններին այդ ժամկետանց վճարումները կատարվում՝ Համաշխարհային բանկից փոխառության միջոցով: Տնտեսական աճն ապահովելու համար տարածքային ծրագրերն ընդլայնվում են, և ավելի մեծ ուշադրություն է դարձվում քաղաքների զարգացմանը: Դիտարկվել են նաև ազգային և տարածքային մակարդակներով ՏԶ կառույցների ստեղծման հնարավորությունները:
- Խորվաթիա. աշխատանքների մասնատվածությունը և փոքր ծրագրերը մեծ խոչընդոտ են հանդիսանում տարածքային զարգացման նպատակով տրամադրված ԵՄ միջոցների արդյունավետ օգտագործման համար, և քննարկվում են համապատասխան տարածքային բարեփոխումները և տարածքային կառավարման մարմինների միավորման հարցը (այսպես կոչված տարածքային պլանավորում):
- Վրաստան. դիտարկվում են բարելավման մի քանի ուղղություններ՝ ծրագրերի ընտրական չափանիշների մշակում, պետական ծրագրի մշակում՝ տարբեր ճյուղային նախարարությունների միջոցառումները համակցելու նպատակով, ՏԶ-ի համար մոնիտորինգի և գնահատման համակարգի ստեղծում, ինչպես նաև տարածքային զարգացման գերատեսչությունների (ՏԶԳ) ստեղծում:

- ՆՀՀ Մակեդոնիա. դիտարկվում են հետևյալ ուղղություններով բարելավման հնարավորությունները՝ ՏԶ-ի և ոլորտային քաղաքականությունների համակարգման արդյունավետության բարձրացում, տարածքային շահագրգիռ խմբերին ուղղված աջակցության ընդլայնում, տարածքային ռազմավարությունների իրականացման գործընթացի և ՏԶ կենտրոնների փոփոխված գործառույթների պետական վերահսկողություն, ինչպես նաև խոշոր ծրագրերին տրվող առաջնահերթություն:

ԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ, ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ, ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվի առնելով, որ ԵՄ-ն ունի տարածքային զարգացման քաղաքականության իրականացման ամենալայն փորձը, նպատակահարմար է ուսումնասիրել, թե ինչպես են ԵՄ համաչափությանն ուղղված միջոցների օգտագործման հիմնական սկզբունքները մշակվում և կիրառվում հենանիշային երկրներում:

Աղյուսակ 15. Կենտրոնացման, ծրագրավորման, գործընկերության և կառուցողականության սկզբունքների կիրառությունը համեմատական վերլուծության ենթարկված երկրներում

Սկզբունք	Ալբանիա	Խորվաթիա	Վրաստան	ՆՀՀ Մակեդոնիա
Կենտրոնացում	Աշխարհագրական կենտրոնացում՝ հայտարարված է, սակայն խստորեն սահմանված չէ: Թեմատիկ կենտրոնացում՝ ներդրված է:	Աշխարհագրական կենտրոնացում՝ առնվազն մասնակի (տնտեսապես անապահով տարածքներ): Թեմատիկ կենտրոնացում ԵՄ 2020թ. թիրախների վրա	Սահմանափակ աշխարհագրական կենտրոնացում (բացառությամբ Թբիլիսիի), որոշ կենտրոնացում խոշոր ենթակառուցվածք-ների վերականգնման ծրագրերի վրա: Թեմատիկ կենտրոնացումը մշակման փուլում է:	Կենտրոնացումը հիմնված է տարածքների զարգացման ցուցանիշների վրա: Թեմատիկ կենտրոնացումը ներդրված է ըստ գերակայություն-ների և թեմաների:
Ծրագրավորում	Երկարաժամկետ ծրագրավորում չկա	Ծրագրերը հիմնված են ՏԶ մասին օրենքի և ԵՄ ֆինանսական միջոցների օգտագործմանն առնչվող կանոնակարգերի վրա:	Ընթացքի մեջ են: Առաջին եռամյա ծրագիրը պետք է ընդունվի 2014թ.-ին:	Հնգամյա ծրագրեր
Գործընկերություն	ՏԶ պետական հանձնաժողով՝ տարածքային կառավարման մարմինների ներգրավմամբ: Տարածքային մակարդակով համագործակցու-թյան առկայություն	Տարածքային զարգացման մասնակցային ռազմավարութ-յուններ	Տարածքներում կան տարածքային զարգացման խորհուրդներ (տարածքային կառավարման մարմիններ, մասնավոր հատված, ՔՀԿ-ներ), որ խորհրդատվական գործառույթներ են իրականացնում:	Տարածքային զարգացման մասնակցային ռազմավարութ-յուններ
Կառուցողականություն	Ծրագրերում պետք է արտացոլված լինեն տեղական և տարածքային ռազմավարութ-յունները: Հաճախ համաֆինանսավորման անհրաժեշտութ-յուն չի լինում:	Ծրագրերում արտացոլված են տեղական և տարածքային կարիքները: Սովորաբար լինում է համաֆինանսավորման անհրաժեշտութ-յուն (մինչև 25%):	Ծրագրերում պետք է արտացոլված լինեն տեղական և տարածքային ռազմավարությունները: Եթե համաֆինանսա-վորում է պահանջվում, ապա չափերը հստակ չեն կամ քիչ են:	Ծրագրերում պետք է արտացոլված լինեն տեղական և տարածքային ռազմավարություն-ները: Ընտրական չափանիշներով խրախուսվում է համաֆինանսավորումը:

Աղբյուրը՝ սեփական մշակում

Համաչափության քաղաքականության հիմնական սկզբունքները հենանիշային երկրներում բավականին թույլ են և ընթացիկ կամ ապագա բարեփոխումների կիզակետում պետք է լինեն: Երևում է, որ ընթացիկ ՏԶՖ մեխանիզմների գլխավոր թերությունը ոչ պատշաճ ծրագրավորումն է: Պատշաճ մշակված միջոցառումները (ծրագրերը) սովորաբար պետք է ընդգրկեն ՏԶ քաղաքականության մյուս հիմնական սկզբունքները:

ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Տարածքային զարգացման ֆինանսավորման մեխանիզմները պետք է բավարարեն քաղաքականության որակի հիմնական չափանիշները: Համեմատական վերլուծության ենթարկված երկրներից շատերը պետք է լրացուցիչ ջանքեր գործադրեն այս պահանջը բավարարելու համար:

Աղյուսակ 16. Արդյունավորության*, արդյունավետության*, կայունության և ազդեցության սկզբունքների կիրառությունը հենանիշային երկրներում

Սկզբունք	Ալբանիա	Խորվաթիա	Վրաստան	ՆՀՀ Մակեդոնիա
Արդյունավորություն	Սակավաթիվ արդյունքներ են ձեռք բերվել: Ծրագրերի ընտրության չափանիշները ներկայում վերանայվում են՝ ռազմավարական նպատակներին ավելի համահունչ դարձնելու նպատակով:	Դրական արդյունքներ՝ կապված տարածքային ծրագրերի իրականացման կարողության հետ: ԵՄ ֆինանսական միջոցների առավել արդյունավետ օգտագործման հնարավորություն:	Չի գնահատվել, սակայն նոր ենթակառուցվածք-ների հետ կապված բազմաթիվ տարածքային ծրագրեր են իրականացվել՝ ստեղծելով շինարարական աշխատատեղեր:	Սակավաթիվ արդյունքներ, քանի որ ներդրումները համահունչ չեն ռազմավարական նպատակներին, և ֆինանսական միջոցները սուղ են:
Արդյունավետություն	Չի գնահատվել: Կենտրոնական և տարածքային մակարդակով կառույցներ են ստեղծվել: Որոշ ՏԶ գերատեսչություններ դժվարությունե-րով են գործում:	Չի գնահատվել: Կենտրոնական և տարածքային մակարդակով կառույցներ են ստեղծվել: ՏԶ գերատեսչություններ նորմալ գործում են:	Չի գնահատվել: Կենտրոնական և տարածքային մակարդակով կառույցներ են ստեղծվել: Չկան ՏԶ գերատեսչություններ:	Չի գնահատվել: Կենտրոնական և տարածքային մակարդակով կառույցներ են ստեղծվել: ՏԶ գերատեսչություններ դժվարություն-ներով են գործում:
Կայունություն	ՏԶ-ն ընդգրկված է ազգային զարգացման ռազմավարության մեջ: ՏԶՖ-ն հիմնված է տարեկան բյուջեների վրա:	ՏԶ-ն ընդգրկված է ազգային ռազմավարության մեջ և օրենքում: ԵՄ ֆինանսական միջոցներից կախվածությունը մեծ է:	ԵՄ աջակցությամբ արդյունավետ կերպով ընդգրկվում է պետական, ռազմավարական ծրագրերում (ընթացքում է):	ՏԶ-ն ընդգրկված է ազգային ռազմավարության մեջ և օրենքում: Նախատեսվում են լրացուցիչ բարեփոխումներ:
Ազդեցություն	Տեղեկատվություն չկա:	Ազդեցությունների վերաբերյալ սահմանափակ տեղեկատվություն, հիմնականում ԵՄ աջակցությամբ իրականացված ծրագրերից:	Գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ ազդեցություններ կան աշխատատեղերի վրա, սակայն շինարարական, որ կապված է միայն ենթակառուցվածքների	Տեղեկատվություն չկա:

			զարգացման հետ:	

Աղբյուրը՝ հեղինակի վերլուծություն

* Արդյունավետությունը (effectiveness) ակնկալվող արդյունքին հասնելու համար ցանկացած ռեսուրսի (ժամանակ, գումար, աշխատուժ և այլն) օգտագործումն է:

* Արդյունավորությունը (efficiency) ի տարբերություն արդյունավետության՝ առավել օպտիմալ տարբերակով (քիչ ռեսուրսների օգտագործմամբ) նախատեսված արդյունքին հասնելն է:

Համեմատական վերլուծության ենթարկված բոլոր երկրներում ՏԶՖ մեխանիզմների լուրջ թերություններ կան, որոնք հարցականի տակ են դնում ՏԶ քաղաքականությունը՝ արդյունավետության, արդյունավորության, կայունության և ազդեցության տեսանկյունից: Բարելավման ուղղությամբ որոշ քայլեր են ներկայում ձեռնարկվում, հիմնականում ԵՄ քաղաքականության և ֆինանսական աջակցության շրջանակում:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՎ ԱՌԿԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Տարածքային զարգացման քաղաքականության ֆինանսավորումը, բյուջեի տեսանկյունից, կարող է գնահատվել որպես նվազագույն՝ հաշվի առնելով ընթացիկ հատուկ ծրագրերի շրջանակում տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվող տարածքային զարգացման ֆինանսավորման ծավալները:

Ըստ 2015-2017թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի՝ ՏԶՖ-ին առնչվող նվազագույն ֆինանսական միջոցները գնահատվում են տարեկան 50-70 միլիարդ ՀՀ դրամ (100-120 միլիոն եվրո):

Առաջիկայում ՏԶՖ-ի ծավալները կարող են ճշգրիտ գնահատվել միայն տարածքային զարգացման համապատասխան միջոցառումների տեսակներն ընտրելուց հետո:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հենանիշային երկրներում տարածքային զարգացման ֆինանսավորման մեխանիզմները տարբեր են, սակայն, ընդհանուր առմամբ, դրանց հիման վրա օգտակար առաջարկություններ և մոտեցումներ կարող են տրամադրվել քաղաքականության այս դաշտի վերաբերյալ: Կարևորագույն խնդիրներն են.

- Ինստիտուցիոնալ պարտականությունների հստակ սահմանում և կարգավորում, որ հնարավորություն կտա տարանջատելու քաղաքականությունների մշակման գործընթացը իրականացման գործընթացներից.
- Խիստ կարևոր է ճյուղային նախարարությունների միջև ուժեղ, հորիզոնական համագործակցությունը, քանի որ ՏԶ քաղաքականությունը բոլոր կողմերին է վերաբերում: Ազգային և ենթազգային նպատակներին հավատարիմ մնալու համար անհրաժեշտ է նաև արդյունավետ ուղղահայաց համագործակցություն.
- ՏԶ քաղաքականությունը և ՏԶՖ-ն պետք է համապատասխանաբար ինտեգրվեն պետական քաղաքականության ոլորտին՝ ազգային ռազմավարության, իրավական և ֆինանսական համակարգերի միջոցով.
- Իրական ազդեցությունները երաշխավորելու նպատակով անհրաժեշտ է ծրագրավորում, գործընկերություն, կառուցողականություն և կենտրոնացում՝ աշխարհագրական և թեմատիկ.
- Հետևողականորեն և թափանցիկ ճանապարհով պետք է կիրառվեն ՏԶՖ հատկացման և բաշխման հստակ սահմանված չափանիշները, ինչպես նաև ծրագրերի ընտրության չափանիշները.
- Իրավիճակը գնահատելու, հիմնավորելու, ինչպես նաև արդյունավետությունը, արդյունավորությունը, կայունությունը և ազդեցությունները գնահատելու համար պետք է լինեն մոնիտորինգի և գնահատման արդյունավետորեն գործող համակարգեր.
- Բոլոր դերակատարների և բոլոր մակարդակներում կարողությունների զարգացում՝ պետական բոլոր կառույցներում

Ի լրումն հենանիշային երկրների ընդհանուր քաղած դասերին՝ ՏԶՖ իրականացման համար կան որոշ կոնկրետ օգտակար լուծումներ.

- Ներքին և արտաքին ֆինանսավորումը համաձուլել մեկ ծրագրային մոտեցման շրջանակում՝ ստեղծելով ներդաշնակ համագործակցության հնարավորություններ (հատկապես ԵՄ ֆինանսական միջոցների մասով), ինչպես իրականացվել կամ նախապատրաստվել է բոլոր հենանիշային երկրների կողմից.
- Ինստիտուցիոնալացնել բոլոր գործընկերների միջև համագործակցությունը (ազգային և տեղական մակարդակներով).
- Բոլոր տարածքների համար մշակել միջոցառումներ՝ ըստ վերջիններիս առանձնահատուկ կարիքների և զարգացման մակարդակների և բոլոր դերակատարներին հնարավորություն տալ հետևելու միևնույն զարգացման փիլիսոփայությանը (ծրագրավորում և ծրագրերի ճանապարհային քարտեզներով իրականացում).
- Երաշխավորել ռազմավարական պլանավորումը՝ տարածքային և տեղական մակարդակներով, արդյունավետորեն ներդաշնակեցնելով ազգային մակարդակի հետ.
- Խուսափել ջանքերի ու միջոցների մասնատումից ու բաշխումից՝ ըստ տնտեսությունների վրա սահմանափակ ազդեցություն ունեցող փոքրամասշտաբ ծրագրերի (այդ ծրագրերը պետք է արդյունավետորեն ու ամբողջությամբ կառավարվեն և իրականացվեն տեղական մակարդակներով):

Հաշվի առնելով տարածքային զարգացման համար ֆինանսական միջոցների երաշխավորման տարբեր հնարավորությունները և Հայաստանի ներկա իրավիճակը՝ ստորև բերված են ՏԶՀ (գործիքի) առավել հարմար տարբերակները.

- Հայաստանում տարածքային զարգացումը պետք է հիմնականում ֆինանսավորվի պետական բյուջեից: ՏԶ հատուկ միջոցները (ՏԿԶՆ-ի ենթակայության տակ գտնվող), համապատասխան ճյուղային նախարարությունների ներդրումային մասնաբաժինները և զարգացման այլ միջոցները պետք է հատկացվեն մեկ ընդհանուր ռազմավարության շրջանակներում:
- Տարածքային զարգացման ֆինանսավորման այլ կարևոր աղբյուրները, օր.՝ դոնոր կազմակերպություններից ստացվող գումարները, միջազգային փոխառությունները, ինչպես նաև սփյուռքի ֆինանսական աջակցությունը, պետք է աստիճանաբար ինտեգրվեն մեկ ընդհանուր ռազմավարությանը նպաստելու առումով:
- ՏԶ ֆինանսավորումը պետք է բխի սույն Տարածքային զարգացման ազգային ռազմավարությունից և հարակից գործառնական ծրագրերից՝ միաժամանակ թույլ տալով տեղական ու տարածքային շահագրգիռ կազմակերպություններին իրականացնել ծրագրեր, որոնք լավագույնը կհամապատասխանեն նրանց առաջնահերթություններին ու զարգացման համատեքստին:
  Այս առումով, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը պետք է շարունակի հանդես գալ որպես քաղաքականություն կերտող և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին (նախկինում՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ) լիովին ներգրավի որպես իրականացնող մարմին:
- ՏԶ ֆինանսավորման կոնկրետ ծավալները կորոշվեն սույն ռազմավարության ընդունումից հետո այն հաշվով, որ թույլ տան հասնել Ռազմավարությամբ սահմանված նպատակներին: Այդ ծավալները պետք է որոշվեն պարբերական ուսումնասիրությունների ու խորհրդակցությունների միջոցով, այդ թվում՝ առանձին ճյուղային նախարարությունների հետ:

- Տարածքների միջև ֆինանսական միջոցների բաշխումը պետք է հիմնված լինի երկու նորմատիվաիրավական սկզբունքների վրա՝ բնակչության և զարգացման մակարդակի հարաբերություն (օր.՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ) և ծրագրերի ընտրության չափանիշներ, որոնցով նախապատվությունը տրվում է տնտեսապես անապահով տարածքներին, խմբերին, ոլորտներին:
- Ծրագրերի ընտրության չափանիշները պետք է լինեն թափանցիկ ու հետևողական և հաշվի առնեն ոլորտային առանձնահատկությունները՝ ռեսուրսների բաշխման ընդունված չափանիշների առումով: Առաջարկվում է չափանիշները դասակարգել երեք խմբի՝

պաշտոնական (շահառուների՝ մրցույթին մասնակցելու իրավունքը, միջոցառումների համապատասխանությունը, պատշաճ լրացված դիմումի ձևը և այլն), տեխնիկական (ծրագրի հիմնավորում, իրատեսականություն, խելամիտ գին և այլն, և ոլորտներին հատուկ պահանջներ՝ տեխնիկական ցուցանիշներ, որակի համակարգեր, ոլորտային չափորոշիչներ, լավագույն փորձ), ռազմավարական (լրացուցիչ միավորներ են տրվում այն ծրագրերին, որոնք հատկապես համահունչ են ռազմավարական/ծրագրային նպատակների հետ):

- ՏԶՀ մոնիտորինգի և գնահատման համակարգը պետք է հնարավորինս մշակված լինի ԵՄ կառուցվածքային միջոցներին առնչվող կանոնակարգերի և ուղեցույցների հիման վրա: Բացի դրանից, համակարգը պետք է մշակվի, պարբերաբար թարմացվի և ազատ օգտագործվի ՏԶ դերակատարների կողմից: Կառավարման առցանց տեղեկատվական համակարգն ամենահարմարն է:
- Ֆինանսավորումը պետք է կենտրոնացած լինի մեծամասշտաբ տարածքային ծրագրերի վրա (առնվազն միջհամայնքային)՝ ինչպես ենթակառուցվածքներին առնչվող, այնպես էլ չառնչվող, թեև ցանկալի է, որ երկու տարրերն առկա լինեն: Փոքրամասշտաբ ծրագրերը պետք է ժամանակի ընթացքում հանձնվեն տեղական համայնքներին և ինքնուրույն կառավարվեն նրանց կողմից (կիրառելի կարող է լինել Վրաստանի գյուղերի աջակցության ծրագրի օրինակը):
- Պատշաճ ծրագրավորմամբ պետք է երաշխավորվի աշխարհագրական և թեմատիկ կենտրոնացումը:
- Արդյունավետությունն ապահովելու նպատակով ՏԶՖ-ն պետք է լիովին համահունչ լինի ազգային ռազմավարական նպատակներին, իսկ արդյունավորությունն ապահովելու նպատակով՝ այն պետք է կառավարվի բավականին մեծ և հմուտ կազմակերպության կողմից Կայունությունն ապահովելու նպատակով պետք է երաշխավորվի երկարաժամկետ ֆինանսավորումը՝ ծրագրավորման, բազմամյա բյուջետավորման և համապատասխան օրենսդրական դաշտի միջոցով: Ազդեցություններն ապահովելու համար՝ ռազմավարական նպատակները պետք է ընդգրկվեն ՏԶ ծրագրերում և կենտրոնացած լինեն փոքրաթիվ թիրախների վրա:
- Բարեփոխումների շրջանակներում պետք է իրականացվի ՏԶ քաղաքականության և ՏԶՀ կառավարման կարողությունների զարգացում:

7. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՅԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Չնայած Հայաստանում տարածքային զարգացումը սկզբնական փուլում է, սակայն ինստիտուցիոնալ հարցերում բավականին մեծ առաջընթաց կա:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆ

Տարածքային զարգացման քաղաքականության մշակումը Հայաստանում իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության (ՏԿԶՆ) կողմից, որը պատասխանատու է նաև սույն ռազմավարության իրականացման համար: Տարածքային կառավարման և զարգացման նախարարության՝ տարածքային զարգացման բնագավառին առնչվող ընդհանուր գործառույթներն ու խնդիրները սահմանված են ՀՀ կառավարության 2016թ. մարտի 3-ի թիվ 258-Ն որոշմամբ: Դրանք են.

- Տարածքային քաղաքականության մշակում և իրագործման ապահովում.
- Տարածքների համաչափ զարգացումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով և այլ միջոցներով նախատեսվող ծրագրերի քննարկում և համադրում.

- Տարածքային կառավարման մարմինների կողմից սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրագործման ապահովում.
- Տարածքային կառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացում.
- Միասնական տեղեկատվական համակարգի կազմակերպման, դրա ընդհանրական շահագործմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացման ապահովում.
- Միջազգային համագործակցության շրջանակներում նախարարության իրավասությանը վերապահված բնագավառներին առնչվող առաջարկությունների ներկայացում և միջոցառումների իրականացման ապահովում.
- Այլ երկրների վարչատարածքային միավորների հետ անդրսահմանային և միջռեգիոնալ համագործակցության կազմակերպում.
- Տարածքների զարգացմանն ուղղված ինովացիոն և ներդրումային ծրագրերի ձևավորումը.
- Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխհարաբերությունների ապահովում.
- Միգրացիոն քաղաքականության գործընթացների պետական կարգավորման ապահովում.
- Համայնքային ծառայությունների համակարգի զարգացման ապահովում.
- Տարածքներում փոքր և միջին բիզնեսի զարգացմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում.
- Զարգացման համար անհրաժեշտ նախադրյալներ չունեցող տարածքներում հատուկ, թիրախային ծրագրերի մշակում և իրականացում.
- ԵՎ այլն

Այս առումով, բոլոր գերատեսչությունների շարքում ՏԿԶՆ-ն պետք է ունենա տարածքային զարգացման քաղաքականության կառավարման առաջավոր և ընդլայնված կարողություններ և, ի վերջո, պետք է կարողանա նաև աջակցել ու խթանել ՀՀ այլ պետական ու հասարակական մարմինների գիտելիքի զարգացումը և կիրառումը:

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ

Հաշվի առնելով, որ տարածքային զարգացման քաղաքականությունը ներկայումս կենտրոնացած է տնտեսական և սոցիալական հարցերի շուրջ, սերտ հարաբերություններ են հաստատվել ՏԶ քաղաքականության մշակման և համակարգման համար պատասխանատու մարմին Տարածքային կառավարման և զարգացման նախարարության, որ պատասխանատու է ՏԶ քաղաքականության և դրա համակարգման համար, և արտաքին աջակցության համակարգման համար պատասխանատուների միջև:

Ակնկալվում է, որ համապատասխան նախարարությունները ներգրավված կլինեն ՏԶ քաղաքականության մշակման գործընթացներում, ինչպես նաև որոշ նախաձեռնություններում, որոնք կմշակվեն Տարածքային զարգացման ֆինանսավորման մեխանիզմի շրջանակում:

ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Նախատեսվում է ստեղծել ՀՀ վարչապետի գխավորությամբ ՏԶ ազգային հանձնաժողով՝ որպես բարձրաստիճան համագործակցության մարմին, ինչպիսին օրինակ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է (կամ ավելի մեծ թվով անդամներով): Այլապես, ՏԶ ազգային հանձնաժողովի գործառույթները կարող են վերապահվել գործող Կայուն զարգացման ազգային խորհրդին (պետք է որոշվի քաղաքականության հաստատման վերջին փուլերում):

ՏԶ ազգային հանձնաժողովի (քաղաքականության հարցերով համակարգող հանձնաժողովի) հիմնական գործառույթներն են.

- Խորհրդակցական հարթակ ապահովել ՏԶ-ին առնչվող ազգային և տարածքային պլանների և ռազմավարությունների համար.
- Ռազմավարական տեսանկյունից համակարգել ՏԶ քաղաքականության իրականացման գործընթացը կառավարության բոլոր մակարդակներում և լուծումներ առաջարկել հիմնական

դերակատարների միջև ծագող խնդիրներին՝ նախարարություններ, կենտրոնական կառավարության գերատեսչություններ, դոնորներ, տեղական ինքնակառավարման մարմիններ.

- Վերանայել և գնահատել Հայաստանի տարածքային զարգացման քաղաքականությունը՝ Կառավարությանը կարծիք ներկայացնելով հիմնավորվածության, արդյունավետության, արդյունավորության, կայունության և ազդեցությունների վերաբերյալ:

ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Կառավարության 2014թվականի դեկտեմբերի 25-ի N1521-Ն որոշմանբ՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամը (ՀՍՆՀ) վերանվանվեց տարածքային զարգացման քաղաքականության ինստիտուցիոնալ բաղադրիչի՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ): Այս որոշումն ուներ կրկնակի կարևորություն: ՀՏԶՀ-ն իր հաստատուն տեղն ունի տարածքային զարգացման ասպարեզում՝ տեղական ենթակառուցվածքներին ուղղված ներդրումների տեսանկյունից.

- ՀՏԶՀ-ն ունի կարևոր տեխնիկական և ֆինանսական իրականացման կարողություններ՝ երկարաժամկետ աջակցություն ստանալով Համաշխարհային բանկի հետ համագործակցության շրջանակում:

1996թ.-ին հիմնադրվելուց հետո ՀՏԶՀ-ն Հայաստանում իրականացրել է Համաշխարհային բանկի ծրագրերի 4 տրանշերը: 2015թ.-ին նոր ծրագիր է սկսվել 42 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր ֆինանսավորմամբ (30 միլիոն ԱՄՆ դոլար Համաշխարհային բանկից): Այն ընդգրկվել է Հայաստանի զարգացման ռազմավարությունում և իրականացվելու է մինչև 2018թ-ի վերջը:

Ավելի քան 900 համայնքային ծրագրեր են մինչ օրս իրականացվել ՀՏԶՀ-ի աջակցությամբ: Այդ ծրագրերը հիմնականում կապված են դպրոցների, համայնքային կենտրոնների, մշակութային տների, թանգարանների, ոռոգման և խմելու ջրամատակարարման համակարգերի բարելավման, տեղական ճանապարհաշինարարության և այլ վերականգնողական աշխատանքների հետ: ՀՏԶՀ-ն աջակցություն չի տրամադրում բիզնես ենթակառուցվածքներին առնչվող ծրագրերին: Բացի համայնքային ծրագրերից՝ նոր տրանշը նպատակաուղղվելու է նաև միջհամայնքային ծրագրերին և կառուցվածքային փոփոխություններին:

ՀՏԶՀ-ի շրջանակում ֆինանսական աջակցության տրամադրման նպատակով՝ Հայաստանի համայնքները դասակարգվել են երեք խմբի՝

- խոցելի՝ մինչև 40% (ծախսված ռեսուրսների 20-40%-ը),
- առավել խոցելի՝ մինչև 60% (ծախսված ռեսուրսների 40-60%-ը),
- պակաս խոցելի՝ մինչև 20%:

ՀՏԶՀ գումարները հատկացվել են որոշակի չափանիշների հիման վրա՝ հաշվի առնելով մարզային և տարածքային կարիքները, սակայն ոչ մրցակցային գործընթացով: Զարգացման գործընթացներում համայնքների ակտիվ մասնակցությունն ապահովելու համար՝ համայնքները գործում են որպես կապալառուներ և ՀՏԶՀ-ի հետ միասին պատասխանատու են գնումների համար: Համայնքներն են որոշում, թե որ ծրագրերն են աջակցություն ստանալու և ով պետք է իրականացնի: 100 միլիոն ՀՀ դրամը գերազանցող ծրագրերը պետք է հաստատվեն ՀԲ-ի կողմից (առավելագույնը՝ 130 միլիոն ՀՀ դրամ): Նոր տրանշում այս գումարը հավանաբար կմեծացվի (150 միլիոն ՀՀ դրամ): Ծրագրի միջին չափը 150.000 – 170.000 ԱՄՆ դոլար է: Ներդրումները հիմնականում կատարվում են ենթակառուցվածքների ոլորտում՝ մոտ 50%-ը դպրոցներում և մանկապարտեզներում: Նոր տրանշի 70-80%-ը նախատեսված է ուսումնական կենտրոնների համար: Գործառնական ձեռնարկները և գնման ընթացակարգերը հիմնված են ՀԲ փաստաթղթերի վրա: Հաշվի առնելով, որ ՀՏԶՀ-ն միջհամայնքային ծրագրերի փորձ չունի՝ 2016թ-ին պատրաստվելու են նոր ուղեցույցներ: Տարածքային և տեղական զարգացմանն առնչվող որոշ կարևոր դասեր արդեն քաղվել են.

- Նախկինում ֆինանսավորվել են որոշ տեղական ենթակառուցվածքներ (օր.՝ մշակութային կենտրոններ), որ հետո հազվադեպ են օգտագործվել: Հետևաբար, կողմերը համակարծիք են, որ համապարփակ ուսումնական ծրագրերը (դպրոցներ, մանկապարտեզներ) ավելի շահավետ կլինեն:

- Եղել են դեպքեր, երբ խոշոր համայնքային ներդրումները չեն օգտագործվել և շարունակականությունը չի ապահովվել. որոշ ներդրումներ պետք է ավելի գրավիչ ձևով կամ միայն ընտրված վայրերում արվեն՝ չնայած այն կարծատիպին, որ «ամեն գյուղ պետք է դպրոց ունենա» դեռևս պահպանվում է:

ՀՏԶՀ-ն զուտ ենթակառուցվածքային ներդրումների հիմնադրամ է և չի իրականացնում հատուկ ծրագրեր, որոնց շրջանակում նախատեսված է վերապատրաստում գործազրկության, գյուղատնտեսների, գործարարության խթանման և այլ թեմաներով: Գործազրկությանն առնչվող խնդիրները միայն անուղղակիորեն են արտացոլված ենթակառուցվածքների վերականգնման ծրագրերում: Ընդհանուր առմամբ, սոցիալ-տնտեսական և ոչ ենթակառուցվածքային զարգացման հնարավորություններ չկան:

ՀՏԶՀ-ում կա շուրջ 50 աշխատակից: Նրանցից շատերը մասնագետներ՝ ինժեներներ, ովքեր պատասխանատու են ծրագրերի մոնիտորինգի և գնահատման համար: Նրանք ամսական մի քանի օր են միայն անցկացնում դաշտում (դաշտային աշխատանքներ): ՀԲ-ի ծախսերի և օգուտների վերլուծության համաձայն՝ ՀՏԶՀ-ի ծրագրերը Հայաստանի ամենամատչելի ծրագրերից են՝ կառավարման ծախսերի, ծախս-օգուտ հարաբերության բարձր գործակցի առումով:

ՀՏԶՀ-ի կառավարման բարձագույն և հսկողություն իրականացնող մարմինը Հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ՝ խորհուրդ): Խորհուրդն ուղղորդում և վերահսկում է ՀՏԶՀ-ի կառավարման գործընթացը և գործառնությունները՝ համապատասխան որոշման և գործառնական ձեռնարկի համաձայն: Խորհուրդը կազմված է հետևյալ անդամներից՝

- ՀՀ վարչապետ՝ (խորհրդի նախագահ).
- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար.
- ՀՀ էկոնոմիկայի նախարար.
- ՀՀ ֆինանսների նախարար.
- ՀՀ քաղաքաշինության նախարար.
- ՀՀ կրթության և գիտության նախարար.
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար.
- «Վարդանանց ասպետներ» ՀԿ-ի ներկայացուցիչ (համաձայնությամբ).
- «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն (համաձայնությամբ).
- «Ազնավուրը՝ Հայաստանին» բարեգործական կազմակերպության երևանյան գրասենյակի տնօրեն (համաձայնությամբ).
- Հայ բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության տնօրեն (համաձայնությամբ):

ՀՏԶՀ-ի ղեկավար կառուցվածքը համապատասխանում է տարածքային զարգացման ազգային հանձնաժողովի դերին (որպես «համակարգող հանձնաժողով» քաղաքականության բոլոր ռազմավարական խնդիրների վերահսկողություն):

ԱՅԼ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐ

ՏԶ քաղաքականության հաջողության գործում վճռական դեր ունեն նաև ճյուղային նախարարությունները, որոնք զարգացման ծավալուն ծրագրեր են իրականացնում մարզերում և հանրապետության բազմաթիվ բնակավայրերում: Նրանց պատշաճ ներգրավման, սերտ համագործակցության և ՏԶ ռազմավարական նպատակների հետ համապատասխանության ապահովման համար մանրամասն ծրագրային վերլուծություն և խորհրդակցություններ են անհրաժեշտ: Դրանք անցկացվել են ՏԿԶՆ-ի կողմից՝ ԵՄ-ի տեխնիկական աջակցությամբ, տարածքային զարգացման ազգային ռազմավարության մշակման և 2014թ-ի երկրորդ կեսին ՏԶՖ մեխանիզմի մանրակրկիտ մշակման գործընթացների շրջանակում, և կշարունակվեն անհրաժեշտության դեպքում:

Մի շարք նվիրատու կազմակերպություններ (ԵՄ, ԱՄՆ ՄԶԳ, ԳՄՀԸ, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն) և միջազգային ֆինանսական հաստատություններ (Համաշխարհային բանկ, Ասիական զարգացման բանկ) արդեն սերտորեն աշխատում են ՏԿԶՆ-ի հետ, ուստի համագործակցությունն այստեղ համեմատաբար հեշտ է:

Տարածքային և տեղական դերակատարները պետք է ներգրավվեն համագործակցության և մասնակցության հիման վրա, սակայն նրանց գլխավոր դերը կլինի ծրագրերի մշակումը, իրականացումը

և արդյունքների շարունակականության ապահովումը, այսինքն՝ ծրագրերի խթանողների դերը: Ուշադրություն պետք է դարձվի ծրագրերի ճանապարհային քարտեզների մշակման և միջոցների արդյունավետ օգտագործման հնարավորությունների վրա: Ի լրումն, պետք է խթանվի և համակարգվի նաև տարածքային և տեղական ռազմավարական պլանավորումը: Այդ նպատակով՝ ԵՄ-ն խորհրդատվական աջակցություն կտրամադրի մինչև 2017թ. և հնարավոր է նաև ավելի երկար ժամանակով:

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Նախատեսված ինստիտուցիոնալ գործառույթներն ու դերերը, որ հիմնականում կսահմանվեն ընթացիկ բարեփոխումներով, համապատասխանում են տարածքային զարգացման քաղաքականության պահանջներին, հատկապես հորիզոնական և ուղղահայաց համագործակցության առումով:

Ընթացիկ բարեփոխումների կարևորագույն դրական կողմերից մեկը ֆինանսական գործիքների և հաստատությունների համաժամանակյա զարգացումն է՝ ՏԶՀ մեխանիզմ (գործիք) և ՀՏԶՀ (հաստատություն), որ լրացուցիչ կուղեկցվի ՏԿԶՆ-ի, ՀՏԶՀ-ի և ենթազգային դերակատարների կարողությունների ինտենսիվ զարգացմամբ:

Աղյուսակ 17. Տարածքային զարգացման թիրախային ինստիտուցիոնալ միջոցառումները



Աղբյուրը՝ հեղինակի վերլուծություն

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանում տարածքային զարգացման քաղաքականության մշակումն իրականացվում է Տարածքային կառավարման և զարգացման նախարարության (ՏԿԶՆ) կողմից: ՏԿԶՆ-ն պատասխանատու է տարածքային զարգացման քաղաքականության բոլոր հատվածների համար: Այն Հայաստանում ՏԶ քաղաքականություն մշակող մարմինն է:

- Քաղաքականության շրջանակի մշակում (ռազմավարություններ, պլաններ և ծրագրեր, դրանց մոնիտորինգի իրականացում, ենթազգային նախաձեռնությունների վերահսկողություն).
- Քաղաքականության արդյունքներ՝ տարածքային մրցունակության բարձրացման և համաչափության ապահովման հետ կապված նյութաիրավական փոփոխությունների առումով.

- Քաղաքականության կառավարում՝ տարածքային կառավարման գործընթացում ներգրավված գերատեսչությունների գործունեության արդյունավորությունը, արդյունավետությունը, վերահսկողությունը և համագործակցությունը, ներառյալ կարողությունների զարգացումը և աշխատանքների բարելավումը:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը պատասխանատու է տարածքային զարգացման քաղաքականության կառավարման համար:

Կառավարության վերջերս (2014թ. մարտ) ընդունած որոշման համաձայն՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամը (ՀՍՆՀ) վերակազմավորվեց տարածքային զարգացման քաղաքականության ինստիտուցիոնալ բաղադրիչի՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ): Այս որոշումն ուներ կրկնակի կարևորություն.

- ՀՏԶՀ-ն իր հաստատուն տեղն ունի ենթազգային զարգացման ասպարեզում՝ տեղական ենթակառուցվածքներին ուղղված ներդրումների տեսանկյունից.
- ՀՏԶՀ-ն ունի կարևոր տեխնիկական և ֆինանսական իրականացման կարողություններ՝ երկարաժամկետ աջակցություն ստանալով Համաշխարհային բանկի հետ համագործակցության շրջանակում:

ՀՏԶՀ-ի վերահսկողական կառուցվածքային կազմը համապատասխան է տարածքային զարգացման ազգային հանձնաժողովի դերի իրականացման համար (ռազմավարական խնդիրների վերահսկողություն):

ՏԶ քաղաքականության հետ կապված հետագա առաջընթացը մեծապես կախված է ինստիտուցիոնալ միջոցառումներից և կարողություններից: Առաջարկվում են հետևյալ ուղղությունները.

- Տարածքային զարգացման ազգային հանձնաժողովի (համակարգող հանձնաժողովի) ստեղծում ՀՏԶՀ-ի Հոգաբարձուների խորհրդի կամ Կայուն զարգացման ազգային խորհրդի հիման վրա՝ դիտարկելով ավելի մեծ թվով ենթազգային և հասարակական (ոչ պետական) դերակատարներին որպես անդամներ ընդգրկելու հնարավորությունը.
- Սերտ համագործակցություն ճյուղային նախարարությունների միջև՝ ՏԶՀ մեխանիզմի մշակման փուլում և սկզբնական գործառնական ծրագրերի մշակման գործընթացում: Ճյուղային նախարարությունների հետ, որոնք իրենց գործառույթների նշանակալի մասն իրականացնում են տարածքային մակարդակով, ոչ միայն պետք է խորհրդակցել, այլ նաև նրանք պետք է դառնան ՏԶ պլանավորման և իրականացման գործընկերներ.
- Հիմնական նվիրատու կազմակերպությունների (ԵՄ, ԱՄՆ ՄԶԳ, ԳՄՀԸ, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն) միջև համագործակցության խթանում՝ ստեղծելով ՏԶ աշխատանքային խումբ, որը պարբերաբար հանդիպումներ կունենա՝ բարեփոխումների առաջընթացի քննարկման և տեղեկատվության փոխանակման նպատակով.
- Ծրագրերի ճանապարհային քարտեզների մշակման և պետական ու հասարակական հովանավորներից ստացվող ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման կարողությունների զարգացմանն աջակցում:

8. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Հայաստանում տարածքային զարգացման քաղաքականությունը դեռ սկզբնական փուլում է, սակայն այն արագորեն կզարգանա արդեն սկսված և առաջիկայում նախատեսվող միջոցառումների շնորհիվ: Ստորև բերված գործողությունների պլանում ներկայացված են հիմնական առաջադրանքները և

հիմնաքարերը, որոնք պետք է համակարգվեն Կառավարության կողմից և իրականացվեն համապատասխան դերակատարների միջոցով: Նշված գործողությունները պետք է փոխկապակցված լինեն Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարության մեջ արտացոլված քաղաքականության ռազմավարական նպատակներին:

Աղյուսակ 18. Տարածքային զարգացման բարեփոխումների գործողությունների պլան

No	Առաջադրանքներ և հիմնաքարեր	Պատասխանատու մարմին(ներ)	Իրականացման ժամանակացույցը	Ֆինանսավորման աղբյուրները	Հաշվարկված արժեքը
ՏԶ ծրագրային և ինստիտուցիոնալ բարեփոխումներ՝					
1	Յուրաքանչյուր մարզի համար տարածքային զարգացման ռազմավարության մշակում, խորհրդակցությունների անցկացում, ռազմավարության ընդունում	ՀՀ մարզպետարաններ ՝ ՏԿԶՆ-ի և ԵՄ-ի (խորհրդատվական) աջակցությամբ	2016թ. 4-րդ եռամսյակ	ԵՄ միջոցներ (ընթացիկ խորհրդատվական աջակցություն)	30,000 եվրո
2	Մեթոդաբանության վերանայում և բոլոր մարզերի տարածքային զարգացման պլանների (բազմամյա սոցիալ-տնտեսական պլաններ) թարմացում	ՏԿԶՆ, ՀՀ մարզպետարաններ (ԵՄ խորհրդատվական աջակցությամբ)	2016թ. 4-րդ եռամսյակ	ԵՄ միջոցներ (ընթացիկ խորհրդատվական աջակցություն)	30,000 եվրո
3	ՏԶԾ պիլոտային դրամաշնորհային ծրագրի իրականացում	ԵՄ (խորհրդատվական աջակցություն)՝ ՏԿԶՆ-ի հետ համագործակցությամբ	2016թ. սեպտեմբեր – 2018թ. սեպտեմբեր	ԵՄ՝ 7,000,000 Հայաստանի պետական բյուջե՝ 1,750,000	8,750,000 եվրո (միայն դրամաշնորհ-ները) 500,000 եվրո (խորհրդատվակ ան աջակցություն)
4	ՀՏԶՀ-ի ծրագրային և ինստիտուցիոնալ բարեփոխումները, ներառյալ միջհամայնքային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի ներդրումը	ՀՏԶՀ՝ ՏԿԶՆ-ի հետ համագործակցությամբ	2016թ. 3-րդ եռամսյակ	ՄՖՀ-ներ և դոնորներ՝ ԵՄ, Շվեյցարիայի զարգացման և համագործակցութ-յան գործակալություն, ԱՄՆ ՄԶԳ	10,000,000 եվրո (2016-2019թթ.)
5	2017-2020թթ. ՏԶ գործառնական առաջին ծրագրի մշակում (ընդգրկելով ՏԶԾ պիլոտային դրամաշնորհային ծրագրից քաղված դասերը)	ՏԿԶՆ, ՀՏԶՀ (հետագայում հնարավոր ԵՄ աջակցությամբ)	2016թ. հոկտեմբեր – 2017թ. հունիս	ԵՄ միջոցներ (ընթացիկ խորհրդատվական աջակցություն)	50,000 եվրո
6	2017-2020թթ. ՏԶ գործառնական առաջին ծրագրի իրականացում	ՏԿԶՆ, ՀՏԶՀ (հետագայում հնարավոր ԵՄ աջակցությամբ)	Սկսած 2017թ.–ից	ԵՄ-ի և այլ նվիրատուների միջոցները	Պետք է որոշվի
7	ՏԿԶՆ-ի, ոլորտային նախարարությունների, ՀՏԶՀ-ի և	ԵՄ-ի (խորհրդատվական աջակցություն) և այլ դոնորների	Ընթացիկ	ԵՄ միջոցներ (ընթացիկ	400,000 եվրո

No	Առաջադրանքներ և հիմնաքարեր	Պատասխանատու մարմին(ներ)	Իրականացման ժամանակացույցը	Ֆինանսավորման աղբյուրները	Հաշվարկված արժեքը
	ենթազգային դերակատարների կարողությունների զարգացման ծրագրեր	կողմից աջակցություն		խորհրդատվական աջակցություն)	
ՏԶ ֆինանսավորման մեխանիզմ՝					
8	Ոլորտային բյուջեների թեմատիկ դաշտերի ուսումնասիրություն՝ հատկորոշելով ՏԶ ֆինանսավորման մեխանիզմում ընդգրկվող միջոցառումները (ՏԶ բաղադրիչներ)	Ճյուղային նախարարությունները՝ Էկոնոմիկայի նախարարություն, Կրթության և գիտության նախարարություն, Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Տրանսպորտի և կապի նախարարություն, Գյուղատնտեսության նախարարություն, Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, Քաղաքաշինության նախարարություն՝ ՏԿԶՆ-ի համակարգմամբ	2016թ. հունիս – 2016թ. դեկտեմբեր	ԵՄ միջոցներ (ընթացիկ խորհրդատվական աջակցություն)	10,000 եվրո
9	Կենտրոնական բյուջեում ՏԶ ֆինանսավորման մեխանիզմի ընդգրկում (ոլորտային բյուջեներից և դրանց մաս կազմող ՏԶ ֆինանսավորման փաթեթից ՏԶ բաղադրիչների վերհանում). պետական բյուջեում ՏԶ-ին առնչվող բյուջեի հոդվածներից հատկացում	Ֆինանսների նախարարություն՝ ՏԿԶՆ-ի հետ համագործակցությամբ	2017թ. հունվար – 2017թ. հունիս	Պետական բյուջե, ԵՄ միջոցներ (ընթացիկ խորհրդատվական աջակցություն)	Պետք է որոշվի (ՏԶ-ին հատկացված ընտրված ընթացիկ ոլորտային միջոցներ)
10	ՏԶ-ին հատկացված ոլորտային միջոցների՝ մրցութային հիմունքներով (դրամաշնորհներ) բաշխում տեղական կառավարման մարմինների (և, հնարավորության դեպքում, հասարակական կազմակերպությունների) միջև	Ճյուղային նախարարություններ՝ Էկոնոմիկայի, Կրթության և գիտության, Սպորտի և երիտասարդության հարցերի, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Տրանսպորտի և կապի, Գյուղատնտեսության ն, Էներգետիկայի և բնական պաշարների և Քաղաքաշինության	Սկսած 2018թ.-ից	Պետական բյուջե, ԵՄ միջոցներ (ընթացիկ խորհրդատվական աջակցություն)	Պետք է որոշվի (ՏԶ-ին հատկացված ընտրված ընթացիկ ոլորտային միջոցներ)

No	Առաջադրանքներ և հիմնաքարեր	Պատասխանատու մարմին(ներ)	Իրականացման ժամանակացույցը	Ֆինանսավորման աղբյուրները	Հաշվարկված արժեքը
		նախարարություններ՝ ՏԿԶՆ-ի համակարգմամբ			
11	ՏԶ ֆինանսավորման մեխանիզմում համապատասխան նոր միջազգային փոխառությունների և զարգացմանն ուղղված ֆինանսավորման ընդգրկում՝ հիմնականում ոլորտային բյուջետային աջակցության միջոցով	Ֆինանսների նախարարություն՝ ՏԿԶՆ-ի հետ համագործակցությամբ	Սկսած 2017թ.-ից	ՄՖՀ-ներից և դոնորներից ստացվող ֆինանսական միջոցներ	Պետք է որոշվի
ՏԶ ցուցանիշների և կառավարման տեղեկատվական համակարգեր՝					
12	ՏԶ ցուցանիշների համակարգերի փոխկապակցում՝ կենտրոնական, տարածքային և տեղական մակարդակներով	Տարածքային կառավարման մարմիններ (ԵՄ խորհրդատվական աջակցությամբ)	2016թ. 3-րդ եռամսյակ	ԵՄ միջոցներ (ընթացիկ խորհրդատվական աջակցություն)	10,000 եվրո
13	Տարածքային ՀՆԱ-ի գնահատման գործում Աջակցություն Ազգային վիճակագրական ծառայությանը	ԱՎԾ (ԵՄ խորհրդատվական աջակցությամբ)	2016թ. 3-րդ եռամսյակ	ԵՄ միջոցներ (ընթացիկ խորհրդատվական աջակցություն)	10,000 եվրո
14	ՏԶ քաղաքականության Կառավարման տեղեկատվական համակարգի գործառնական կառուցվածքը և առաջարկություններ	ՏԿԶՆ (ԵՄ խորհրդատվական աջակցությամբ)	2016թ. 3-րդ եռամսյակ	ԵՄ միջոցներ (ընթացիկ խորհրդատվական աջակցություն)	30,000 եվրո

Աղբյուրը՝ հեղինակի վերլուծություն